

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ՖՐ. ԵՆԳԵԼՍ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՈՒՏՈՊԻԱՑԻՑ
ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՐԳՐԵՑ







Am-406

3K13

5-11

1m

1m

1m

1(09)

Պրոլետարները թուր լեռներին, միացե՛ք

ՖՐԻԴՐԻԽ ԵՆԳԵԼՍ

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՈՒՏՈՊԻԱՅԻՑ
ԴԵՊԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

A $\frac{II}{23312}$

Դերմաներենի վեցերորդ հրատարակչությունը


Թարգմանիչ


ՅԵ. Տ. - ՄԻՆԱՍԵԱՆ



ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1933





ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԱՆԸ

Այս գիրքը ծագել է իմ «Պարոն Ե. Դյուրինգի կատարած գիտությունների հեղաշրջումը, Լայպցիգ 1878»¹ աշխատության յերեք դուռերից: Յես կազմել էմ այն իմ բարեկամ Պոլ Լաֆարգի խնդրով՝ ֆրանսերեն թարգմանելու համար և ավելացրել էմ միջանի հետագա բացատրություններ: Իմ աչքի անցկացրած ֆրանսերեն թարգմանությունը լույս տեսավ նախ՝ Revue Socialiste-ի մեջ, ապա՝ նաև ինքնուրույն կերպով հետևյալ վերնագրով. Socialisme utopique et socialisme scientifique. Paris 1880: Ֆրանսերեն թարգմանությունից կատարված լեհերեն թարգմանությունը նորերս լույս տեսավ Ժրնիվում հետևյալ վերնագրով. Socjalizm utopiiny a naukowy. Imprimerie de l'Aurore, Genève 1882:

Լաֆարգի թարգմանության ունեցած անակնկալ հաջողությունը ֆրանսերեն խոսող յերկրներում և հատկապես հենց Ֆրանսիայում պետք է բնականաբար հարց դնեք իմ առաջ, թե արդյոք ողտակար չի լինի այս յերեք դուռերի անջատ հրատարակությունը նաև գերմաներեն: Հենց այդ ժամանակ Յյուրիխը „Sozialdemokrat“-ի² խմբագրությունը հաղորդեց ինձ, վոր գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներսում ամեն կողմից նոր պրոպագանդիստական դրքույկներն պահանջ է հայտնվում, և հարց եր տալիս, թե արդյոք յես համաձայն չեմ այն յերեք դուռերին այդ նպատակին տրամադրելու: Յես, իհարկե, համաձայն եյի դրան և տրամադրեցի իմ աշխատությունը:

Մեկայն սկզբնապես այն ամենեկին անմիջական ժողովրդական պրոպագանդիստական համար չեք դրված: Ինչպես կարող եք դրա համար պիտանի լինել մի ամենից առաջ զուտ գիտական աշխատություն: Ինչպիսի փոփոխություններ եք հարկավոր կատարել նրա մեջ ըստ ձեռի և ըստ բովանդակության:

Ինչ վերաբերում է ձեռն, ապա միայն բազմաթիվ ոտար բաները կարող եյին կասկած հարուցանել: Բայց արդեն Լուսսալն իր ճանաչումով և պրոպագանդիստական գրվածքներում անխնա գործ եք ածել ոտար բաներ և, վորքան ինձ հայտնի յե, այդ մասին զանգատ չի լսվել: Այն ժամանակներից սկսած մեր բանվորները շատ ավելի և շատ ավելի կանոնավոր կերպով լրագիր են կարդացել և դրա-

նով իսկ նույնքան ավելի ծանոթացել ու յուրացրել են ոտար բառերը՝ Յես սահմանափակիցի նրանով, վոր ջնջեցի բոլոր վոչ-անհրաժեշտ ոտար բառերը։ Անխուսափելի ոտար բառերի մաս յես հրաժարվեցի նրանց այսպես կոչված բացատրական թարգմանությունները գնելուց։ Անխուսափելի ոտար բառերը, վորոնք մեծ մասամբ ընդհանուրի կողմից ընդունված գիտական-տեխնիկական արտահայտություններ են, անխուսափելի չեյին լինի հենց, յեթե նրանք թարգմանելի լինեյին։ Թարգմանությունն, այսպիսով, ազալազում և խմաստը, բացատրելու փոխարեն՝ այն շփոթեցնում և այստեղ շատ ավելի ոգնում և բանավոր բացատրությունը։

Իսկ բովանդակությունն, ընդհակառակը, վատահանում ևմ պնդել, վոր քիչ զգվարություններ կպատճառի գերմանական բանվորներին։ Առհասարակ զգվար և միայն յերրորդ մասը, բայց այն ևլ շատ ավելի քիչ զգվարություններ և ներկայացնում բանվորների համար, վորոնց ընդհանուր կենսապայմաններն և ամփոփում այն, քան թե «կըթված» բուրժուաների համար։ Այս մասում արած բազմաթիվ բացատրական լրացումների ժամանակ յես խեղադես վոչ այնքան բանվորների մասին ևմ մասածիլ, վորքան «կըթված» ընթերցողների. մոտավորապես այսպիսի մարդկանց, ինչպես պապամառնոր ֆոն Այներնը, գաղտնի խորհրդական Հայնրիխ ֆոն Ձիրելը և այլ Տրայչկեններ, վորոնք բռնված են մի անգլիմպրավելի ձգտումով — շարունակ նորից և նորից ակնհայտի կացությանի իրենց սոսկալի աղխաությունը և իրենց միայն դրանով բացատրվող՝ սոցիալիզմի հակադեյական անհասկացողությունը 3։ Յերբ Դոն-Ֆրիշտան 4 և նիզակ ճոճում հողմադայների գեմ, այդ նրա պաշտոնն և և նրա դերի մեջ և մանում. բայց նման բան թույլ տալ Սանչո-Պանսային մենք ամենեին չենք կարող։

Այդպիսի ընթերցողները կգարմանան նաև, յերբ սոցիալիզմի դարգացման ուրվագծային պատմության մեջ հանդիպեն կանտ-լապլասյան կոսմոգոնիային 5, ժամանակակից բնադիտությանն ու Դարվինին, գերմանական կլասիկ փիլիսոփայությանն ու Հեգելին։ Բայց գիտական սոցիալիզմը չմ վոր ըստ հյուլթյան մի գերմանական պրոդուկտ և և կարող եր միայն այն ազգի մեջ ծագել, վորի կլասիկ փիլիսոփայությունը կենդանի յեր պահել գիտակցական շրակիկտիկայի արադիցիան, այն և՛ Գերմանիայում 6)։

— Պատմական մատերիալիստական ըմբռնումը և նրա հատուկ գոր-

*) ՀԳերմանիայում—գրասխալ և Պետը և լինի— գերմանացիների մեջ։ Վորովհետև վորքան ևլ գիտական սոցիալիզմի ծագման համար մի կողմից անհրաժեշտ եր գերմանական գիտելիական, նույնքան անհրաժեշտ էին նաև Անգլիայի և Ֆրանսիայի դարգացած տնտեսական և քաղաքական հարաբերությունները։ Գերմանիայի տնտեսական և քաղաքական դարգացման աստիճանը, վոր քառասնական թվականների սկզբին շատ ավելի հետ եր Ֆրանսիայի քան այսօր, կարող եր լավագույն դեպքում

ծագողութիւնը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև տեղի ունեցող արդի դասակարգային կռիւի վերաբերմամբ՝ հնարավոր եր միայն դիտելիակեցել միջոցով: Յնդ յեթե զերմանական բուրժուազիայի վարժապետները սնամեջ եկեղեցիցիզմի ճահճի մեջ լսեղդել են հիշողութիւնը զերմանական մեծ փրկիստիաների և նրանց ստեղծած դիտելիակեցել մասին, այն աստիճան, վեր մենք ստեղծած ենք արդի բնագիտութիւնը վիպաութեան կանչելու, թե դիտելիական իրապես կա իրականութեան մեջ—մենք, զերմանական սոցիալիստներս, հպարտանում ենք նրանով, վեր մենք ծագում ենք վնչ միայն Սին-Սիմոնից, Ֆուրքիյից և Ուենից, այլ նաև Կանտից, Ֆիխտեից և Հեգելից:

Փրի՛նցիփս ԵՆԳԵԼՍ

Լոնդոն, 21 սեպտեմբերի 1882 թ.:

ԶՈՐՐՈՐԻ ԷՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԱՆԸ

Իմ այն յենթադրութիւնը, թե այս գրվածքի բովանդակութիւնը քիչ գծվարութիւններ կապածառի մեր զերմանական բանվորներին, իրականութեան դարձաւ: Դոնե 1883 թ. մարտից սկսած, յերբ լույս տեսաւ առաջին հրատարակութիւնը, վաճառելի և յերեք հրատարակութիւն, ընդամենը 10,000 որինակ, և այս՝ սոցիալիստների դեմ հրատարակված այժմ թողած ուրինքի իշխանութեան ժամանակ.— միաժամանակ այս մի նոր որինակ է, թե վորքան անզոր են վոստիկանական արգելքներն այնպիսի մի շարժման դեմ, ինչպիսին է արդի պրոլետարիատի շարժումը:

Առաջին հրատարակութիւնից հետո լույս են տեսել ելի զանազան թարգմանութիւններ ոտար լեզուներով. իտալերեն, Պասկվալ Մարտինյետիի թարգմանութեամբ — *Il socialismo utopico ed il socialismo scientifico*. Benevento 1883: Ռուսերեն — Развитие научного социализма. Genf 1884: Դանիերեն — Socialismens udvikling fra utopi til videnskab, „Socialisk bibliotek“-ի մեջ, I bind, Kjöbenhavn 1885: Սպաներեն — Socialismo utopico y socialismo científico. Madrid 1886 և հոլանդերեն — De ontwikkeling van het socialisme van utopie tot wetenschap. Haag 1886:

միայն սոցիալիստական ծաղբանկարներ առաջացնել (հմտ. Կոմունիստ. մանիֆեստ III, 1, Ե. «Դերմանական կամ ճշմարիտ սոցիալիզմը»): Այն ժամանակ միայն, յերբ Անգլիայում և Ֆրանսիայում ստեղծված տնտեսական և քաղաքական պայմանները զերմանական դիտելիակեցելի քննադատութեանը յենթարկվեցին, այն ժամանակ միայն կարող եր իրական արդշունք ստացվել: Այս տեսակետից, ուրեմն, դիտական սոցիալիզմը վնչ թե քաջառապես զերմանական, այլ նույնքան միջազգային պրոգնոզ է:

Ներկիւ հրատարակութեանը յենթարկվել և զանազան մանր փոփոխութեաններէ. միայն յերկու տեղ ավելի կարեւոր լրացումներ են արվել. առաջին գլխում Սեն-Սիմոնի մասին, զորին յետ Թուրքիայի և Ռուսիոյ համեմատութեամբ քիչ տեղ էյի նվիրել, և յերրորդ գլխի վերջում «տրեւաների մասին», զորոնք վերջերս արտագրութեաննոր կարեւոր ձև են դարձել:

ՓՐԻՆՐԻՍ ԵՆԳԵԼՍ

Լոնդոն, 12 մայիսի 1891 թ.:

ԱՆԳՎԻՅՈՒՆ ԷՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ներկա գրքույկն սկզբնապես մի ավելի խոշոր աշխատութեան մասն էր: Շուրջ 1875 թ. Բեռլինի համալսարանի պրիվատ-դոցենտ դր. Ե. Դյուրինգը հանկարծակի և վոչ առանց մեծ աղմուկի հայտարարեց, վոր ինքը միանում և սոցիալիզմին և գերմանական հասարակութեանը մասուցեց վոչ միայն մանրամասն մշակված սոցիալիստական թեորիա, այլ նաև լիակատար գործնական պլան՝ հասարակութեան վերակազմակերպման համար: Ինչպես և պետք էր սպասել, նա հարձակեց իր բոլոր նախորդներին վրա, բայց ամենից ավելի նա պատվեց Մարքսին, նրա վրա թափելով իր դայրույթի բոլոր հեղեղը:

Այս բոլորը տեղի ունեցավ այն բանից անմիջապես հետո, յերբ սոցիալիստական կուսակցութեան յերկու ֆրակցիաները Գերմանիայում — ալգենախյաններն ու լասսալյանները — հենց նոր միացել էին և մի կուսակցութեան կազմել և դրանով վոչ միայն վիթխարի չափով ավելացրել էին իրենց դորութեանը, այլև, վոր ել ավելի կարևոր էր, հնարավորութեան էին ձեռք բերել այդ ուժն ուղղելու ընդհանուր թշնամու դեմ: Սոցիալիստական կուսակցութեանը Գերմանիայում գրեթե ուժ էր դառնում: Բայց նրան այդպիսի ուժ դարձնելու համար առաջին հերթին անհրաժեշտ էր, վորպեսզի միայն միջից առաջ նվաճած միասնութեանը վոչ մի վտանգի չենթարկվեր: Իսկ դր. Դյուրինգը միանգամայն բացարձակ կերպով ձեռնարկեց սեփական հերձվածի կազմակերպմանը, վորը պետք է կորիզ դառնար ապագա առանձին կուսակցութեան համար: Այդպիսով, մենք ստիպված յեղանք կամալ թե ակաբա ընդունել մեզ նետած ձեռնոցը և այս պայքարը մինչև վերջը հասցնել:

Յեվ յեթե այդ բանը չափազանց դժվար էլ չէր, այնուամենայնիվ ակներևորեն մի շատ խնամք պահանջող դործ էր: Ինչպես հայտնի յե, մենք, գերմանացիներս, աչքի յենք ընկնում չափազանց ծանրալիչու հիմնավորութեամբ (Gründlichkeit), արմատական խորութեամբ կամ, յեթե դուք գերադասում եք այդ արտահայտութեանը, խոր արմատականութեամբ: Յերբ վորևե մեկը շարադրում է այն, ինչ վոր նա նոր վարդապետութեան է համարում, նա պետք է ամենից առաջ այն համայնապարփակ սխտեմի վերածի: Նա պետք է ապացուցի, վոր տրամաբանութեան հիմնական սկզբունքներն ու տիեզերքի գլխավոր որենք-

ներն ի հաժեհանից անտի գոյությալն են ունեցել միայն նրա համար, վարպետի բերեն հասցենն այդ նորադուտ ամեն ինչ պատկող թիտ-բիային: Իսկ դր. Դյուրինգն այդ տեսակետից հանդիսանում էր ամենախեղճական գերմանացի Վոլ ավել, վոլ պակաս, քան Վիլիստափայլ-թյան մի լիակատար սխառն — իմացական, բարոյագիտական, բնա-կան և պատմական փելիսոփայության. «Քաղաքաանտեսության և սո-ցիալիզմի» մի լիակատար «սխառն» և վերջապես «քաղաքաանտեսու-թյան քննադատական պատմություն» — յերեք ահագին հատորներ in octavo, ծանր թէ արտաքուստ, թէ ներքուստ, փոստարկումների յե-րեք զորական կորպուս, վոր մորիլիդացիայի յեն յենթարկված ընդ-հանրապես բոլոր նախկին փելիսոփաների ու անտեսագիտների դեմ և ժամանակորային Մարքսի դեմ — իրապես գլխաության մեջ» լիակատար «հեղաշրջումն» առաջ բերելու մի հանցարար, — այս բոլորի հետ յես պետք և դուրս յեկնէյի: Յես պետք և խոսեյի ամեն տեսակ առարկա-ների մասին, ժամանակի և տարածության հասկացողությունից սկսած մինչև բիմետալլիզմ, նյութի հալխանականությունից ու շարժումից սկսած մինչև բարոյական գաղափարների անցողական էյությունը, Դարվինի բնական ընտանքից մինչև յերիտասարդության կրթությունն ապագա հասարակության մեջ: Ինչպես ել լիներ, իմ ընդգիծախոսի սխառնառիկական համայնադարձակությունն ինձ առիթ ավելց առաջ արվածից ավելի կապակցված ձևով դարդացնելու, իրեն նրան հակա-դրություն, այն հայացքները, վոր Մարքսն ու յես ունեյինք այդ բո-լոր առարկաների վերաբերմամբ: Յեվ այս եր գլխավոր պատճառը, վոր յես ինձ վրա վերցրի այս՝ ուրիշ պայմաններում անշնորհակալ՝ խըն-դիբը:

Իմ պատասխանն սկզբում հրապարակվից մի շարք հոդվածներով, վորոնք լույս տեսան Լայպցիգի „Vorwärts“-ում («Հառաջ»), սոցիալիս-տական կուսակցության կենտրոնական որգանի մեջ, իսկ ապա նաև առանձին գրքով „Herrn Eugen Dühring's Umwälzung der Wissen- schaft“ վերնագրով («Պարոն Եվգեն Դյուրինգի կատարած գիտության հեղաշրջումը»): Յերկրորդ հրատարակությունը լույս տեսավ Յյուրի-խում 1866 թվին:

Իմ բարեկամ Պոլ Լաֆարգի խնդրով, վոր այժմ Լիլ քաղաքի ներ-կայացուցիչն և Ֆրանսական պատգամավորների պալատում, յես այդ գրքի յերեք գլուխներից մի պամֆլետ կազմեցի, վոր նա թարգմանեց և հրապարակեց 1880 թվին „Socialisme utopique et socialisme scienti- fique“ («Ուտոպիական սոցիալիզմ և գիտական սոցիալիզմ») վերնագրով: Այդ Ֆրանսերեն բնագրից կատարվեցին լեհերեն և սլոներեն թարգմա-նությունները: 1888 թ. գերմանական ընկերները պամֆլետը հրատարակե-ցին գերմաներեն լեզվով: Գերմաներեն հրատարակության հիման վրա կատարվեցին իտալերեն, ռուսերեն, ղանիերեն, հոլանդերեն և ուումինե-

քին թարգմանությունները Այդպիսով, այս անգլիերեն հրատարակության հետ միասին, այս գրքույին արդեն թարգմանված և տասը լեզվով: Վերջան ինձ հայտնի չե, լո՞ւ մի սոցիալիստական յերկ, մինչև անգամ 1848 թ. մեր «Կոմունիստական մանիֆեստը» կամ Մարքսի «Կապիտալը», չի թարգմանվել այնքան շատ ոտար լեզուներով: Գերմանիայում այն տարածվել և չորս հրատարակությամբ, ընդհանուր հաշվով լո՞ւ պակաս քան 20.000 որինակ:

„Die Mark“ հավելվածը գրվել և այն նպատակով, վերադարձ գերմանական սոցիալիստական կուսակցության շարքերում տարրական գիտելիքներ տարածվեն հողային սեփականության պատմության և դարգացման մասին Գերմանիայում: Այդ բանն անհրաժեշտ եր թվում մտածանող այն պատճառով, վոր յեկել եր ժամանակը, յերբ վերջանում եր քաղաքային բանվորներին այդ կուսակցության մեջ ներգրավելու պրոցեսը և պետք եր յերկրագործական բանվորների ու գյուղացիների կազմակերպմանը ձեռնարկել: Այդ հավելվածը կցված և նաև անգլիերեն հրատարակությանը, վորովհետև հողատիրության սկզբնական ձևերն ընդհանուր են բոլոր գերմանական ցեղերի մեջ, և նրանց քայքայման պատմությունն Անգլիայում մինչև անգամ ավելի պակաս ծանոթ և, քան Գերմանիայում: Յես լո՞ւ մի փոփոխություն չեմ մըտցրել սկզբնական տեքստի մեջ: Այդ պատճառով ել յես չշշափեցի այն հիպոթեզը, վոր նորերս առաջադրեց Մակսիմ Կովալևսկին: Այդ հիպոթեզի համաձայն՝ վարելահողերի և մարգագետինների բաժանմանը մարկի անդամների միջև նախորդել և նրանց միատեղ մշակումը մեծ նահապետական ընտանեկան համայնքներով, վորոնք ընդգրկել են մի քանի սերունդներ (գրանց որինակը մենք գտնում ենք զոյություն ունեցող հարավ-սլավոնական задруга-ների մեջ), և բաժանումը տեղի չե ունեցել հետագայում, յերբ համայնքն աճել-բազմացել և և չափազանց մեծածավալ և դարձել միասին տնտեսավարելու համար: Կովալևսկին, հայտնարեն, միանգամայն իրավացի չե, բայց հարցն այնուամենայնիվ զեռ վիճելի չե մնում:

Այս գրքում գործածված տնտեսագիտական տերմինները, վորչափով վոր նրանք նոր են, լիովին համապատասխանում են այն տերմիններին, վորոնք գործ են ածված նաև «Կապիտալի» անգլիերեն հրատարակություն մեջ: Մենք ճապրանքային արտադրություն» ենք անվանում այն տնտեսական փուլը, յերբ առարկաներն արտադրվում են վո՞ւ միայն արտադրողի կարիքների համար, այլ նաև փոխանակության նպատակով, այսինքն՝ արտադրվում են իրենց ապրանքներ, այլ վո՞ւ թե սպառողական արժեքներ: Այդ փուլը շարունակվում և փոխանակության համար կատարվող արտադրության առաջին քայլերից մինչև մեր օրերը. այն իր լիակատար զարգացման և հասնում միայն Հապետալիստական արտադրության ժամանակ, այսինքն՝ այնպիսի

պայմաններում, յերբ կապիտալիստը, արտադրութեան միջոցներէ սե-
փականատերը, աշխատավարձով բանվորներ և վարձում, այնպիսի մար-
դիկ, վորոնք զուրկ են արտադրութեան բոլոր միջոցներէց, բացառու-
թեամբ իրենց աշխատանքի ուժի, և իր գրգռման և գնում արդյունք-
ներէ վաճառքի գնի ամբողջ անբ իր կատարած ծախսերի համեմատու-
թեամբ: Մենք արդյունաբերական արտադրութեան պատմութեանը մի-
ջին դարերի ժամանակներէց սկսած բաժանել ենք յերեք շրջանի. 1) ար-
հեստ, մանր համքարային վարպետներ սակավաթիվ բանվորներով և
աշխատանքով, յերբ յուրաքանչյուր բանվոր արտադրում և ամբողջ
առարկան ամբողջութեամբ. 2) մանուֆակտուրա, վորի ժամանակ մեկ
խոշոր ձեռնարկութեան մեջ միացած բանվորներէ տվելի մեծ քանա-
կութեան ամբողջ առարկան արտադրում և աշխատանքի բաժանման
հիման վրա, այնպես վոր ամեն մի բանվոր միայն մի՝ մասնակի գոր-
ծառնութեան և կատարում, իսկ ամբողջ առարկան պատրաստ և միայն
այն ժամանակ, յերբ այն հաջորդաբար անցել և բոլոր բանվորներէ ձեռ-
քով. 3) ժամանակակից արդյունաբերութեան, վորի ժամանակ արդյունքն
արտադրվում և մեքենաներով, վորոնք շարժման մեջ են գրվում մե-
խանիկական ուժով և վորոնց աշխատելու ժամանակ բանվորի աշխա-
տանքը սահմանափակվում և վերահսկողութեամբ և մեխանիկական
շարժիչի սխաներն ուղղելով:

Յեա շատ լավ գիտեմ, վոր այս գրքույկի ըովանդակութեանն
անբավականութեան կառաջացնի բրիտանական ընթերցող հասարա-
կութեան նշանակալից մասի մեջ: Բայց յեթե մենք, մայր ցամաքի
բնակիչներս, գոնե վորեւե չափով հաշիւ տանելիք բրիտանական
«պատկառելիութեան», այսինքն՝ բրիտանական ֆիլիստերութեան նա-
խապաշարումները, այն ժամանակ գործն ավելի վատթար վիճակի մեջ
կլինիր, քան այժմ եւ Առաջարկվող գիրքը պաշտպանում և այն, ինչ
վոր մենք «պատմական մատերիալիզմ» ենք անվանում, իսկ մատերիա-
լիզմ բառը իբրև սուր դիսսոնանս և հնչում բրիտանական ընթեր-
ցողների պմենահսկայական մեծամասնութեան տկանջներէ համար
«Ագնոստիցիզմ» — ելի հնարավոր և, բայց մատերիալիզմ — այդ ան-
թույլատրելի բան եւ:

Յեվ, այնուամենայնիվ, ամեն տեսակ արդիական մատերիալիզմի
սկզբնական հայրենիքը, սկսած XVII դարից, հատկապես հենց Անգ-
լիան եւ:

«Մատերիալիզմը Մեծ Բրիտանիայի բնածին գավազն եւ Արդեն-
նրա սիւղաստիկ Դունս Սկոտուսը հարցում եր իրեն՝ չի՞ կարող ար-
դյոք նյութը մտածել:

«Այդ հրաշքն իրագործելու համար՝ նա՞ դիմեց աստծու ամենա-
կարողութեանը, այսինքն՝ հենց աստվածաբանութեանը հարկադրեց
մատերիալիզմ քարոզել: Դրան պետք և ավելացնել և այն, վոր նա

նոմինալիստ եր: Նոմինալիզմը գլխավոր տարրն է հանդիսանում անգլիական մատերիալիստների մոտ, և ընդհանրապես ել մատերիալիզմի առաջին արտահայտությունն է ներկայացնում այն:

Անգլիական մատերիալիզմի իրական հիմնադիրը Բեկոնն է: Նրա համար բնագիտությունն իսկական գիտությունն էր, իսկ փորձնական ֆիզիկան — բնագիտության ամենակարևոր ճյուղը: Անաքսագորասն իր հոմոյոմերիաներով և Գեմոկլիտոս իր առոմնեերով հաճախ նրա համար հեղինակություն են հանդիսանում: Նրա ուսմունքի համաձայն՝ զգայությունները խարեյական չեն և ամեն անգամ գիտությունն աղբյուրն են: Գիտությունը փորձնական գիտությունն է և նրա ելությունն այն է, վերաբերող զգացական ավյալներին վերաբերմամբ ռացիոնալ մեթոդներ գործադրելու միջոցով, վերլուծում, համեմատություն, գիտազուգություն, փորձ — սրանք ռացիոնալ մեթոդի գլխավոր պայմաններն են: Նյութին հատուկ հատկությունների մեջ առաջինն ու ամենակարևորը շարժումն է, իսկ միայն մեխանիկական և մաթեմատիկական շարժման իմաստով, այլ առավել ևս իրեն կենսական վոլուձդումն, — մի խոսքով, գործածելով Հակոբ Բենմեյի արտահայտությունը, նյութի «յերկունքը»: Վերջինս սկզբնական ձևերը — կենդանի, անհատականացուցիչ, նրան հատուկ և սպեցիֆիկ տարբերություններ առաջացնող հիմնական ռեֆերն են*):

«Իր առաջին ստեղծիչ Բեկոնի մոտ մատերիալիզմը բովանդակում է դեռևս նախիվ ձևով ամենակողմանի դարգացման սաղմերը: Նյութը, շրջապատված բանաստեղծական զգացական լուստապետիզով, սերելիք կերպով ժպտում է մարդուն: Իսկ ուսմունքը ինքը, շարադրված անփոփոխելի ձևով, ընդհակառակն, դեռ վխտում է աստվածաբանությունից փոխ առած հակասություններով:

«Իր հետագա դարգացման մեջ մատերիալիզմը միակողմանի յնդառնում: Հորբսը բեկոնյան մատերիալիզմի սխտեմատիկն է: Զգացականությունը կորցնում է իր բույրը և վեր է ածվում յերկրաչափի վերացական զգացականություն: Ֆիզիկական շարժումը զոհ է բերվում մեխանիկական կամ մաթեմատիկական շարժմանը. յերկրաչափությունը հայտարարվում է գլխավոր գիտությունը: Մատերիալիզմը թշնամի յնդառնում մարդուն: Մարդուն թշնամացած անմարմին վո-

*) [Մարքսի այս խոսքերն անգլիերեն բնագրում բաց են թողնված: Նրանց փոխարեն մեզելը տալիս է հետևյալ բացատրությունը, զորն, ընդհակառակը, բացակայում է գերմաներեն բնագրում. «Qual» — փիլիսոփայական բառարար է: Qual բառացի նշանակում է տանջանք, ցավ, վոր մղում է դեպի վորևե գործողություն: Մեկնույն ժամանակ միտիկ Բենմեյն գերմաներեն Qual բառի մեջ մտցնում է ինչ-վոր բան «լատիներեն qualitas (հատկություն) բառից: Նրա Qual-ը մի ակտիվ սկզբունք է, վոր առաջ է գալիս — և իր հերթին առաջացնում է այն — իրի, հարաբերություն կամ նրան յենթակա անձնավորության ինքնակամ դարգացումից, իբրև հակադրություն այն ցավի, վոր պատճառվում է գրսից]:

դիւն իւր սեփական վերորդում հաղթահարելու համար՝ մատերիալիզմն ստիպւած է լինում ինքն սպանել իւր սեփական մարմինը և ճգնաժեր դառնալ։ Նա հանգես և գալիս իրրեւ բանական ելուծյուն, բայց զրա փոխարեն նա անխնա կերպով հանում և բոլոր յեզրակացութեանները բանական մատածողութեանից։

«Յեթե մեր զգացական ընդունակութեաններն են ընձեռում մարդկանց բոլոր դիտութեանները, — դատում և Հորբաբ, յեղիկա ունենալով Բեկոնին, — ապա հայացքը, միաբը, պատկերացումը և այլն, — այդ բոլորը վոչ ալ ինչ են, բայց յեթե ուրվականներ մարմնական աշխարհի, վոր ավելի մեծ կամ ավելի պակաս չափով ազատված և իւր զգացական ձեթից։ Դիտութեանը կարող և միայն անուններ դանել այդ ուրվականների համար։ Միեւնոյն անունը կարող և արվել միքանի ուրվականների Հնարավոր և մինչև անգամ անունների գոյութեանը ուրիշ անունների համար։ Սակայն հակասութեան կլիներ, մի կողմից, զազափառների ծագումը վերադրել զգացական աշխարհին, իսկ մյուս կողմից — պնդել, թի բառն ավելի բան և նշանակում, քան պարզապես բառը, վոր բացի միշտ իրրեւ միտվոր պատկերացված ելութեանից՝ հնարավոր են ընդհանրական ելութեաններ եւ Անմարմին սուբստանցիան — ավելի շուտ միեւնոյն հակասութեանն և, ինչ վոր անմարմին մարմինը։ Մարմինը, գոյութեանը, սուբստանցիան — այդ բոլորը միեւնոյն սեպական գաղափարն է։ Զի կարելի մատածողութեանը բաժանել այն նյութից, վորը մատածում է։ Նյութը հանդիսանում և բոլոր փոփոխութեանների սուբյեկտը։ «Անվերջ» բառն անիմատա և, յեթե այն չի նշանակում մեր հոգու անվերջ իրար կցելու ունակութեանը։ Վորովհետեւ միայն նյութն և մատչելի ըմբռնմանը, միայն նա յի իմանալի, ապա ուրեմն վոչինչ հայտնի չե ասածու գոյութեան մասին։ Հաստատուն և միայն իմ սեփական գոյութեանը։ Յուրաքանչյուր մարդկային կիրք մեխանիկական շարժում է, վոր իւր վերջը և իւր սկիզբն ունի։ Բարեքն և ծառայում իրրեւ ձգտումների որչեկա։ Մարդը յենթարկվում և միեւնոյն որենքների, ինչ վոր բնութեանը։ Իշխանութեանն ու ազատութեանը նույն բանն են։

«Հորբաբ սիստեմի վերածեց Բեկոնի ուսմունքը, բայց ավելի ճշգրիտ կերպով Հիմնավորեց նրա հիմնական սկզբունքը — գիտութեան և իդեալի ծագումը զգայական աշխարհից։

«Լոքը հիմնավորում և Բեկոնի և Հորբաբի սկզբունքը իւր «Մարդկային բանականութեան փորձի» մեջ։

«Անշակա, ինչպես վոր Հորբաբ վոչնչացնում էր Բեկոնյան մատերիալիզմի նախապաշարումները, այդպես եւ Կոլլինգը, Դոդուելլը, Կոուարդը, Հարալին, Պրիտալին և այլն ջախջախեցին լոքյան սենսուալիզմի վերջին աստվածաբանական ցանկապատերը։ Դիվիզմը — ավելի բան

չի, բայց յեթե մի հաջող և հնչող յեղանակ կրոնից ազատելու համար,—գոնե մատերիալիստի համարը*):

Այդպես և դեկ կարլ Մարքսը ժամանակակից մատերիալիզմի բրիտանական ծագման մասին: Յեղ յեթե ներկայումս անգլիացիներն առանձին բովանդակություն չեն զգում իրենց նախնիքների ծառայությունների այդ ճանաչման համար, ապա մենք կարող ենք միայն ցավել այդ մասին: Յեղ այնուամենայնիվ կասկածի յենթակա չե, վեր բեկոնը, Հորբսը և Լոքը ֆրանսական մատերիալիստների փայլուն դպրոցի հայերն են յեղել. այն մատերիալիստների, վորոնք, չնայած գերմանացիների և անգլիացիների տարած բոլոր հաղթություններին ֆրանսացիների դեմ ցամաքի վրա և ծովում, XVIII դարն առաջնայական ֆրանսական դար են դարձնում. և այդ — շատ ավելի առաջ դարի վերջը պսակող այն ֆրանսական հեղափոխությունից, վորի պտուղները մենք, — ինչպես Անգլիայում, այնպես նաև Գերմանիայում, — ղեկու ձգտում ենք պատվաստել մեզ մոտ:

Վոչ մի հնարավորություն չկա ժխտելու այդ: Յերը կրթված աստիքակրացին մեր (XIX) դարի մոտ կեսերին բնակություն եր հաստատում Անգլիայում, ապա նրան ամենից ավելի զարմացնում եր մի բան, և այդ բանն եր,—նա այդպես պետք և բացատրեր իրեն այդ,—անգլիական «պատկանելի» միջին դասակարգի կրոնական ինքն ճարեպաշտությունն ու ըթմամությունը: Մենք այն ժամանակ բոլորս մատերիալիստ եյինք կամ, առնվազն, խիստ արմատական ազատամիտներ. մեզ համար անհասկանալի յեր այն իրողությունը, վոր գրեթե բոլոր կրթված մարդիկ Անգլիայում հավատում եյին զանազան անհավատալի հրաշքների և վոր մինչև անգամ յերկրաբանները, ինչպես Բեկկինգն ու Մանտելլը, իրենց գիտություն վերաբերյալ փաստերը կեղծ բացատրություններով հեղաշրջում եյին, վորպեսզի նրանք շատ ել խիստ կերպով չտարածայնվեյին մովսէսյան առասպելների հետ աշխարհի ստեղծագործության մասին: Կրոնական հարցերում իրենց սեփական բանականության վրա հենվող մարդիկ զանելու համար պետք եր դնալ անկերթ մասսայի մոտ, «անլվա ամբոխի» մոտ, ինչպես այն ժամանակ ասում եյին,—բանվորների մոտ, առանձնապես Ռոքերսոն Ուեկնի հետևողների՝ սոցիալիստների մոտ:

Բայց այն ժամանակներից այս կողմը Անգլիան ճգադաճակորթվել է: 1851 թ. ցուցահանդեսը իրե թաղման զանգ հնչեց անգլիական կղզիական փակվածության համար: Անգլիան հետզհետե միջազայնացած ուտելիւմիւլ, սովորությունների, պատկերացումների մեջ. նա այդ բանի մեջ այնքան առաջադիմեց, վոր յես ավելի ու ավելի ուժգին կիրպով ցանկանում եմ, վորպեսզի միջանի անգլիական սո-

*) К. Маркс и Фр. Энгельс, Святое семейство, Франкфурт-на Майне, 1845, № 201—204.

վորութիւններ մայր ցամաքում նույնպիսի ընդհանուր դործադրութիւն գտնեն, ինչպես վոր մայր ցամաքի միջանի սովորութիւններ գործադրութիւն են գտել Անգլիայում: Սակայն անկասկած է, վոր յուզի գործածութեան ծաղումները սալաթի համար (վոր մինչև 1851 թ. հայտնի չէր միայն արիստոկրատներին) ուղեկցում էր կոնսիսենսալ սկիզբայելիքի մի ճակատադրական տարածում կրօնական հարցերում: Բանը հասել էր արդէն մինչև այնտեղ, վոր ազնոստիցիզմը, թէև դեռ այնքան ազնիվածնուեղ չէ համարվում, վորքան անգլիական պետական յեկեղեցին, բայց այնուամենայնիւ պտտկատելիութեան տեսակետից համարյա միևնույն աստիճանի վրա յի կանգնած բազալիստների ազանդի հետ և համեմատյն դեպս աղիւլի բարձրագոյն աստիճանի վրա յի գտնվում, քան թէ «Փրիւթիյան բանակը»: Յեղ յես չեմ կարող վանել ինձնից այն միտքը, վոր շատերի համար, վորոնք սովորջ սրտով ցաղում և նշովում են անհաղատութեան այդ տաղտոյթութիւնը, միեթարական բան կլինի խմանալ, վոր այդ նորթութիւն իղեաները— ոտաբերիկայ ծաղում չունեն, իրենց վրա չեն կրում «Պատրաստված է Գերմանիայում», Made in Germany, դրոշմը, ինչպես առորյա գործածութեան բաղմաթիւ այլ առարկաներ, վոր նրանք, ընդհակառակը, հին-անգլիական ծաղումն ունեն և վոր նրանց բրիտանական հիմնադիրները յերկու հարյուր տարի առաջ շատ աղիւլի հետու էին գնում, քան նրանց այժմյան հեանորդները:

Իսկապէս, թնչ բան է ազնոստիցիզմը, յիթն վոչ ամաչկոտութեամբ քողարկված մատերիալիզմ*): Ազնոստիկի կարծիքը ընութեան մասին միանգամայն մատերիալիստական է: Ամբողջ աշխարհը, ամբողջ ընութիւնը կառավարվում է որենքներով և բացարձակապէս բացառում է ամեն մի ներգործութիւնը դրսից: Բայց, — զգուշութեամբ շարունակում է ազնոստիկը, — մինք հնարավորութիւն չունենք ապացուցելու մեզ հայտնի աշխարհից դուրս գտնվող վորեւէ բարձրագոյն եյութեան գոյութիւնը կամ անգոյութիւնը: Այդ վերապահումն արժեք ունէր այն ժամանակները, յորը Լապլասը Նապոլիոնի հարցին, թէ ինչու այդ մեծ աստղաբաշխի «Mécanique céleste»-ի («Մեխանիկա») մեջ վոչ մի անգամ չի հիշատակված տիեզերքի արարչի անունը, հալարտ պատասխան տվեց. «Je n'avais pas besoin de cette hypothèse» («Յես այդ հիպոթեզի կարիքը չունիլի»): Իսկ ներկայումս մեր պատկերացումը տիեզերքի մասին նրա զարգացման մեջ ամենակէն տեղ չի թողնում վոչ արարչի, վոչ ամենակալի համար: Իսկ յիթն ընդունենք վորեւէ բարձրագոյն եյութեան գոյութիւն, վոր ամբողջ գոյութիւն ունեցող տիեզերքից դուրս է գտնվում, ապա այդ ինքնուրուին անհաղատութիւն կլինի և բացի դրանից, ինձ թվում է, ա-

*) [Անգլիկերէն ընագրում մեղքուն աղիւլացնում է, վոր նա գործ է ածում «լանկաղիւրյան արտահայտիչ տերմինը»—shamefaced]:

նարդար վիրավորանք կլինե՞ր վորոշ մարդկանց կրոնական դժացմունքի համար:

Մեր ազնոստիկը համաձայնում է նաև, վոր մեր ամբողջ գիտությունը հիմնված է այն տվյալների վրա, վոր մենք ստանում ենք մեր զգայարանների միջոցով: Բայց, — ավելացնում է նա, — մենք վերահսկից դիտենք, արդյոք մեր զգայությունները տալիս են մեզ նրանց միջոցով բմբռնվող իրերի ճիշտ արտացոլումները: Յեվ նա շարունակում է սովորեցնել մեզ, յերբ նա խոսում է իրերի կամ նրանց հատկությունների մասին, ապա նա իրականության մեջ մտածում է զնչ թե հենց այդ իրերի և նրանց հատկությունների մասին, վորոնց վերաբերմամբ նա զնչ մի հավաստի բան իմանալ չի կարող, այլ միայն նկատի ունի այն տպավորությունները, վոր նրանք թողել են մեր զգայարանների վրա: Այո, իհարկե, դատողության այնպիսի յեղանակ է, վոր գծվար է հերքել սոսկ միայն փաստարկումներով: Բայց նախ քան փաստարկելը՝ մարդիկ գործում ելին: «Սկզբում գործն էր»: Յեվ մարդիկ գործնականում արդեն այդ գծվարությունը լուծել ելին շատ ավելի տույժ, քան թե մարդկային հնարամտությունը գտել էր այն: The proof of the pudding is in the eating (պուդինգի հատկությունն իմացվում է ուտելու ժամանակ): Այն բոլորին, յերբ մենք այդ իրերը սեփական գործածության համար ենք ծառայեցնում նայելով այն հատկություններին, վոր մենք բմբռնում ենք նրանց մեջ, — հենց այդ մոմենտին մենք անսխալ վորձի յենք յենթարկում մեր զգայական բմբռնումների ճշտությունը կամ անճշտությունը: Յեթե այդ բմբռնումներն անճիշտ են յեղել, ապա մեր դատողությունն էլ այդ իրի պիտանիության մասին պիտք է անճիշտ լինի, և այդ իրն օգտագործելու վարձը պիտք է անհաշող դուրս գա: Իսկ յեթե մենք հասնում ենք մեր նպատակին, յեթե մենք գտնում ենք, վոր իրը համապատասխանում է մեր ունեցած պատկերացմանը նրա մասին, վորնոտ ոլիտանի յե այն բանի համար, վորի համար մենք այն գործադրեցինք, ապա այդ դրական ապացույց է, վոր այդ սահմաններում իրի և նրա հատկությունների մեր բմբռնումները համապատասխանում են մեզնից դուրս գոյություն ունեցող իրականությանը: Իսկ յեթե, բնդհակառակը, մենք համոզվում ենք, վոր մենք սխալ ենք գործել, ապա մեծ մասամբ շատ ժամանակ չի պահանջվում, վորպեսզի պարզենք սխալի պատճառը: Մենք գտնում ենք, վոր մեր վորձի հիմքում դրված բմբռնումը կամ ինքն է հանդիսանում զուլ-լիակատար և մակերեսային, կամ կապված է ուրիշ բմբռնումների արդյունքների հետ այնպիսի յեզանակով, վոր իրերի գոյություն ունեցող դրությամբ չի արգարանում: Մինչև այն ժամանակ, քանի մենք ճիշտ կերպով զարգացնում ենք մեր զգայությունները, ճիշտ կերպով ենք օգտագործում նրանք և գործում ենք այն սահմաններում, վորոնք հաստատված են ճիշտ կեր-

վորութիւններ մայր ցամաքում նույնպիսի ընդհանուր դործադրութիւն գտնեն, ինչպես վոր մայր ցամաքի միջանի սովորութիւններ դործադրութիւն են գտել Անգլիայում: Սակայն անկասկած եւ, վոր յուզի դործածութեան ծավալմանը սոյապի համար (վոր մինչև 1851 թ. հայտնի չէր միայն արիստոկրատներին) ուղեկցում եր կոնտինենտալ սկիզբայեցիմի մի ճակատադրական տարածում կրոնական հարցերում: Բանը հասել եր արդէն մինչև այնտեղ, վոր ազնոստիցիմը, թեև դեռ այնքան ազնւածնունդ չի համարվում, վորքան անգլիական պետական յեկեղեցին, բայց այնուամենայնիւ պատկանելութեան տեսակետից համարյա միևնույն աստիճանի վրա յի կոնգնած բազաիստների աս-դանդի հետ եւ համենայն դեպս ամիլի բարձրագույն աստիճանի վրա յի գտնվում, քան թե Վերիութեան բանակը: Յեղ յես չեմ կարող վս-նել ինձնից այն միտքը, վոր շտանրի համար, վորոնք ամբողջ սրտով ցալում եւ նշովում են անհավատութեան այդ ասաջադիմութեանը, միևնույն արտաքին լոմնալ, վոր այդ նորութեալ իդեաները— ոտարերկրյա ծագում չունեն, իրենց վրա չեն կրում Վատարաստված ե Գերմանիայում», Made in Germany, դրոշմը, ինչպես ոտորյա դործածութեան բազմաթիւ այլ ոտարիաներ, վոր նրանք, ընդհակառակը, հիւ-անգլիական ծագումն ունեն եւ վոր նրանց բրիտանական հիմնադրները յերկու հարցուր ասորի ասաջ շատ ամիլի հեռու եյին գնում, քան նրանց այժմյան հետնորդները:

Իսկապես, թնչ բան եւ ազնոստիցիմը, յեթե վոչ ամաչկոտութեամբ քողարկված մատերիալիզմ*): Ազնոստիկի կարծիքը բնութեան մասին միանգամայն մատերիալատական եւ Ամբողջ աշխարհը, ամբողջ բնութիւնը կառավարվում ե որենքներով ե բացարձակապես բացառում ե ամեն մի ներգործութիւն դրսից: Բայց, — զգուշութեամբ շարունակում ե ազնոստիկը, — մենք հնարավորութիւն չունենք ապացուցելու մեզ հայտնի աշխարհից դուրս գտնվող վորեւ բարձրագույն եյութեան գոյութիւնը կամ անգոյութիւնը: Այդ վերապահումն ար-ժեք ուներ այն ժամանակները, յերը Լապլասը Նապոլեոնի հարցին, թե ինչու այդ մեծ աստղաբաշխի «Mecanique celeste»-ի (Վերիկմայիմ միխամիկան) մեջ վոչ մի անդամ չի հիշատակված տիեզերքի արար-չի անունը, հալարտ պատասխան տվեց. «Je n'avais pas besoin de cette hypothèse» (Վես այդ հիպոթեզի կարիքը չունի): Իսկ ներկա-յումս մեր պատկերացումը տիեզերքի մասին նրա զարգացման մեջ՝ ամե-նեին տեղ չի թողնում վոչ արարչի, վոչ ամենակալի համար: Իսկ յեթե ընդունենք վորեւ բարձրագույն եյութեան գոյութիւն, վոր ամբողջ գոյութիւն ունեցող տիեզերքից դուրս ե գտնվում, ապա այդ ինքնա-տինքյան հակասութիւն կլիներ ե բացի դրանից, ինձ թվում ե, ա-

*) (Անգլիերեն ընդգրկում ենքլան ամիլացնում ե, վոր նա գործ ե ածում շամեիսթիան արտահայտիչ տերմինը—shamefaced):

նարդար վիրավորանք կլինենք վորոշ մարդկանց կրոնական զգացմունքի համար:

Մեր ազնոստիկը համաձայնում է նաև, վոր մեր ամբողջ գիտությունը հիմնված է այն ազգայնների վրա, վոր մենք ստանում ենք մեր զգայաբանների միջոցով: Բայց, — ավելացնում է նա, — մենք վերահսկող զգայությունները արդյոք մեր զգայությունները տալիս են մեզ նրանց միջոցով ըմբռնվող իրերի ճիշտ արտացոլումները: Յեվ նա շարունակում է սովորեցնել մեզ, յերբ նա խոսում է իրերի կամ նրանց հատկությունների մասին, ապա նա իրականություն մեջ մտածում է վնջ թե հենց այդ իրերի և նրանց հատկությունների մասին, վորոնց վերաբերմամբ նա վնջ մի հավաստի բան իմանալ չի կարող, այլ միայն նկատի ունի այն ազգայնությունները, վոր նրանք թողել են մեր զգայաբանների վրա: Այս, իհարկե, դատողություն այնպիսի յեղանակ է, վոր դժվար է հերքել սոսկ միայն փաստարկումներով: Բայց նախ քան փաստարկելը՝ մարդիկ գործում են: «Միզբում գործն եր»: Յեվ մարդիկ գործնականում արգեն այդ դժվարությունը լուծել են շատ աղիլի տալով, քան թե մարդկային հնարամտությունը գտնել եր այն: The proof of the pudding is in the eating (պուդդինգի հատկություն իմացվում է ուտելու ժամանակ): Այն բոլորին, յերբ մենք այդ իրերը սկսական գործածություն համար ենք ծառայեցնում նայելով այն հատկություններին, վոր մենք ըմբռնում ենք նրանց մեջ, — հենց այդ մոմենտին մենք անխալ փորձի յենք յենթարկում մեր զգայական ըմբռնումների ճշտությունը կամ անճշտությունը: Յեթե այդ ըմբռնումներն անճիշտ են յեղել, ապա մեր դատողությունն ել այդ իրի սկսածությունության մասին պետք է անճիշտ լինի, և այդ իրն ոգտագործելու փորձը պետք է անհաջող դուրս գա: Իսկ յեթե մենք համարում ենք մեր նպատակին, յեթե մենք գտնում ենք, վոր իրը համապատասխանում է մեր ունեցած պատկերացմանը նրա մասին, վորնա ուրիշներն յե այն բանի համար, վորի համար մենք այն գործադրեցինք, ապա այդ զրական ապացույց է, վոր այդ սահմաններում իրի և նրա հատկությունների մեր ըմբռնումները համապատասխանում են մեզնից դուրս գոյություն ունեցող իրականությանը: Իսկ յեթե, ընդհակառակը, մենք համոզվում ենք, վոր մենք սխալ ենք գործել, ապա մեծ մասամբ շատ ժամանակ չի պահանջվում, վորպեսզի պարզենք սխալի պատճառը: Մենք գտնում ենք, վոր մեր փորձի հիմքում դրված ըմբռնումը կամ ինքն է հանդիսանում վնջ-լիակատար և մակերեսային, կամ կապված է ուրիշ ըմբռնումների արդյունքների հետ այնպիսի յեղանակով, վոր իրերի գոյություն ունեցող դրությունը չի արդարանում: Մինչև այն ժամանակ, քանի մենք ճիշտ կերպով զարգացնում ենք մեր զգայությունները, ճիշտ կերպով ենք ոգտագործում նրանք և գործում ենք այն սահմաններում, վորոնք հաստատված են ճիշտ կեր-


պով ստացված և ողորդութեամբ բժշկութեան միջոցով, — մինչև այդ ժամանակ մենք միշտ կհամոզվենք, վոր մեր վարժուհիների հետեւ-վանքներն ապացույց են հանդիսանում մեր բժշկութեան համառոտ-ման բժշկութեամբ իրերի նյութական բնութեան հետ Ձեռք վոյ մի փոստ, վորքան մեզ մինչև այսօր հայտնի չե, յորք մենք ստիպված լինեցինք այն յեղբայրացութեանը հանդիսու, թե մեր գիտականքնն վերահսկելի զգայական բժշկութեանը մեր ուղեղում այնպիսի պատկերացումներ են ստեղծում արտաքին աշխարհի մասին, վորքնք իրենց հատկութեան-ներով շեղվում են իրականութեանից, կամ վոր՝ արտաքին աշխարհի և այդ աշխարհի մեր զգայական բժշկութեան միջև բնածին անհո-մապատասխանութեան գոյութեան ունի:

Բայց այստեղ հանգես և գալիս նեղականայն ազնոստիկը և ասում ե. այն, հնարավոր ե, վոր մենք կարողանանք ճիշտ կերպով բժշկել իրի հատկութեանը, բայց իրն ինքը վոյ մի, վոյ զգայական, վոյ մտա-ծական պրոցեսով իմանալ չենք կարող: Այդ «ինքնին իրը» գտնվում ե մեր իմացութեան այն կողմը:—Դրան չեղելը վաղուց պատասխան և ավել. յեթե դուք գիտեք իրի բոլոր հատկութեանները, ապա ուրեմն դուք գիտեք նաե իրն ինքը. այն ժամանակ մնում ե միայն այն սոս-կական իրողութեանը, վոր հիշված իրը գոյութեան ունի մեղմից դուրս. և հենց վոր ձեր զգայութեանները թերադրեցին ձեզ նաե այդ իրողու-թեանը, ապա դուք այդ իրն բժշկենցիք ամբողջութեամբ մինչև վեր-ջին մնացորդը,—բժշկենցիք կանայն հաշակավոր անիմանալի «ինքնին իրը»: Ներկայումս մենք կարող ենք դրա վրա ավելացնել, վոր կանայն դարաշրջանում նյութական իրերի մեր իմացութեանը դեռ ըսվական հատվածական եր, այնպես վոր նրանցից ամեն մեկի վերաբերմամբ դեռ կարելի չեր թույլ տալ առանձին ինքնին իրի գոյութեանը: Բայց այն ժամանակներից հետո այդ անիմանալի իրերը մեկը մյուսի հետե-վից, շնորհիվ գիտութեան հակադասական առաջադիմութեան, արդեն իմաց-վել են, վերլուծվել և, ինչ վոր ավելի մեծ բան ե, վերաբաղեցվել են: Իսկ այն, ինչ վոր մենք կարող ենք շինել, այն արդեն, իհարկե, մենք չենք կարող անիմանալի կոչել: Մեր դարի (XIX) առաջին կեսի քի-միայնի համար որդանական միացումներն այդպիսի խորհրդավոր իրեր եյին: Այժմ մեզ հաջողվում ե մեկը մյուսի հետեւից ստանալ դրանք քիմիական տարրերից սենթեղ կազմելու միջոցով և առանց որդանա-կան պրոցեսների ոգնութեան: Նորագույն քիմիան պնդում ե՝ յեթե վորեւ մարմնի քիմիական կազմութեանը հայտնի չե, այն կարող ե կազմվել տարրերից: Մենք դեռ, ճիշտ ե, շատ հեռու յենք բարձրա-գույն որդանական միացումների, այսպես կոչված սպիտակուցայինների, կազմութեան ճշգրիտ գիտութեանից. սակայն վոյ մի հիմք չկա կա-կածելու, վոր մենք, թեկուզ դարեր անցնելուց հետո, կհասնենք այդ գիտութեանը և նրա ոգնութեամբ արհեստական սպիտակուց ձեռք կըն-

րենք: Յեթի մենք հասնենք դրան, ապա դրա հետ միասին մենք կվերաբարձրենք որդանական կյանքը, վորովհետև կյանքն իր ամեն նաստորին ձևերից մինչև ամենաբարձր ձևերը վոչ այլ ինչ է, յեթե վոչ սպիտակուցային մարմնների գոյության նորմալ ձևը:

Բայց մեր ազնոստիկը, միանգամ իր ֆորմալ վերապահումներն անկողով խոսում է գործում է բոլորովին իբրև թունդ մատերիալիստ, վոր է նա իսկապես եւ նա, կարող է պատահել, կասի. վորքան մեզ հայտնի յե, նյութն ու շարժումը, կամ, ինչպես այժմ ասում են՝ եներգիան, չեն կարող միջ ստեղծվել, միջ վոչնչացվել, բայց մենք վոչ մի ապացույց չունենք այն մասին, վոր թե մեկը և թե մյուսն ստեղծված չեն մի վորևե մեզ անհայտ ժամանակ: Բայց յեթե դուք փորձեք վորևե կերպով վորևե ավյալ դեպքում ոգտագործել նրա դեմ այդ խոստովանությունը, ապա նա բոպեյապես ճանապարհ կդնի ձեզ և կհրամայի լուր Յեթի նա թույլ է տալիս սպիրիտուալիզմի հնարավորությունն in abstracto (աբստրակտ = վերացականորեն), ապա in concreto (կոնկրետ կերպով) նա այդ հնարավորության մասին լսել անգամ չի ուղում: Նա ձեզ կասի. վորքան մենք գիտենք և կարող ենք գիտենալ, գոյություն չունի տեղեղծիք վոչ մի արարելչ կամ ամենակալ. վորչափով վոր նշանակություն ունի մեր «յեսը», նյութն ու եներգիան ինչպես վոր չեն կարող ստեղծվել, այնպես ել չեն կարող վոչնչացվել. մեք ամբողջ իմացածը վեր է ածվում նրան, վոր նյութական աշխարհը կառավարվում է անփոփոխ որենքներով և այն և այլն: Այդպիսով, վորչափով վոր նա գիտարյամ մարդ է, վորչափով վոր նա վորևե բան գիտե, այդչափով նա մատերիալիստ է. իսկ իր գիտությունից դուրս, այն բնագավառներում, վորոնք նրա համար ոտար են, նա իր անգիտությունը թարգմանում է հունարեն և անվանում է այն ազնոստիցիզմ:

Համենայն դեպս մի բան անկասկած է. մինչև անգամ յեթե յես ազնոստիկ լինեյի, յես չեյի կարողանա այս գրքույկում շարադրված հայացքը պատմության մասին «պատմական ազնոստիցիզմ» անվանել: Կրոնական մարդիկ կծագրեյին ինձ, իսկ ազնոստիկները վերավորված կհարցնեյին. մի՞թե յես ուղում եմ ծաղր ու ծանակի յենթարկել նրանց: Յեթ յես հույս ունեմ, վոր բրիտանական «պատկառելիությունն» ել, վոր գերմաներեն ֆրիխտերություն է կոչվում, այնքան ել չափազանց չի ստրափի, յեթե յես անգլիներեն, ինչպես և շատ ուրիշ լեզուներով գործածեմ «պատմական մատերիալիզմ» արտահայտությունը: Այդ տերմինով յես նշանակում եմ այն հայացքը համաշխարհային պատմության ընթացքի մասին, վորը բոլոր կարևոր պատմական դեպքերի վերջնական պատճառն ու վճռական շարժիչ ուժը համարում և հասարակության տնտեսական դարգացումը, արտադրության և փոխանակության յեղանակների փոփոխությունները, այստեղից բղխող հասա-



բակուլթյան բաժանումը տարբեր դասակարգերի և այդ դասակարգերի կողմը միմյանց միջև

Թեևս ինձ ավելի ևս ներողամտություն ցույց տան, յեթե յես ապացուցեմ, վոր պատմական մասերիալիզմը կարող և ողորակար լինել մինչև անգամ բրիտանական ֆիլիսոփերի պատկանելիության համար։ Յես մատնանշեցի այն իրողությունը, վոր քառասուն կամ հիսուն տարի առաջ Անգլիայում բնակություն հաստատող ամեն մի կրթված ոտաբերկրացու անախորժ դարմանք էր պատճառում այն բանը, ինչ վոր նրան անգլիական պատկանելի միջին դասակարգի կրոնական կեղծ բարեպաշտություն կամ խելացնորություն պետք և թվար։ Յես այս բողբջիս ցույց կտամ, վոր այն ժամանակվա անգլիական պատկանելի միջին դասակարգն ամենևին էլ այնքան հիմար չէր, ինչպես այդ թվում էր ինտելիգենտ ոտաբերկրացուն։ Այդ դասակարգի կրոնական ձգտումներն իրենց բացատրությունն ունեն

Յերբ Յեվրոպան դուրս յեկավ միջնադարից, այն ժամանակ ծագկած քաղաքային բուրժուազիան նրա հեղափոխական տարրն էր։ Բուլորի կողմից ճանաչված այն դիրքը, վորն աշխատել էր իրեն համար միջնադարյան ֆեոդալական հասարակակարգի ներսում, արդեն չափազանց նեղ էր դարձել նրա ծավալվելու ձգտման համար։ Բուրժուազիայի ազատ զարգացումն արդեն անհամատեղելի յեր դարձել ֆեոդալական հասարակակարգի հետ, ֆեոդալական սխառմը պետք և բնկներ։

Ֆեոդալական սխառմի մեծ միջազգային կենտրոնը հռոմեականկաթոլիկ յեկեղեցին էր։ Չնայած բոլոր ներքին պատերազմներին, նա ամբողջ ֆեոդալական Արևմտյան Յեվրոպան միացնում էր իրբն մի հսկայական քաղաքական ամբողջություն, վոր հակասության մեջ էր գտնվում հավասարապես հունական-ուղղափառ և մասմեդական աշխարհի հետ։ Նա ֆեոդալական հասարակակարգը շրջապատեց առաջածային շնորհի սրբազան փայլով։ Նա իր սեփական նվիրապետությունը հաստատեց ֆեոդալական որինակի համաձայն, և վերջիվերջո նա ամենախոշոր ֆեոդալական սեփականատերն էր, վորովհետև նրան էր պատկանում ամբողջ կաթոլիկական հողատիրության մեկ յերբորդ մասից վոչ պակասը։ Նախքան յուրաքանչյուր յերկրում առանձին-առանձին պաշտարի յեկնելու աշխարհիկ ֆեոդալականության դեմ, անհրաժեշտ էր կործանել նրա այդ կենտրոնական, սրբազործված կազմակերպությունը։

Բուրժուազիայի ծագկման հետ զուգընթաց համաքայլ ընթանում էր գիտության հսկայական զարգացումը։ Վերանորոգվեց հետաքրքրությունը գեալի աստղաբաշխությունը, մեխանիկան, ֆիզիկան, քննատմիան, ֆիզիոլոգիան։ Իր արդյունաբերությունը զարգացնելու համար բուրժուազիային հարկավոր էր այնպիսի գիտություն, վորը հետազոտեր նյութական մարմինների հատկությունները և ընդթյան ուժերի

արտահայտման ձևերը իսկ մինչև այդ ժամանակ գիտությունը յեկեղեցու խոնարհ աղախինն էր, և նրան թույլ չէր տրված դուրս գալու այն սահմաններից, վոր նրա համար հաստատված էր հավատի կողմից. կարճ՝ նա ամեն բան էր, բայց վոչ գիտություն։ Այժմ գիտությունն ապստամբեց յեկեղեցու դեմ. բուրժուազիան գիտության կարիքն ուներ և մասնակցեց այդ ապստամբությանը։

Յիս այստեղ շոշափեցի ընդամենը յերկու կես, վորոնց վերաբերմամբ ծագկող բուրժուազիան պետք և ընդհարվեր գոյություն ունեցող յեկեղեցու հետ։ Բայց այս բաժական չի լինի ապացուցելու համար, նախ, վոր կաթոլիկ յեկեղեցու ամենակարողության դեմ մղվող կռվում ամենամեծ մասնակցություն ունեցավ քաղաքային բուրժուազիայի հատկապես հենց այդ դասակարգը. յերկրորդ, վոր յուրաքանչյուր պայքար ֆեոդալիզմի դեմ այն ժամանակ պետք և կրոնական զգեստավորում ընդուներ, ուղղվեր առաջին հերթին յեկեղեցու դեմ։ Բայց յի՞թե մարտակոչը հնչեց համալսարաններից և քաղաքային գործարկուներից, ապա այն անխուսափելի կերպով հզոր արձագանգ գտավ գյուղական բնակչության մասսաների մեջ, գյուղացիների մեջ, վորոնք ամենուրեք կատաղի կռիվ էյին մղում իրենց հոգևոր և մարմնավոր ֆեոդալ-կալվածատերերի դեմ, և այն ել կռիվ հենց իրենց գոյության համար։

Ֆեոդոպական բուրժուազիայի մեծ կռիվը ֆեոդալիզմի դեմ բարձրագույն լարման հասավ յերեք խոշոր վճռական ճակատամարտերի մեջ։

Առաջին ճակատամարտն այն էր, վոր մենք անվանում ենք ռեֆորմացիա Գերմանիայում։ Լուծերի ըմբոստացման կոչը յեկեղեցու դեմ՝ յերկու քաղաքական ապստամբություն առաջ բերեց. նախ—ստորին աշխուկանության ապստամբությունը Ֆրանց Ֆոն Զիկկինդերի առաջնորդությամբ 1523 թվին, և ապա—Գյուլդացիական մեծ պատերազմը 1525 թվին։ Նրանք յերկուսն ել ճնշվեցին դիվանագիտական ամենից ավելի շահագրգռված կուսակցության՝ քաղաքային բուրժուազիայի անվճռականության հետեանքով. այստեղ մենք չենք կարող կանգ առնել այդ անվճռականության պատճառների վրա։ Այդ մոմենտից կռիվն այլասերվեց և մի վեճ դարձավ առանձին իշխանների ու կենտրոնական կայսերական իշխանության միջև և այն հետեանքն ունեցավ, վոր Գերմանիան 200 տարով ջնջվեց Ֆեոդոպայի քաղաքականորեն ակտիվ ազգերի ցուցակից։ Լուծերյան ռեֆորմացիան հաստատեց այնտեղ, համենայն դեպս, նոր կրոն, հատկապես այնպիսի կրոն, վորպիսին հենց անհրաժեշտ էր բացարձակ միապետության համար։ Հաջիվ էյին գյուղացիները Գերմանիայի հյուսիս-արևելյան մասում լուծերականություն ընդունել, և ահա նրանք ազատ մարդկանցից իջան ճորտության աստիճանին։

Բայց այնտեղ, վորտեղ Լուծերն անհաջողության հանդիպեց,

այնտեղ Կալվինը հաղթութեան տարաւ: Նրա գաղափարները հարմարեցված էին այն ժամանակվա բուրժուազիայի ամենահամարձակ մասի պահանջներին: Նրա ուսմունքը նախասահմանութեան մասին կրօնական արտահայտութեանն էր այն իրողութեան, զոր առևտրի ու մրցման աշխարհում հաջողութեանը կամ սնունդութեանը կախված է զճշ թե առանձին անձերի գործունեութեանից կամ հատուկութեանից, այլ նրանցից անկախ հանգամանքներից: «Վերոջում և զճշ թե ամեն մի առանձին անհատի կամքը կամ գործողութեանները», այլ բարձրագույն, բայց անհայտ անսակական ուժերի «վերաբաշխութեանը»: Յեւ, այս բանն առանձնապէս ճիշտ էր անտեսական հեղաշրջման ժամանակ, յերբ հին առևտրական ճանապարհներն ու առևտրական կենտրոնները դուրս մղվեցին նորերի կողմից, յերբ գանդիցին Ամերիկան ու Հնդկաստանը, յերբ անսակական հովատո հանգանակի վաղուցվանից հարգված անգամները, — վոսիու և արծաթի արժեքները, — տատանվեցին և գահավիժ վայր ընկան: Բացի դրանից, Կալվինի յեկեղեցական կառուցվածքը միանգամայն զեմակրատական էր և հանրապետական. իսկ վորտեղ զոր արդեն աստուծո արքայութեանը հանրապետականացված էր, կարծի էին արդոք այնտեղ յերկրավոր թաղա-վորութեանները թագավորների, յեպիսկոպոսների և ֆեոդալ-կալվածատերերի հպատակ մնալ: Յեթե լուծերականութեանը Գերմանիայում հարմար գործիք էր գերմանական մանր իշխանների ձեռքում, ապա Կալվինականութեանը հանրապետութեան տալը բերեց Հոլանդիայում և ուժեղ հանրապետական կուսակցութեաններ Անգլիայում և առանձնապէս Շոտլանդիայում:

Կալվինականութեան մեջ իրեն համար կուլի պատրաստի թերիս գտալ բուրժուազիայի յերկրորդ խոշոր ապստամբութեանը Այդ ապրա-տամբութեանը տեղի ունեցաւ Անգլիայում: Քաղաքային բուրժուազիան սկսեց այն, իսկ միջին գյուղացիութեանը, գյուղական շրջանների յոմենրին (yeomanry) հաղթութեամբ աւարտեց այն: Բաւական տարրինակ իրողութեան. բոլոր յերեք մեծ բուրժուական հեղափոխութեանների մեջ գյուղացիներն են բանակ մատակարարում ճակատամարտերի համար, և նրանք էլ հանդիսանում են հենց այն դասա-կարգը, վորը տալիս հաղթութեանից հետո անխուսափելիորեն, այդ հաղթութեան տնտեսական արդյունքների հետևանքով, դեպի կործա-նում և դնում: Հարյուր տարի անցած Կրոմվելից հետո՝ անգլիական յոմենները գրեթե անհետացան: Համենայն դեպս միայն այդ յոմեն-ների և քաղաքների պլերբյական տարրերի միջամտութեան հետևան-քով կոիվը վճռական վախճանի հասցվեց, և Կարլոս I կառափնարան բարձրացաւ: Մինչև իսկ բուրժուազիայի հաղթութեան այն պետուհիները քաղելու համար, վորոնք այն ժամանակ միանգամայն հասունացել էին հնձելու համար, պետք յեղաւ, վորպեսզի հեղափոխութեանն իր-

Նպատակից նշանակալից չափով ավելի հեռու գնա—ծիշտ այնպես, ինչպես 1793 թ. Ֆրանսիայում և 1848 թ. Դերմանիայում։ Ըստ յերևութիւն, խեղապես այդ և բուրժուական հասարակության զարգացման որոնքներէր մեկը։

Հեղափոխական պորձունեյության այդ ավելցուկին հաջորդեց անխուսափելի սեւեռեալ, վորն, իր հերթին, իր նպատակից հեռու անցաւ։ Մի շարք տառաւորութեանց հետ, վերջապես, ծանրության նոր կենտրոն հաստատուեց, վոր յետեւեալ ծառայեց հետագա զարգացման համար։ Անգլիական պատմության նշանավոր ժամանակաշրջանը, վոր Ֆրիստերները «մեծ ըմբոստութեան» տնունով մկրտեցին, և նրան հաջորդող մարտերն ավարտվում են 1689 թվի համեմատաբար աննշան դեպքով, վոր լիբերալ պատմաբանները «փառավոր հեղափոխութեան» են անվանում։

Նոր յեւեկեալ մի կոմպրոմիս եր ծագող բուրժուազիայի և նախկին ֆեոդալական խոշոր հողատերերի միջև։ Վերջիններս, վորոնք այն ժամանակ, ինչպես և այժմ, արիստոկրատիա եյին համարվում, վաղուց արդեն ձգտում եյին դառնալ այն, ինչ վոր Լուի-Ֆիլիպպը Ֆրանսիայում դարձաւ միայն յերկար ժամանակ անցնելուց հետո — ազգի առաջին բուրժուաները։ Բարեբախտութեան եր Անգլիայի համար, վոր հին ֆեոդալական բարոնները միմյանց կոտորել եյին Սալիսակ և Կարմիր վարդերի պատերազմներում։ Նրանց ժառանգները, սակայն, վորոնք մեծ մասամբ նույնպես հինց այդ հին ընտանիքներէ շտապիւղներն եյին, իրենց սահմը բերում եյին այնքան հեռավոր յերկրորդական դժերից, վոր նրանք բոլորովին նոր կորպորացիա եյին կազմում։ Նրանց ունակութեաններն ու ձգտումները շատ ավելի բուրժուական եյին, քան թե ֆեոդալական։ Նրանք հիանալի կերպով գիտեյին փողի արժեքը և անմիջապէս զբաղվեցին իրենց հողային բնական բարձրացնելով, վորի համար հարյուրավոր մանր վարձակալների դուրս քշեցին հողերից և վոյթարներով փոխարինեցին նրանց։ Հենրիկոս VIII մասսաներով լենդլորդեր եր ստեղծում բուրժուազիայից, բաշխելով ու վատնելով յեկեղեցական կալվածքները։ Նույն հետևանքին եյին հասցնում մինչև XVII դարի վերջն անընդհատ շարունակվող խոշոր կալվածքների բռնազրավումը, վորոնք ապա արվում եյին նորեւեկների կամ կիսանորեւեկներէ։ Այդ պատճառով ել՝ անգլիական «արիստոկրատիան» Հենրիկոս VIII-ի ժամանակներից սկսած վոչ միայն արդեւ չեւ հանդիսանում արդյունաբերութեան զարգացմանը, այլ, ընդհակառակն, աշխատում եր նրանից ոգուտ քաղել։ Յեւ ճիշտ նմանապէս ել կար խոշոր հողատատերերի մի մաս, վորը, անտեսական կամ քաղաքական նպատակներից զրդված, համաձայնում եր գործակցել ֆինանսական և արդյունաբերական բուրժուազիայի առաջնորդներէ հետ։ Այդպիսով հեշտութեամբ կարող եր կենսագործվել 1689 թ. կոմպրոմիսը։ Քաղաքական

po a pima (հաղթական ավարը) — սինեկուրա-պաշտոնները, բարձր
 ռոճիկները—հոգատեր արհմիակնություն նշանավոր տոհմերի բաժինը
 մնացին, այն պայմանով, վոր իր չափով պաշտպանեն ֆինանսական,
 արդյունաբերական և առևտրական բուրժուազիայի տնտեսական շա-
 հերը: Այդ տնտեսական շահերն այն ժամանակ արդեն բաժանանալու
 ուժեղ էին. վերջիվերջո նրանք էլին վորոշում ընդհանուր ազգային
 քաղաքականությունը: Իհարկե, տարածայնությունը գոյություն
 ունեյին այս կամ այն հարցի շուրջը, բայց արխատկրատական ոլի-
 գարխիան չափազանց լավ հասկանում էր, թե իր սեփական տնտեսա-
 կան բարորությունը վորքան անխղիճ կապերով կապված էր արդյու-
 նաբերական և առևտրական բուրժուազիայի ծաղկման հետ:

Այդ ժամանակվանից բուրժուազիան դարձավ Անգլիայի տիրա-
 պետող դասակարգերի համեստ, բայց ճանաչված մասը: Նրանց հետ
 միասին նա ընդհանուր շահ ունի՝ ճնշելու ժողովրդի վիթխարի աշ-
 խատավոր մասսային: Վաճառականը կամ գործարանատերն իր գոր-
 ծակատարներին, իր բանվորներին, իր սպասավորներին վերաբերմամբ
 ինքն էլ հաց ափողի, տիրոջ կամ, ինչպես քիչ առաջ արտահայտվում
 էին Անգլիայում, «բնական պետի» դիրք էր գրավում: Նա պետք է
 նրանցից հնարավոր չափով լավ վորակի հնարավոր չափով ավելի մեծ
 քանակությամբ աշխատանք դուրս կորզեր. այդ նպատակի համար նա
 պետք է նրանց պատշաճ հնազանդության վորդով կրթեր: Նա ինքն էլ
 կրոնական էր. նրա կրոնն ընձևուց նրան այն դրոշը, վորով նա հաղ-
 թեց թագավորին ու լորդերին: Վոչ շատ առաջ նա այդ կրոնի մեջ
 նաև միջոցներ գտավ, վարպետի մշակի իր բնական հպատակներին և
 նրանց հնազանդ դարձնի այն տերերի հրամաններին, վոր նրանց գլը-
 խին դրել է աստվածային անխմանալի նախախնամությունը: Նարձ
 ասած, անգլիական բուրժուան այդ ժամանակվանից սկսած մասնակից
 էր «ստորին դասերին»—արտադրող վիթխարի ժողովրդական մասսայի—
 ճնշման գործին, և այդ առթիվ գործադրվող միջոցներից մեկը կրոնի
 աղդեցությունն էր:

Բայց սրան, կապակցվում էր մի ուրիշ հանգամանք ևս, վոր ու-
 ժեղացնում էր բուրժուազիայի կրոնական ձգտումը, — մատերիալիզմի
 ծաղկումն Անգլիայում: Այդ նոր ասաստված ուսմունքը վոչ միայն
 սարսափի մեջ էր դրում բարեպաշտ բուրժուային, — նա ի լրումն այդ
 ամենի իրեն հայտարարում էր փիլիսոփայություն, վորը միանգամայն
 հենց հարմար է գալիս գիտնական և կրթված մարդկանց համար իբրև
 կրոնի հակակշիռ, և վորը բավականաչափ լավ է չկրթված, ահագին ժո-
 դովրդական մասսայի համար, բուրժուազիան էլ ներառյալ: Հորքսի հետ
 միասին այդ ուսմունքը հանդես յեկավ թագավորական ամենագորու-
 թյան պաշտպան և քացարձակ միապետությունը կոչ էր անում սան-
 ճահարել այդ puer robustus sed malitiosus (ամբալաղժ, բայց նեն-

գալմոր տղին), այսինքն՝ ժողովրդին: Մինչև անգամ Հորբսի հետևողներին,—Բոլինրբոկի, Շեֆտսբերի և ուրիշներին, — մոտ ել մատերիալիզմի նոր, գերաստական ձևը արխատկրատական, եզոտերիկ (միայն նվիրյալների համար պիտանի) ուսմունք եր մնում, և այդ պատճառով մատերիալիզմն ատելի յեր բուրժուազիային վնչ միայն իր կրոնական հերետիկոսության համար, այլ նաև իր հակաբուրժուական քաղաքական կապերի համար: Դրան համապատասխան, իբրև հակադրություն արխատկրատիայի մատերիալիզմին ու դեիզմին, հատկապես հենց բողոքական հերձվածներն եյին, վորոնք Ստյուարտները զեմ մղվող կրոնական վորոշ գրոշ և մարտիկներ տրամադրեցին, նմանապես և առաջադիմական միջին դասակարգի ղեկավոր մարտական ուժերը հանդես բերին և զեռ այժմ ել կազմում են «մեծ լիբերալ կուսակցության» վորդնաշարը:

Մինչ այս մինչ այն մատերիալիզմն Անգլիայից գաղթեց Ֆրանսիա, վորտեղ նա դտով յերկրորդ մատերիալիստական փիլիսոփայական դպրոցը, մի դպրոց, վոր դուրս եր յեկել կարտեզյան փիլիսոփայությունից և վորի հետ այն ձուլվել եր: Ֆրանսիայում ել այն սկզբբում բացառապես արխատկրատական ուսմունք եր մնում: Բայց շուտով հանդես յեկավ նրա հեղափոխական բնույթը: Ֆրանսական մատերիալիստներն իրենց քննադատությունը չեյին սահմանափակում միայն կրոնի բնագավառով. նրանք քննադատում եյին իրենց ժամանակի ամեն մի գիտական տրադիցիա, ամեն մի քաղաքական հաստատություն: Իրենց թեորիայի ընդհանրական գործադրելիությունն ապացուցելու համար նրանք ընտրեցին ամենաեղած ճանապարհը. նրանք համարձակ կերպով գործադրեցին այն գիտության բոլոր որյեկտներին վերաբերմամբ մի հսկայական աշխատության մեջ, վորից նրանք ստացել են իրենց անունը, „Encyclopédie“-ի (Հանրագիտակի) մեջ. Ահա այդ յեղանակով, այս կամ այն ձևով, մատերիալիզմն իբրև բացահայտ մատերիալիզմ կամ իբրև դեիզմ դարձավ ամբողջ կրթված յերիտասարդության աշխարհահայացքը Ֆրանսիայում: Յեղ այդ—այն չօրոգի, վոր Մեծ հեղափոխության ժամանակ, անգլիական ոռյալիստներին լույս աշխարհ հանած ուսմունքը ֆրանսական հանրապետականներին ու տեոթրիստներին թեորիական գրոշակ ընձեռեց և տեքստ տվեց «Մարդու իրավունքների գեկլարացիայի» համար:

Ֆրանսական Մեծ հեղափոխությունը բուրժուազիայի յերրորդ ապստամբությունն եր, բայց առաջինն եր, վոր միանգամայն զին նետեց իր վրայից կրոնական վերաբերուն և իր բոլոր աստիճաններում ընթացավ բացահայտ քաղաքական հողի վրա: Նա նմանապես և առաջին ապստամբությունն եր, վորն իսկապես մինչև վերջ հասցվեց, մինչև մարտնչող կողմերից մեկին՝ արխատկրատիայի վորնչացումը, և մյուս կողմի՝ բուրժուազիայի լիակատար հաղթությունը: Անգլիայում նա-

խանդավորական և հետհեղափոխական հաստատութիւններէ տնընդհատ գոյութիւնը և կոմպրոմիսը խոշոր հողատերերի և կապիտալիստներէ միջև իրենց արտահայտութիւնն էյին դանում զատական պրեզիդենտներէ անընդհատութեան մեջ, ինչպէս նաև ֆեոդալական որհնադրական ձևերի հարգալից պահպանման մեջ: Ֆրանսիայում հեղափոխութիւնը վերջնականապէս խզեց կապերը անցյալի ավանդութիւններէ հետ, վոչնչացրեց ֆեոդալիզմի վերջին հետքերը և Code civil (Քաղաքացիական կոդեքս)՝ մեջ ստեղծեց հին հոմիլայական իրավունքի վարպետական հարմարեցումը նորագոյն կապիտալիստական հարաբերութիւններին, — հենց այն իրավունքի, վորը գրեթէ կատարյալ արտահայտութիւնն է հանդիսանում այն իրավարանական հարաբերութիւններէ, վորոնք բոլրում են տնտեսական զարգացման այն աստիճանից, վոր Մարքսն «ապրանքային արտադրութիւն» և անվանում: Հարմարեցումը կատարված է այն աստիճան վարպետորեն, վոր որենքների այդ հեղափոխական ֆրանսական կոդեքսը դեռ այժմ էլ բոլոր մյուս յերկրներում, — չրացառելով նաև Անգլիան, — որինակ է ծառայում սեփականութեան իրավունքների ուֆորմների ժամանակ: Սակայն այդ առթիւ մի բան չպետք է մոռանալ. անգլիական իրավունքը շարունակում է կապիտալիստական հասարակութեան տնտեսական հարաբերութիւններն արտահայտել բարբարոսական ֆեոդալական բարբառով, վորն այնքան է համապատասխանում արտահայտելի առարկային, վորքան անգլիական ուղղադրութիւնը — անգլիական ընթերցմանը. «vous écrivez Londres et vous prononcez Constantinople» («Դուք գրում եք Լոնդոն, բայց կարդում եք Կոստանդնուպոլիս»), ասել է մի ֆրանսացի: Բայց զրա փոխարեն հենց այդ նույն անգլիական իրավունքը միակն է հանդիսանում, վորն առանց կեղծելու խստորեն պահպանել և Ամերիկա ու գաղութներն է տեղափոխել այն անձի աղատութեան, տեղական ինքնավարութեան և ամեն մի ոտարներխոսութեանց — բացի դատականից — ազահոված լինելու լավագոյն մասը, կարճ ասած՝ այն հին գերմանական ազատութիւնների լավագոյն մասը, վորոնք մայր ցամաքում բացարձակ միապետութիւններէ իշխանութեան ներքո բոլորովին անհետացել են և մինչև այժմ դեռ վոչ մի տեղ լրիւ ծավալով հետ չեն նվաճված:

Վերադառնանք, սակայն, մեր բրիտանական բուրժուային Ֆրանսական հեղափոխութիւնը նրան հիանալի դեպք ընձեռեց՝ կոնտինենտալ միապետութիւնների ոգնութեամբ խորտակելու ֆրանսական ծովային առևտուրը, զրավելու ֆրանսական գաղութներն ու վոչնչացնելու վերջին ֆրանսական նկրտումները ծովային մրցակցութեան վերաբերմամբ: Այս մեկն էր այն հիմունքներից, վորոնց համար նա պայքարի յիշով նրա դեմ: Յերկրորդն այն էր, վոր այդ հեղափոխութեան մեթոդներն արդեն խիստ մեծ զգվանք էյին առաջացնում նրա մեջ, —

վնչ միայն նրա ղեղովված տետրեր, այլ արդեն միայն նրա փորձը՝ ծայրահեղութեան հասցնելու բուրժուազիայի տիրապետութեանը Բացի այդ եւ՝ Բնչ պիտի աներ աշխարհում բրիտանական բուրժուան առանց իր արխատկրատիայի, վորը նրան թէ շարժուձևեր սովորեցրեց (շարժուձևեր, վորոնք արժանի եյին ուսուցչին!), թէ նրա համար նորաձեւութեանն էր ձեռք բերեց, վորը նրան սպաներ եր մատակարարում բանակի համար,—կարգի այդ պահապանի համար յերկրի ներսում,—և նախատորմիդի համար, վոր նոր դադութեային տիրապետութեանն ու նոր շուկաներ եր նվաճում Բայց և այնպիս, բուրժուազիայի ներսում այնուամենայնիվ մի առաջողիմական փոքրամասնութեան կար,—մարդիկ, վորոնց-շահերն այնքան ել շատ չեյին ծաղկում կոմպրոմիսից։ Այդ փոքրամասնութեանը, վոր կազմված եր մասն բուրժուազիայից, համակրութեամբ եր վերաբերվում դեպի հեղափոխութեանը, բայց նա անգոր եր պարլամենտում։

Այդպիսով, վորքան մատերիալիզմն ալիւլի յեր դառնում Ֆրանսական հեղափոխութեան հաջաւոր հանգանակը, այնքան ալիւլի ամուր եր կաշում աստիճանալիւ անգլիական բուրժուան իր կրոնից։ Միթե տետրի շրջանը Պարիզում ցույց չտվեց, թէ ինչ ե դուրս դալիս, յերբ ժողովրդից խլում են կրոնը։ Վորքան մատերիալիզմն ալիւլի յեր տարածվում Ֆրանսիայից դեպի հարևան յերկրները և ոժանդակութեան ստանում ազգակից թեորիական հոսանքներից, հատկապես զերմանական փիլիսոփայութեանց, վորքան ալիւլի մատերիալիզմն ու առհասարակ ազատամտութեանը կոնախնենաում իսկապես դառնում եյին կրթված մարդու անհրաժեշտ հատկանիշը,—այնքան ալիւլի համառորեն անգլիական միջին դասակարգը կառնում եր իր զանազանակերպ կրոնական դավանութեաններից։ Վորքան ել ուժեղ կերպով նրանք տարբերվեյին միմյանցից, այնուամենայնիվ նրանք բոլորը վճռակա՛նապես կրոնական քրիստոնեական դավանութեաններ եյին։

Այն ժամանակ, յերբ հեղափոխութեանը Ֆրանսիայում բուրժուազիային հաղթութեան հասցրեց քաղաքականութեան մեջ, այդ ժամանակ Անգլիայում Ուատտը, Արկրայտը, Կարտրայտը և ուրիշներն արդյունաբերական հեղափոխութեան առաջացրին, վորը միանգամայն տեղափոխեց տնտեսական ուժերի ծանրութեան կենտրոնը։ Բուրժուազիայի հարստութեանն այժմ սկսեց անսահման ալիւլի արագութեամբ աճել, քան հողային արխատկրատիայի հարստութեանը։ Բուրժուազիայի հենց իրեն ներսում Ֆինանսական արխատկրատիան, բանկիրները և այլն սկսեցին ալիւլի ու ալիւլի հետին սլանը նահանջել Ֆարրիկանտների համեմատութեամբ։ 1689 թվականի կոմպրոմիսը, նույնիսկ բուրժուազիայի ոգոտին հետզհետե կատարված փոփոխութեաններից հետո, արդեն այլևս չեր համապատասխանում այդ համաձայնութեան մասնակիցների ուժերի փոխհարաբերութեանը։ Մասնակիցների բնույթը

նուէնպէս փոխվեց. 1830 թվի բուրժուազիան խիստ աւարերվում եր անցյալ (XVIII) դարի բուրժուազիայից, Դեռևս արխատոկրատիայի ձևաքերում մնացած քաղաքական իշխանությունը, վորը նա ոգտագործում եր նոր արդյունաբերական բուրժուազիայի պահանջմունքների դեմ, անհամատեղելի յեր դարձել նոր տնտեսական շահերի հետ չարի յեղով վերանորոգել կոխվը արխատոկրատիայի դեմ. կոխվը կարող եր վերջանալ միայն նոր տնտեսական ուժերի հաղթությամբ: 1830 թ. Քրանսական հեղափոխության ազդեցությամբ, չնայած ամբողջ ընդգիծագրությանը, առաջին անգամ իրականացվեց պարլամենտական ռեֆորմը: Այդ բանը բուրժուազիայի համար ճանաչված ուժեղ դիրք ստեղծեց պարլամենտում: Ապա յեկավ հոգային որենքների վերացումը, վորը մի անգամ ընդմիշտ հաստատեց բուրժուազիայի գերակշռությունը հոգային արխատոկրատիայի նկատմամբ, — առանձնապէս նրա տնտագործունյա մասի, ֆաբրիկանտների գերակշռությունը: Այդ բանը բուրժուազիայի ամենամեծ հաղթությունն եր, բայց միևնույն ժամանակ նաև վերջին հաղթությունը, վոր նա տարավ բացառապէս իր սեփական շահերի համար: Նրա բոլոր հետագա հաղթանակները նա ստիպված եր բաժանելու սկզբում իրեն հետ կապված, բայց հետո նրա դեմ պայքարի յեկած նոր սոցիալական ուժի հետ:

Արդյունաբերական հեղափոխությունն ստեղծեց խոշոր կապիտալիստ-ֆաբրիկանտների դասակարգ, բայց դրա հետ միասին նաև ֆաբրիկային բանվորների շատ ավելի բազմամարդ դասակարգը: Այդ դասակարգի թիֆն անընդհատ աճում եր, այն չափով, վորչափով արդյունաբերական հեղափոխությունը սրվում եր արտադրության մի ճշողը մյուսի հետևից: Նրա քանակության հետ միասին աճում եր նաև նրա ուժը, և այդ ուժն իրեն ցույց տվեց արդեն 1824 թվին, յերբ նա ստիպեց պարլամենտին, չնայելով վերջինիս համառ դիմադրության, վերացնելու կռալիցիայի ազատության դեմ հրատարակված որենքները Պարլամենտական ռեֆորմի ոգտին կատարված ազիտացիայի ժամանակ բանվորները կազմում եյին ռեֆորմների կուսակցության արմատական թիւը: Յերբ 1832 թ. ակտերն այնուամենայնիվ նրանց ձայնի իրավունք չտվին, նրանք իրենց պահանջները շարադրեցին ժողովրդական խարտիայի մեջ (people's charter) և, իբրև հակադրություն հացի որենքների դեմ կազմված ուժեղ բուրժուական լիգայի, կազմակերպվեցին իբրև չարտիստների անկախ կուսակցություն: Այդ մեր ժամանակների առաջին բունկարական կուսակցությունն եր:

Այնուհետև կոնտրիննտում 1848 թ. փետրվարին և մարտին հեղափոխություններ բռնկվեցին, վորոնց մեջ բանվորներն այնքան կարեւոր դեր խաղացին և վորտեղ նրանք, գոնե Պարիզում, հանդես յեկան այնպիսի պահանջներով, վորոնք վճռականապէս անթույլատրելի եյին կապիտալիստական հասարակության տեսակետից: Սկզբում չարտիստ-

ների պարտութիւնը 1848 թ. ապրիլի 10-ին, ապա բանվորների պա-
րիզյան սոցիալամբուլայան ճնշումը նույն թվականի հունիսին, այնու-
հետեւ 1849 թ. անհաջողութիւններն Իտալիայում, Հունգարիայում,
Հարավային Գերմանիայում և, վերջապես, Լուի Բոնապարտի հաղթու-
թիւնը Պարիզի վրա 1851 թվի դեկտեմբերի 2-ին։ Այդպիսով գոնե
վորոշ ժամանակով հաջողից վանել բանվորական պահանջների խրա-
վիւղը, բայց ինչպիսի ծախսերով։ Յեթե, այդ պատճառով, բրիտա-
նական բուրժուան օրդենն առաջ ել համոզված եր, վոր անհրաժեշտ է
«հասարակ» ժողովրդին կրոնական սանձի տակ պահել, ապա վերջան
ավելի ուժեղ կերպով պետք է նա այդ անհրաժեշտութիւնն զգար այդ
բոլոր սպրումներից հետո։ Յեւ, ամենաչնչին ուշադրութիւն անգամ
չզարձնելով իր կոնտինենտալ յեղբայրակիցների ծաղրանքներին, նա շա-
բունակում եր տարեցտարի հազարներ ու տասնյակ հազարներ ծախսել
ստորին դասերին Ավետարան քարոզելու համար։ Զրավականանալով
իր սեփական կրոնական ապարատով, նա դիմեց իր յեղբայր Հոմա-
թանին, կրոնական ձեռնարկութիւններն այն ժամանակվա ամենամեծ
կազմակերպչին և Ամերիկայից ներմուծեց Մուդրի, Սենկիի ռեփլի-
կանը («Տոգելոր վերածնութիւնը») և այլն. վերջապես նա համաձայ-
նեց մինչև անգամ «Փրկութիւն բանակի» վտանգավոր ոգնութիւնը,
վորը կրկին վերակենդանացնում է նախնի քրիստոնեյութիւնն պրո-
պագանդի յղանակները, դիմում է ազգայններին իբրև աստուծ ընտ-
րյալներ, պայքարում է կապիտալիզմի դեմ նրա կրոնական ձևով և
այդպիսով զարգացնում է նախնի-քրիստոնեյական դասակարգային
պայքարի վորոշ կողմերը, վորոնք մի գեղեցիկ որ կարող են խիստ ճա-
կատագրական դառնալ ներկայումս այդ գործի վրա կանխիկ դրամներ
ծախսող հարուստ մարդկանց համար։

Ըստ յերևութին, կարելի չէ պատմական որոնք համարել, վոր
յեվրոպական վաղ մի յիւրկում բուրժուազիային չի հաջողվում, — գոնե
յերկարատե ժամանակով, — քաղաքական իշխանութիւնը գրավել հինց
այնպիսի բացառիկ յեղանակով, ինչպես վոր Ֆեոդալական արիստո-
կրատիան եր պահում այն միջին դարերի ընթացքում։ Մինչև անգամ
Ֆրանսիայում, վորտեղ ֆեոդալիզմը միանգամայն արմատախիլ եր ար-
ված, բուրժուազիան, իբրև ամբողջ դասակարգի համարութիւն,
միայն կարճատե ժամանակ իշխեց։ Լուի-Ֆիլիպպի ժամանակ, 1830
թվից մինչև 1848 թ., Կրիստոնեւում եր բուրժուազիայի միայն աննշան
մասը։ շատ ավելի խոշոր մասը բարձր ցնդի միջոցով գրկված եր ընտ-
րական իրավունքներից։ Յերկրորդ հանրապետութիւնն ժամանակ իշ-
խում եր ամբողջ բուրժուազիան, բայց ընդամենը միայն յերեք տարի.
նրա անընդունակութիւնը ճանապարհ հարթեց յերկրորդ կայսրու-
թիւնն համար։ Միայն այժմ, յերրորդ հանրապետութիւնն ժամանակ,
բուրժուազիան ամբողջութիւնը քսան տարի շարունակ կանգնած եր

կառավարման ղեկի մոտ, բայց նա արդեն այժմ անկման ու բախտի նշաններ և ցույց տալիս: Բուրժուազիայի տեական տիրապետությունը մինչև այժմ հնարավոր և յեղել միայն այնպիսի յերկրներում, ինչպես Ամերիկան և, վերտեղ յերբեք ֆեոդալիզմ չի յեղել, և հասարակությունը հենց բոլորովին սկզբից ստեղծվել և բուրժուական հիմքի վրա: Բայց մինչև անգամ ֆրանսիայում և Ամերիկայում արդեն բարձրագույն դոկտրին են բաղխում բուրժուազիայի ժառանգները — բանվորները:

Անգլիայում բուրժուազիան յերբեք անբաժան իշխանություն տեր չի յեղել: Մինչև անգամ նշա հաղթությունը 1831 թվին թողեց, վոր արխատկրատիան զրեթի բացառապես բոլոր բարձր կառավարական պաշտոնների տերը մնա: Այն հնազանդությունը, վորով հարուստ բուրժուազիան հաշտվեց այդ բանի հետ, ինձ համար անհասկանալի յեր մնում մինչև այն ժամանակ, յերբ յես ծանոթացա Վ. Ա. Ֆորստերի ճառի հետ: Մի զեղեցիկ որ խոշոր լիբերալ ֆարբիկանտ պարոն Վ. Ա. Ֆորստերը Բրեդֆորդի յերխառասարդ մարդկանց ուղղված իր ճառում աղերսում եր նրանց, իրենց սեփական բարիքի համար, այնուամենայնիվ սուսմնասիրել ֆրանսերեն լեզուն: Այդ առթիվ նա պատմեց, թե ինչ հիմարն և յերեացել ինքն իրեն, յերբ մինիստր դառնալով՝ ընկել և մի այնպիսի հասարակություն մեջ, վորտեղ ֆրանսերենն առնվազն նույնքան անհրաժեշտ եր, վորքան անգլիերենը: Յեվ իսկապես, այն ժամանակվա անգլիական բուրժուաները, միջին հաշվով, բոլորովին անկիրթ նորելուկներ ելին, վորոնք կամով թե ակամա ոչտք և արխատկրատիային թողնեյին՝ այն բոլոր բարձրագույն կառավարական պաշտոնները, վորտեղ ուրիշ հատկություններ ելին պահանջվում, քան դործնական ճարտիկությունը համեմատված կղղիական սահմանափակությունն ու կղղիական սնուպարծությունը *): Դեռ այժմ ել անկերջ լրագրական վիճերը „middle class education“ («միջին դասակարգի կրթություն») թեմայի մասին ցույց են տալիս, վոր անգլիական միջին դասակարգը դեռ շարունակում և իրեն համար անհարմար համա-

*) Յեվ մինչև անգամ դործնական հարաբերությունների մեջ ել «ոնադարձությունն ու աղբային ըովինիզմը ճատ վողորմելի խորհրդատուներ են: Մինչև ամենավերջին ժամանակներս սովորական անգլիական ֆարբիկանտն անգլիացու համար ստորացուցիչ բան եր համարում ուրիշ լեզվով խոսելը, բացի իր սեփականից, և վորտեղ չափով հպարտանում եր նրանով, վոր իրը խեղճ-ոտարերկրացիները ընտելություն են հաստատել Անգլիայում և նրան աղատել են իր արդյունքներն արտասահման քաղաքում նեղությունից: Նա ամենեկին չիք նկատում այն բանը, վոր այդ ոտարերկրացիները, մեծ մասամբ դերմանացիներ, դրա շնորհիվ իրենց ձեռքն առան անգլիական ոտարերկրյա առևտրի նշանակալից մասը, — ներմուծումը վոչ ճակատ, քան արտահանումը, — և վոր անգլիացիներին անմիջական ոտարերկրյա առևտուրն սկսեց սահմանափակվել դադաթներով, Զինատանով, Միացյալ Նահանգներով և Հարավային Ամերիկայով: Ե՛լ ափիլի պակաս նկատում եր նա, վոր այդ դերմանացիներն առևտուր ելին անում ուրիշ դերմանացիների հետ արտասահմանում և նրանք բոլորը ժամանակի

րել ամենալավագոյն կրթութիւնը և իր շուրջն ինչ-վոր մի ավելի պարզ բան և վորոշում: Այդ պատճառով եւ միանգամայն բնական եր, վոր հացի որենքների վերացումից հետո այնպիսի մարդիկ, վորոնք կարողացան հաղթութիւն տանել, այդ կորզինները, Բրայանները, Պորտսերները և այլն, հետացիցին կառավարութեան մէջ վորեւ մասնակցութիւն ունենալուց, և միայն քսան տարի հետո ռեֆորմներնոր տկար նրանց առաջ, վերջապես, բաց արեց միջխտրութեան դռները: Մինչև անգամ մինչև այժմ եւ անգլիական բուրժուազիան այնպես խորը կերպով առդարձած և իր ավելի ցած հաստրականան դիրքի դիտակցութեամբ, վոր նա իր սեփական և ժողովրդական փողերով պահում և դատարկապորտներն մի փառահնդ կասառ, վորը պետք և բոլոր դիպքերում, ուր շքեղ փայլ և պահանջվում, արժանավոր կերպով ներկայացնի ամբողջ ազգը. անգլիական բուրժուազիան ինքն իրեն համար բարձրագոյն պատիվ և համարում, յերբ վորեւ բուրժուա արժանի յե համարվում միացվիլու այդ, վերջիվերջո հենց բուրժուազիայի արտադրած, փակ կորպորացիային:

Այդպիսով, արդունարեական և առևտրական բուրժուազիան դեռ չէր կարողացել վերջնականապես հեռացնել հողային արխտոկրատիային քաղաքական իշխանութիւնից, յերբ պատմութեան ասպարեզի վրա հանդես յեկավ մի նոր մրցորդ, բանվոր դասակարգը: Զարտիտական շարժումից և կոնտիննտալ հեղափոխութիւններից հետո վրա հասած ռեակցիան և սրա վրա ավելացած անգլիական արդունարեական շարժումի չտեսնված ծաղկումը 1848 թիւից մինչև 1866 թիւը (այդ ծաղկումը սովորաբար բացատրում են սոսկ միայն առևտրի ազատութեամբ, բայց նրա վրա հասնելը շատ ավելի պարտական ենք յերկաթուղիների, ովկիանյան շոգենավերի և առհասարակ հազորդակցութեան միջոցների հսկայական զարգացմանը) բանվորներին կրկին անկախութիւն տվին լիբերալներից, վորոնց արմատական թէն ելին կազմում նրանք, ինչպես վոր նաև չարտիստական շարժումից առաջ եր: Սա-

րնթացքում առևտրական դադութիւնների մի տնրող ցանց ելին կազմում տնրող առևտրիւն: Իսկ յերբ վոր, սրանից քառասուն տարի առաջ, Գերմանիան սկսեց լուրջ կերպով աշխատել արտահանման համար, այն ժամանակ նա հանձնեա այդ դերմանական առևտրական դադութիւնների մի պատրաստի ապարատ դառն, վորը նրան անգնահատելի ծառայութիւններ մատուցեց, վորպեսդի նա, այդքան կարճ ժամանակում, հաց արտահանող յերկրից առաջնակարգ արդունարեական յերկրի վերածվի: Վերջապես, սրանից տաս տարի առաջ, անգլիական Փարրիկամտին անհանդատութիւն տրեց, և նա հարցում ուղղեց իր դեպաններին ու հյուպատոսներին, թե այդ ինչպես և պատահել, վոր նրա դնորդները ցրել են դալիս: Միաժամ պատասխանը հետեայն եր: 1) դուք չեք ուսումնասիրում ձեր դնորդի լեզուն, այլ պահանջում եք, վոր նա խոսի ձեր լեզվով, և 2) դուք ամենեկն չեք աշխատում բավարարել ձեր դնորդի պահանջները, սովորութիւններն ու ճաղակները, այլ պահանջում եք, վորպեսդի նա ընդունի ձեր, անգլիականը:

կայն բանվորների պահանջներն ընտրական իրավունքներ ունենալու վերաբերմամբ հետզհետե անհաղթահարելի էյին դառնում։ Մինչդեռ լիբերալներին ղեկավարող վիզերը դեռ շարունակում էյին տատանվել, Դիզրակին ցույց տվեց իր գերազանցութունը, նա ողջագործեց առօրինների համար նպաստավոր մոմենտը, քաղաքային ընտրական շրջաններում որենք մացրեց ամեն մեկի ընտրական իրավունքի մասին, ով ապրում էր առանձին տան մեջ, և դրա հետ կապեց ընտրական շրջանների փոփոխությունը։ Դրանից անմիջապես հետո հաջորդեց դադարի քվեարկության հաստատումը (the ballot). այնուհետե, 1884 թվին, սենատների ընտրական իրավունքը ապրաժովեց բոլոր շրջանների վրա, այդ թվում նաե գյուղական շրջանների վրա, և ընտրական շրջանների նոր բաշխում կատարվեց, վոր այնուամենայնիվ վորոշ չափով հավասարեցրեց նրանց միմյանց հետ։ Այդ բոլորի շնորհիվ բանվոր դասակարգի ազդեցությունն ընտրությունների վրա այնքան աճեց, վոր այժմ բանվորները 150—200 ընտրական շրջաններում կազմում են ընտրողների մեծամասնությունը։ Բայց չկա ավանդությունների առաջ խոնարհվելու ավելի լավագույն դպրոց, քան թե պարլամենտական սիստեմը։ Յեթե միջին դասակարգը պատկառանքով ու հարգալից յերկյուղով էր նայում այն խմբին, վորին լորդ Ջոն Մաններսը կոտակով «մեր հին ազնվականությունն» էր անվանում, ապա բանվորական մասսան էլ հարգանքով ու ակնածությամբ էր նայում այն դասակարգին, վոր այն ժամանակ «լավագույնն» էր կոչվում, այն է՝ բուրժուազիային։ Յեով խկապեա, տասնհինգ տարի առաջ բրիտանական բանվորն որինակելի բանվոր էր և նրա ամենաակնածալից վերաբերմունքը դեպի տիրող դիրքը և ինքնառահմանափակումն ու հեղությունը իր սեփական ցանկություններն առաջագրելիս՝ սպեղանի էյին դնում այն վերքերի վրա, վոր մեր գերմանական կաթնդեղ-սոցիալիստներին հասցնում էյին նրանց հաբաղատ գերմանական բանվորների անբուժելի կոմունիստական և հեղափոխական ձգտումները։

Սակայն անգլիական բուրժուաները լավ գործարար մարդիկ էյին և ավելի հեռուն էյին տեսնում, քան դերմանական պրոֆեսուրները։ Միայն հանգամանքների ճնշման ներքո նրանք իրենց իշխանությունը բաժանեցին բանվորների հետ։ Չարտիստական շարժման ժամանակ նրանք ըմբռնեցին, թե ինչի յի ընդունակ այդ puer robustus sed malitiosus (սուղղ, բայց նենգավոր տղին) — ժողովուրդը։ Այն ժամանակվանից ժողովրդական խաբտիայի ամենազգալի մասը խլվեց նրանց ձեռքից և որենք դարձավ։ Այժմ ավելի քան յերբևիցե կարևոր էր ժողովրդին բարոյական միջոցներով սանձած պահել։ Իսկ առաջին և ամենակարևոր միջոցը, վորով ներգործում են մասսաների վրա, դարձյալ մնում էր միշտ նույն կրսնը։ Այստեղից — հոգևոր անձերի մեծամասնությունը դպրոցական վարչությունների մեջ։ այստեղից — բուրժուա-

զիտյի աճող ինքնահարկումը բարեպաշտ դեմագոգիայի ամին տեսակ յեղանակների համար, ծիսականությունից սկսած մինչև «Փրկության բանակը»:

Յեղ տյժմ վրա հասավ ըրիտանական պատկանելի ֆիլիստերության հաղթանակը կոնտինենտալ բուրժուայի ազատամտության և կրոնական անտարբերության վերաբերմամբ: Պրանսական և գերմանական բանվորները դարձան խոռվարարներ: Նրանք բոլորովին վարակված են սոցիալիզմով և այն ել, շատ լավ հիմունքներով, ամենեվին ել այնպես մտահոգված չեն միջոցների որինականությամբ՝ իշխանությունը գրավելու համար: Այդ puer robustus-ն իսկապես վոր այնտեղ որեցոր ավելի ու ավելի malitiosus եր դառնում: Ի՞նչ եր ֆիուս ֆրանսական և գերմանական բուրժուային, իրեն ծայրահեղ միջոց, յեթե վոչ թագուն-թագուն մի կողմ նստել իր ազատամտությունը: Ճիշտ այնպես, ինչպես վորեն արեասիրտ համարձակ մարդ, զգալով վոր իրեն շարունակ ավելի ու ավելի յե տիրում ծովախոր, մի կողմ ե դնում վառած սիգարը, վորով նա պարծենկոտությամբ ցուցամուր-թյուն եր անում նավի վրա: Աստվածուրացները մեկը մյուսի հետևից արտաքուստ բարեպաշտ կերպարանք եյին ընդունում, հարգանքով խոսում յեկեղեցու, նրա ուսմունքի, ծեսերի մասին և իրենք ել այնքան ծես եյին կատարում, վորքան անխուսափելի յեր կատարել այդպիսի դրության ժամանակ: Պրանսական բուրժուաները մսից հրաժարվեցին ուրբաթ որերը, իսկ գերմանական բուրժուաներն իրենց յեկեղեցական տեղերում համբերությամբ նստում, մինչև յոթներորդ քրտինքը լսում եյին վերջ չունեցող բողոքական քարոզները: Իրենց մատերիալիզմով նրանք փորձանքի մեջ եյին ընկել: «Կրոնը պետք և պահպանվի ժողովրդի համար» — այս ե հասարակության փրկության վերջին և միակ միջոցը լիակատար կործանումից: Ի դժբախտություն հենց իրենց, նրանք այդ բանը դառն այն ժամանակ միայն, յերը իրենց կողմից ամեն բան արել եյին, ինչ վոր մարդկային ուժերը կներեն, կրոնը հայրտյան վոչնչացնելու համար: Յեղ այն ժամանակ յեկավ այն մոմենտը, յերը ըրիտանական բուրժուան իր հերթին կարող եր ծաղրի յենթարկել նրանց և կանչել. հիմարներ, այդ բանը կարող եյի յես ձեզ ասել սրանից դեռ յերկու հարյուր տարի առաջ:

Մակայն և այնպես յես վախենում եմ, վոր ղժջ ըրիտանական բուրժուայի կրոնական ըթամտությունը, վժջ կոնտինենտալ բուրժուայի post festum (տոնից հետո) տեղի ունեցած դարձը չեն կարողանա կանգնեցնել ուռչող-բարձրացող պրոլետարական հեղեղը: Ավանդությունը, այդ մի վիթխարի զսպիչ ուժ ե. այդ — պատմության իներցիայի ուժն ե: Բայց այդ ուժը միայն պասսիվ ե և այդ պատճառով ել պետք ե ընկնի, Կրոնը նմանապես յերկար ժամանակով պատվար չի ծառայելու կապիտալիստական հասարակության համար: Յեթե մեր

իրաւարանական, փիլիսոփայական և կրօնական պատկերացումները հանդիսանում են տվյալ հասարակութեան մեջ տիրապետող անսոսակեան հարաբերութեաններէ մտաւոր կամ հեռավոր ծնունդը, ապա այդ պատկերացումները չեն կարող յերկար ժամանակ պահպանվել նրանից հետո, յերբ անսոսական հարաբերութեաններն արժատապիտ փոխվել են ևս ևս մենք պետք հալատանք դերբնական հայանութեան, կամ համաձայնեմք, վոր վոչ մի կրօնական քարոզ իմիճակի չե պահպանելու կործանվող հասարակութեանը:

Յեւ իսկայես, Անգլիայում բանվորները նույնպես սկսել են կրկին շարժվել: Անկասկած է, նրանք կաշկանդված են դանապան ավանդութեաններով: Առաջին հերթին—բուրժուական ավանդութեաններով, այդպիսին է այն շատ տարածված նախապաշարումը, իրր թե միայն յերկու կուսակցութեան է հնարավոր, պահպանողական և ազատական կուսակցութեանները, և իրր բանվոր դասակարգը պետք է իր ազատագրմանը ձգտի հոր ազատական կուսակցութեան միջոցով: Ապա դալիս են այն բանվորական ավանդութեանները, վորոնք ժողովրդած են բանվոր դասակարգի ինքնուրույն յերուլթիների առաջին զուշ փորձերի ժամանակվանից. այդպիսի ավանդութեան է հանդիսանում շատ հին տրեդ-յունիոններում այն բոլոր բանվորների հետապումը, վորոնք կանոնավոր աշկերտութեան չեն անցկացրել. այդ ուրիշ բան չի նշանակում, բայց յեթե այն, վոր յուրաքանչյուր այդպիսի արհեստակցական միութեան ինքն է կրթում իր սեփական շարալերբիներնիրն: Բայց չնայած և հակառակ այդ բոլորին, անգլիական բանվոր դասակարգն առաջ է շարժվում, ինչպես այդ ստիպված յեղավ վշտահար հաղորդելու իր կաթիղեր-սոցիալիստական յեղբայրներին ինքը պարոն պրոֆեսոր Բրենտանոն: Նա առաջ է շարժվում, — ինչպես ամեն բան Անգլիայում,— դանդաղ չափավորված քայլերով. մերթ նա 'անվճռականութեան և հանդես բերում, մերթ վստահանում է զգուշավոր, մասամբ անպառուզ փորձեր անել: Տեղ-տեղ նա առաջ է շարժվում չափազանց անպատահութեամբ դեպի սոցիալիզմ բառը, մինչև նա հետզհետե սողորմում է նրա զարծով: Նա շարժվում է, և շարժումն ընդգրկում է բանվորների մի շերտը մյուսի հետեից: Ներկայումս նա մեռյալ քնից արթնացրել է Լոնդոնի Իսա-Նեղի չտվորած բանվորներին, և մենք տեսնեմք, թե ինչ հիանալի զարկ ավելի իրենց կողմից բանվոր դասակարգին այդ նոր ուժերը: Յեւ յեթե այդ շարժման ընթացքը չի համապատասխանում այս կամ այն քննադատի անհամբեր ակնկալութեաններին, ապա թող թե մեկը և թե մյուսը չմոռանան, վոր հենց բանվոր դասակարգի մեջ են պահպանել իրենց կենսունակութեանը անդիլական ազգային բնավորութեան լավագույն կողմերը և վոր ամեն մի քայլ դեպի առաջ, վոր մի անգամ նվաճվել է Անգլիայում, այլև յերբեք հետ չի գիշվում: Յեթե հին չարտիստների վորդիները, վերե

նկարագրված պատճառներով, մոչ քոյորովին աշնպես եյին, ինչպես
վոր կարելի յիւ սպասել, ապա բոլոր յերեւոյթները ցույց են տալիս,
վոր թոռներն արժանի կլինեն իրենց պապերին:

Սակայն յեվրոպական բանվոր դասակարգի հաղթությունը հախ-
ված չե լով միայն Անգլիայից: Այդ կարող ե անկասկած լինել միայն
այն դեպքում, յեթե համագործակցեն, դոնե, Անգլիան, Ֆրանսիան և
Վերմանիան: Վերջին յերկու յերկրներում բանվորական շարժումն ան-
դիմականից զգալի չափով առաջ ե անցել: Վերմանիայում այն գտնվում
ե վերջնական հաղթանակից մի չափելի տարածության վրա: Վերջին
քսանինը տարվա ընթացքում նրա ունեցած հաջողություններն իրենց
նմանը չունեն: Շարժման առաջադիմությունն ընթանում ե շարունակ
ալիլի ու ալիլի աճող արագությամբ: Յեթե բուրժուազիան գրաւորեց
իր վստահելի խեղճությունը ե քաղաքական ընդունակությունները,
կարողաւանության, ամբողջության, յիւանդի բացակայությունը,
ապա վերմանական բանվոր դասակարգը ցույց տվեց, վոր նա այդ բո-
լոր հատկություններն ալիլի քան բավարար չափով ունի: Գրեթե չորս
հարյուր տարի առաջ Վերմանիան յեվրոպական միջին դասակարգի
առաջին խոշոր ապստամբության յեղակեան եր յեղել: Հնարավոր չե,
արդյոք, իրերի ներկա վիճակում, վոր Վերմանիան դառնա բեմ նաև
յեվրոպական պրոլետարիատի առաջին մեծ հաղթության համար:

20 օտքիտի 1892 թ.:

—

I

Արդի սոցիալիզմն իր բովանդակութեամբ ամենից առաջ արդյունք է մի կողմից՝ այսօրվա հասարակութեան մեջ իշխող բանասերների և ընչազուրկների, կապիտալիստների և վարձու բանվորների դասակարգային հակադրութեանների դիտահայեցութեան, մյուս կողմից՝ արտադրութեան մեջ իշխող անարխիայի դիտադննութեան: Բայց իր թևերիական ձևով նա սկզբնապես յերևում է իբրև 18-րդ դարի ֆրանսական մեծ լուսավորիչների՝ առաջադրած սկզբունքների հետագա զարգացում և կարծես ավելի հետևողական շարունակութեան: Ինչպես ամեն մի նոր թևերիակ, նա էլ պետք է սկզբնապես հարեր իրենից առաջ ստեղծված գաղափարապաշարին, վորքան էլ վոր նրա արմատները նյութական տնտեսական իրողութեանների մեջ ելին հաստատված:

Այն մեծ մարդիկ, վորոնք ֆրանսիայում լուսավորում ելին մարդկանց գլուխները գալիք հեղափոխութեան համար, հենց իրենք էլ ծայրահեղ հեղափոխական ձևով ելին հանդես գալիս: Նրանք վնչ մի արտաքին հեղինակութուն չեկին ընդունում, ինչ տեսակ էլ լիներ այն: Կրոն, հայացք բնութեան մասին, հասարակութուն, պետական կարգ:— այս ամենը ամենաանխնայ քննադատութեան յենթարկվեց. ամեն ինչ պետք է իր գոյութեանն արդարացիներ բանականութեան դատաստանի առաջ կամ դոյութունից հրաժարվելու: Մտածող բանականութեանն այն միակ մասշտաբն էր, վոր գործադրվում էր ամեն բանի վերաբերմամբ: Այս այն ժամանակն էր, յերբ, ինչպես Հեղին անում է, աշխարհը գլխիվայր եր դրված*): ամենից առաջ այն իմաստով, վոր մարդային գլուխն ու նրա մտածողութեան միջոցով պտնված սկզբունքները պահանջ առաջադրեցին՝ բոլոր մարդկային գործողութեանների և հասարակական հարաբերութեանների հիմքը համարվելու: Իսկ ապա

*) Ահա ֆրանսական հեղափոխութեան վերաբերյալ հատվածը. «Բրավունցի գաղափարը, ըմբռնումը միանգամից իր ուժի մեջ է մտնում և նրա հանդես տնրափութեան հին նեցուկները չեկին կարող վորեւ հիմադրութեուն ցույց տալ: Ուրեմն այժմ իրավունցի գաղափարի մեջ կառուցվում է մի սահմանադրութուն, և այսուհետեւ ամեն ինչ պետք է հիմնվի այս պատմանդանի վրա: Վորքան վոր արեւ կանգնած է յերկնակամարի վրա և մոլորակները պտտվում են նրա շուրջը, այս բանը զեն տեսնված չէր, վոր մարդն իրեն գլխի, այսինքն գաղափարների վրա դնել և իրականութեունը դրա համաձայն կառուցելու: Ամենից առաջ Անաքսագորասն է ասել, թե Նուրը, բանականութեունն է կառավարում աշխարհը: Իսկ այժմ մարդն առաջին ան-

Ֆետագայութիւնն ալ իմաստով, վրայ ալ սկզբունքներն հսկանող իրականութիւնն իսկապես վերից միջնէ վար շուտ աւելցուցող և ինչ-այժմեան հասարակական ու պետական ձեւերը, բոլոր հնալանդ պատկերացումներն իրրեւ անբանական նետվեցին հնոտիների պահարանը. աշխարհը միջնէ այժմ դեկավարվել էր միայն նախապաշարունակութեամբ ողջ անցյալն արժանի չէր միայն կարեկցութեան ու արհամարհանքի։ Միայն այժմ բացվեց լույսը, սկսվեց բանականութեան թագավորութիւնը. այժմեանից սկսած պետք է անհամարժեքութիւնը, անիրավութիւնը, արտոնութիւնն ու ճնշումը դուրս մղվեն և տեղի տան հալոյտեանական ճշմարտութեան, հալոյտեանական արդարութեան, բնութեան մեջ հիմնված հալոյտարութեան և մարդկային անկապտելի իրավունքների առաջ։

Մենք դիտենք այժմ, վոր բանականութեան այս թագավորութիւնը վաղ ալ ինչ էր, յի՞թէ վոչ բուրժուազիայի իդեալականացրած թագավորութիւնը. վոր հալոյտեանական արտադրութիւնն իր կենսագործումը դտով բուրժուական արդարադատութեան մեջ, վոր հալոյտարութիւնը վերածվեց քաղաքացիական հալոյտարութեան՝ որենքի առաջ. վոր մարդկային ամենանշական իրավունքներից մեկը հայտարարվեց—բուրժուական սեփականութիւնը. և վոր բանականութեան պետութիւնը, Ռուսսոյի՝ հասարակական դաշինքը կենսագործվեց և կարող էր կենսագործվել միայն իրրեւ բուրժուական դեմոկրատական հանրապետութիւն։ 18-րդ դարի մեծ մտածողներն էլ, ինչպես և բոլոր նրանց նախորդները, չէին կարող դուրս գալ այն շրջանակներից, վոր գծել էր նրանց համար իրենց սեփական դարաշրջանը։

Բայց ֆետալական ազնվականութեան և իրրեւ մնացած ամբողջ հասարակութեան ներկայացուցիչ հանդես յեկող բուրժուազիայի հակադրութեան կողքին՝ գոյութիւն ունէր շահագործողների ու շահագործվողների, հարուստ դատարկապորտների ու աշխատող աղքատների հակադրութիւնը։ Զե՞ վոր հենց այս հանդամանքն էր, վոր բուրժուազիայի ներկայացուցիչներին հնարավորութիւն էր տալիս հանդես գալու վոչ թէ իրրեւ մի առանձին դասակարգի, այլ ամբողջ տառապող մարդկութեան ներկայացուցիչներու։ Դեռ ավելին։ Իր սկզբնավորութիւնից սկսած բուրժուազիան բռնված էր իր հակադրութեամբ. կապիտալիստները չեն

գտն հասել և այն ճանաչողութեանը, վոր դադափարը պետք է կառավարէ հոգեոր իրականութիւնը։ Այդպիսով այս մի հոյակապ արեւվածագ էր։ Բոլոր մտածող եյակները միասին տոնեցին այս դարաշրջանը. մի վեհ հուզմունք էր իդեալում այն ժամանակ, ոգու մի խանդավառութեամբ եր ընկած ամբողջ աշխարհը, կարծես թէ այժմ առաջին անգամ տեղի յե ունեցել աստվածային հաշտութիւնը աշխարհի հետ։ (Hegel, «Philosophie der Geschichte, 1840», S. 535). — Միթէ դեռ ժամանակը չի յիկել, հասել յերբեմնի պրոֆետոր Հեգելի այսպիսի, ընդհանրութեան համար վտանգավոր, հեղաշրջման ուսմունքների դեմ հանելու սոցիալիստների դեմ ուղղված օրենքը։

կարող դոյություն ունենալ առանց վարձու բանվորների, և միևնույն հարարերությամբ, ինչպես վոր միջնադարյան համքարական վարպետը դարգացալ, ժամանակակից բուրժուա դարձալ, այլ նույն հարարերությամբ ել համքարային ոգնականն ու համքարությունից դուրս գանալով որովարձու բանվորը դարգացան և պրոլետար դարձան: Եկել թեև ամբողջությամբ վերցրած բուրժուազիան կարող եր հավակնություն ունենալ, վոր ազնվականութեամբ յետ մղած իր կոկոսմ նա պաշտպանում եր միշտ մամանակ այն ժամանակվա դանադան աշխատավոր դասակարգերի շահերը, այնուամենայնիւ, յուրաքանչյուր խոշոր բուրժուական շարժման ժամանակ լռնկվում եյին այն դասակարգի ինքնուրույն հագմունքները, վոր ժամանակակից պրոլետարիատի ավելի կամ պակաս չափով դարգացած նախորդն եր: Այդպես՝ գերմանական ուֆորմացիայի և դյուզացիական պատերազմի⁸ ջրջանում—կրկնականութենքներն ու Թոմաս Մյունցերը, անգլիական մեծ հեղափոխութեան⁹ ժամանակ—Լեվելլերները, ֆրանսական մեծ հեղափոխութեան ժամանակ—Բարեթը¹⁰: Դեռևս մի անպատշաճ դասակարգի այս հեղափոխական ընդվզումները կողքին անգի եյին ունենում նաև համապատասխան թեորիական հայտարարութեաններ: 16-րդ և 17-րդ դարերում իդեալական հասարակական դրութեան¹¹ ուտոպիական նկարագրութեաններ. 18-րդ դարում արդեն ուղղակի կոմունիստական թեորիաներ (Մորելլի և Մարի): Հավասարութեան պահանջն ալեկա չեր սահմանափակվում քաղաքական իրավունքներով, նա պետք ե տարածվեր նաև առանձին անհատները հասարակական դրութեան վրա. պետք ե վերացվէին վոչ միայն դասակարգային արտոնութեանները, այլև հենց դասակարգային տարրերութեանները: Այդպիսով՝ նոր ուսմունքի առաջին արտահայտութեան ձեւը մի հզնավորական, կյանքի բոլոր հաճուքները մերժող, Սպարտային հարող կոմունիզմ եր: Այնուհետև հաջորդեցին յերեք մեծ ուտոպիստները—Սեն-Սիմոնը, վորի մոտ բուրժուական ուղղութեանը դեռ վորոշ չափով պահում եր իր դիրքը պրոլետարականի կողքին, Ֆուրյեն և Ուենը. վերջինս, կապիտալիստական ամենադարգացած արտադրութեան յերկրում և այլ արտադրութեան շնորհիւ ստեղծված հակադրութեանների ազդեցութեամբ՝ սխտեմատիկ կերպով ծավալում եր իր առաջարկութեանները դասակարգային տարրերութեանները վերացնելու համար, անմիջականորեն հաքելով ֆրանսական մատերիալիզմին:

Բոլոր յերեքի համար ել ընդհանուր եր այն, վոր նրանք հանդես չեն գալիս իբրև մինչ այն պատմականորեն ստեղծված պրոլետարիատի շահերի ներկայացուցիչներ: Ինչպես լուսավորիչները, այնպես ել նրանք ամենից առաջ ուզում են փրկել վնչ թե մի վորոշ դասակարգ, այլ մի անգամից ամբողջ մարդկութեանը: Նրանց նման սրանք ել ուզում են իրականացնել բանականութեան և հավիտենական արդարութեան թագավորութեանը, բայց նրանց թագավորութեանն այնքան տարբեր

և լուսավորիչներին թաղավորութեանից, ինչպես յերկինքը յերկրից: Այս լուսավորիչների սկզբունքների համաձայն կազմակերպված բուրժուական աշխարհն էլ անբանական է և անարդար, և այդ պատճառով էլ նույնպես պետք է մերժելի զամբյուղը նիսովի, ինչպես ֆետրաբիզմն ու բոլոր նախկին հասարակական կարգերը: Վոր մինչև այժմ իսկական բանականութեանն ու արդարութեանը չեն իշխել աշխարհում, դրա պատճառն այն է միայն, վոր մարդիկ ճշտութեամբ չեն ճանաչել դրանք: Պակասում էր միայն այն հանճարեղ անհատը, վոր հանդես չէր յեկալ այժմ և վորը ճանաչեց ճշմարտութեանը, վոր նա հանդես չէր եկալ այժմ, վոր ճշմարտութեանը հենց այժմ ճանաչվեց, այդ բանը հանդես չի գալիս իրրեւ պատմական դարդացման կապակցութեանից անհրաժեշտութեամբ բղխող, անխուսափելի մի իրադարձութեան, այլ միայն իբրեւ պարզ պատահականութեան: Նա կարող էր նույնքան հաջողութեամբ 500 տարի առաջ ծնված լինել, և այն ժամանակ նա մարդկութեանը փրկած կլիներ 500 տարվա մոլորութեանից, կռիւներին և ատապախանքներին:

Մենք տեսնք, թե ինչպես XVIII դարի ֆրանսական փրկիստիաները, հեղափոխութեանը նախապատրաստողները, բանականութեանն էլին դիմում իրրեւ միակ պատմորին այն ամենի վերաբերմամբ, ինչ վոր դոյութեանն ունի Պետք է հիմնվեր մի բանական պետութեան, մի բանական հասարակութեան, իսկ ինչ վոր հակասում էր հավիտենական բանականութեանը, պետք է անխնա կերպով վերացվեր: Մենք տեսնք նմանապես, վոր այս հավիտենական բանականութեանն իսկապես վոչ այլ ինչ էր, յեթե մոջ իդեալականացրած բանականութեանը միջին քաղաքացու, վորը հենց այն ժամանակ դարդանում, բուրժուայի յեր վերածվում: Իսկ յերբ այժմ ֆրանսական հեղափոխութեանն իրականացրեց այս բանական հասարակութեանն ու բանական պետութեանը, սուր չեկալ, վոր նոր կազմակերպութեանները, վորքան էլ նրանք ավելի բանական էին նախկին ժիմակի համեմատութեամբ, ամենին էլ բացարձակապես բանական չեն: Բանականութեան պետութեանն ամբողջովին խորտակված էր: Թուսսոյի հասարակական դաշինքն իր իրականացումը ստեղ էր սարսափի¹² ժամանակաշրջանում, վորին իր սեփական քաղաքական ընդունակութեանների վերաբերմամբ հավատը կորցրած բուրժուազիան փրկութեան էր վորոնում նախ դերեկատորիայի ապականվածութեան մեջ և վերջապես նապոլեոնյան բանակալութեան¹³ պաշտպանութեան ներքո: Թուսսոյի հավիտենական խաղաղութեանն անվերջ աշխարհակալական պատերազմի յեր վերածվել: Ավելի լավ վիճակի մեջ չէր բանական հասարակութեանը: Աղքատի և հարստի հակադրութեանը, փոխանակ ընդհանուր բարոյութեան մեջ բռնակալութեան, ավելի էս սրվել էր այդ հակադրութեանը ծածկող համբարային և այլ արտոնութեանների, ինչպես և այն մեղմող յեկեղեցական բարե-

գործական հիմնարկների վերացումով. այժմ իրականություն դարձած «սեփականութեան ազատությունը» ֆեոդոլական շղթաներից մանր բուրժուայի և մանր գյուղացու համար մի ազատություն դարձավ խոշոր կապիտալի և խոշոր հողատիրութեան չափազանց հզոր մրցակցութեան շնորհիվ ճնշված մանր սեփականութեանը վաճառելու հենց այդ խոշոր տերերին, և այդպիսով մանր բուրժուայի և մանր գյուղացու համար վերածվեց ազատութեան՝ սեփականութեանից: Արդյունաբերութեան արագաթմափ զարգացումը կապիտալիստական հիմունքով՝ աշխատող մասսաների աղքատութեանն ու թշվառութեանը հասարակութեան գոյութեան անհրաժեշտ պայման դարձրեց: Կանխիկ վճարումը, կարելիք¹⁴ արտահայտութեամբ, հասարակութեան միակ կապը դարձավ: Վճարագործութեանների թիվն ավելանում էր տարեցտարի: Թեև տառջվա որը ցերեկով աներկյուղ կատարվող ֆեոդալական մոլութեանները վոչնչացված չեյին, բայց առժամանակ հետ եյին մղված. զրա փոխարեն ավելի ևս փարթամ ծաղկում եյին բուրժուական մոլութեանները, վորոնք մինչև այժմ միայն գաղտնի եյին՝ կատարվում: Առևտուրն ավելի ու ավելի խաբերայութեան էր վերածվում: Հիդափոխական նշանաբանի «յեղբայրութեանը» իրականացավ մրցակցութեան պայքարի խաբեպատիր խարդավանքերի ու նախանձի մեջ: Բռնի ճնշման տեղը բռնեց ապականութեանը, սրի տեղն, իրեն հասարակական կյանքի գլխավոր լծակի, բռնեց զրամբ: Առաջին գիշերվա իրավունքը ֆեոդոլական մագնատներից բուրժուական գործարանատերերին անցավ: Մինչև այն չլսված չափերով տարածվեց պոռնկութեանը: Մինչև անգամ ամուսնութեանն ըստ առաջնույն մնաց պոռնկութեան որևնքով ճանաչված ձեռնրա պաշտոնական ծածկույթը և բացի զրանից իրեն լրացնում էր հաճախակի ամուսնական անհավատարմութեամբ: Մի խոսքով՝ XVIII դարի լուսավորիչներին փայլուն խոստումների հետ համեմատած՝ «բանականութեան հաղթութեան» շնորհիվ ստեղծված հասարակական և քաղաքական հաստատութեանները դառն հիասթափութեան պատճառող ծաղրանկարներ դուրս յեկան: Պակասում եյին միայն մարդիկ, վորոնք հավաստեյին այդ հուսախաբութեանը, և նրանք յեկան նոր դարապիսին: 1802 թվին լույս տեսան Սեն-Սիմոնի «Ժընեվյան նամակները». 1808 թվին լույս տեսավ Ֆուրբիյի առաջին յերկը, թեև նրա թեորիայի հիմքը 1799 թվից է սկսվում. 1800 թվականի հունվարի 1-ին Ռոբերտ Ուեռնն ստանձնեց Նյու-Լանարկի կառավարութեանը:

Բայց այդ ժամանակները արտադրութեան կապիտալիստական յեղանակը, իսկ նրա հետ միասին նաև բուրժուազիայի և պրոլետարիատի միջև յեղած հակադրութեանը, դեռևս շատ անզարգացած դրութեան մեջ էր: Խոշոր արդյունաբերութեանը, վոր հենց նոր միայն ծագել էր Անգլիայում, Ֆրանսիայում դեռ անհայտ էր: Սակայն հենց խոշոր արդյունաբերութեանն է, վոր մի կողմից՝ զարգացնում է այն

կոնֆլիկտները, վորոնք հարկադրական անհրաժեշտություն են դարձնում արտադրութեան յեղանակի հեղաշրջումը, նրա կապիտալիստական բնույթի վերացումը, — կոնֆլիկտներ վճռելիս նրա արտադրած դասակարգերի միջև, այլև հենց նրա ստեղծած արտադրողական ուժերի և փոխանակման ձևերի միջև, — և մյուս կողմից՝ զարգացնում և այս հակադասական արտադրողական ուժերի միջև նաև այն միջոցները, վորոնք պետք և լուծեն այդ կոնֆլիկտները: Յեթե ուրեմն շուրջ 1800 թվականին նրա հասարակակարգից բխող կոնֆլիկտները հենց նոր էլին ծնունդ առնում, ապա այս բանն էլ ավելի մեծ չափով վերաբերում և նրա լուծման համար անհրաժեշտ միջոցներին: Յեթե Պարիզի չքավոր մասսաները սարսափի ժամանակաշրջանում մի վայրկյան կարողացան զրավել իշխանութունը և բուրժուական հեղափոխութունը հաղթանակի հասցնել նույնիսկ բուրժուակարգի իրեն հակառակ, ապա նրանք զրանով միայն ապացուցեցին, թե վորքան անհնարին երևայն ժամանակվա պարագաներում նրանց իշխանութունը յերկարատև ժամանակով: Այս ընչադուրկ մասսաներից իրրև մի նոր դասակարգի արժատ րաժանվող պրոլետարիատը դեռ բոլորովին անընդունակ եր ինքնուրույն քաղաքական գործողութեան համար և ներկայացնում եր իրենից իրրև մի ճնշված, տառապող դաս, ինքն իրեն ոգնելու անընդունակ լինելով՝ նրան առառավելն հնարավոր եր ոգնություն հասցնել միայն դրսից, վերևից:

Պատմական այս կացութեան ազդեցությունը տիրապետում եր նաև սոցիալիզմի հիմնադիրների վրա: Կապիտալիստական արտադրութեան տհաս վիճակին, դասակարգերի փոխհարաբերութեան տհասութեանը համապատասխանում էլին տհաս թեորիաները: Այն հասարակական խնդիրների լուծումը, վորոնք դեռևս թագնված էին անզարգացած անտեսական հարաբերությունների մեջ, մարդիկ պետք է հնարելին իրենց գլուխներից: Հասարակութունը միայն թերություններ եր ներկայացնում. նրանց վերացումը մտածող բանականութեան խնդիրն եր: Հարցն այն եր, վոր հասարակակարգի մի նոր, ավելի կատարյալ սխտեմ հնարվի և այն հասարակութեան վզին փաթաթվի դրսից, պրոպագանդի միջոցով, ըստ հնարավորութեան որինակելի փորձերի ոգնութեամբ: Սոցիալական այս նոր սխտեմներն սկզբից ևեթ դատապարտված էին ուտոպիա մնալու. վորքան ավելի մշակվում էին նրանց մանրամասնությունները, այնքան ավելի պետք է նրանք զուտ ցնորամտութեան վերածվեին:

Քանի վոր այս մի անգամ արդեն հաստատված բան և, մենք այլևս վոչ մի վայրկյան կանգ չենք առնի այդ փորձերի այս, այժմ արդեն ամբողջութեամբ անցյալին պատկանող կողմի վրա: Այս բանը մենք կարող ենք գրական մանր փերեզակներին թողնել, վորպեսզի նրանք, այսօր միայն զվարճալի այդ ցնորքների շուրջը մանրակրկիտ

ուսումնասիրութեանն և կատարելով՝ շեշտեն իրենց սեփական՝ զգաստ մտածելակերպի առավելութեանը այդպիսի «ցնորամտութեան» հանդեպ։ Այլևի մեծ սիրով մենք ուրախանում ենք այն հանճարեղ մտքերի ստղմերի ու զաղտաբերների համար, վորոնք ամենուրեք դուրս են ցատտում ցնորական կեզեի տակից և վորոնց համար այն ֆիլիստեինները կույր են։

Սեն-Սիմոնը Ֆրանսական մեծ հեղափոխութեան զաւակն էր, վորի բռնկման ժամակակ նա դեռ յերեսուն տարեկան էլ չկար։ Հեղափոխութեանը յերրորդ դասի հաղթութեանն էր, այսինքն՝ ազգի խոշոր, արտադրութեան և առևտրի մեջ դրադիւմ մասսայի հաղթութեանը մինչև այն արտոնյալ դատարկապոս դասերի—աղնվականութեան և հողեօրականութեան դեմ։ Բայց յերրորդ դասակարգի հաղթութեանը շուտով դուրս յեկավ իբրեւ այս դասի միայն մի փոքր մասի բացառիկ հաղթութեանը, իբրեւ քաղաքական իշխանութեան նվաճումն այդ դասի հասարակականորեն արտոնյալ շերտի, ունեւոր բուրժուացիայի կողմից։ Յեւ այն էլ այս բուրժուացիան արագութեամբ զարգացել էր դեռ հեղափոխութեան ընթացքում աղնվականութեան և յեկեղեցու հոգերի բռնազրաւման և ապա վաճառման շուրջը կատարված չարաշահութեան միջոցով, ինչպես նաեւ բանակի մատակարարները՝ ազգին խարկելու միջոցով։ Հատկապես հենց այս խաբէրանքի իշխանութեանն էր, վոր գիրեկտորիայի ժամանակ Ֆրանսիան ու հեղափոխութեանը կործանման դուռը հասցրին և դրանով նապոլեոնին առիթ նւիրին իր սկտական հեղաշրջման համար։ Այդպիսով Սեն-Սիմոնի գլխում յերրորդ դասի ու արտոնյալ դասերի հակադրութեանն ընդունեց «բանվորները» ու «զատարկապորտները» հակադրութեան կերպարանքը։ Դատարկապորտները, սրանք վնչ միայն հին արտոնյալներն էին, այլ նաեւ այն բոլորը, վորոնք ապրում էին գննտաներով, առանց մասնակցելու արտադրութեան և առևտրի մեջ։ Իսկ «բանվորները», սրանք վնչ միայն վարձու բանվորներ էին, այլ նաեւ գործարանատերերը, վաճառականները, բանկիրները։ Վոր դատարկապորտները կորցրել էին մտավոր ղեկավարութեան և քաղաքական իշխանութեան ընդունակութեանը, այդ արդեն հաստատ էր և վերջնականապես ապացուցված հեղափոխութեամբ։ Վոր չքավորներն այս ընդունակութեանը չունեցին, այս բանը Սեն-Սիմոնին ապացուցված էր թվում սարսափի ժամանակաշրջանի փորձով։ Հապա թվ պետք է ղեկավարեր ու իշխեր։ Սեն-Սիմոնի կարծիքով՝ պետք է ղեկավարեր ու իշխեր գիտութեանն ու արդյունաբերութեանը, վորոնք կապված էին մի նոր կրօնական կապով, մի անպայման միասնական և խստորեն հիւրաբխական «նոր քրիստոնեայութեան», վոր պետք է վերականգնէր կրօնական հայացքների ու փորձագիտի ժամանակներից խզված միասնութեանը։ Բայց գիտութեանը — դրանք գիտնականներ էին. իսկ արդյունաբերութեանը —

նր — առաջին հերթին ակտիվ բուրժուաները, վաճառականները, բանկիրները, շինչա և, այս բուրժուաները պետք է մի տեսակ հրապարակական պաշտոնյաներ, հասարակական հավատարմատարներ դառնային, բայց բանվորների վերաբերմամբ նրանք պետք է հրամանատարական, ինչպես նաև տնտեսապես արտոնյալ դիրք պահպանեին։ Առանձնապես բանկիրները պետք է կոչված լինեյին կարգավորելու ամբողջ հասարակական արտադրությունը՝ վարել կարգավորելու միջոցով — Այս հայացքը միանգամայն համապատասխանում էր այն դարաշրջանին, յերբ Թրանսիայում հենց նոր էր սկսել առաջանալ խոշոր արդյունաբերությունն ու նրա հետ նաև բուրժուազիայի ու պրոլետարիատի հակադրությունը։ Բայց ինչ վոր Սեն-Սիմոնն առանձնապես շեշտում է, այդ հետևյալն է. նրան ամենուրեք է միշտ ամենից առաջ հատաքերքում է «ամենաբազմաթիվ և ամենաաղքատ դասակարգին» վիճակը (la classe la plus nombreuse et la plus pauvre)։

Սեն-Սիմոնն արդեն իր ժընեյյան նամակներում այն սկզբունքն է դնում, թե Երբուր մարդիկ պարտավոր են աշխատել։ Միևնույն ժամանակ մեջ նա արդեն դիտել, վոր սարսափել իշխանությունը ընչադուրի մասսաների իշխանությունն էր։ «Նայեցե՛ք, — ձայն է առել նա վերջիններիս, — թե ինչ տեղի ունիցավ Թրանսիայում այն ժամանակ, յերբ ձեր ընկերներն էյին իշխում այնտեղ. նրանք չով ստեղծեցին այնտեղ։ Բայց Փրանսիական հեղափոխությունն իբրև մի դասակարգային կռիվ ըմբռնելը և այն էլ դասակարգային կռիվ վնչ միայն ազնվականության ու բուրժուազիայի միջև, այլ ազնվականության, բուրժուազիայի ու ընչազուրկների միջև, 1802 թվին մի չափազանց հանճարեղ հայտնադործում էր։ 1816 թվին Սեն-Սիմոնը հայտարարում է, թե քաղաքականությունը արտադրության դիտությունն և և կանխադաշնակում է, վոր քաղաքականությունը լիովին պետք է կլանվի եկոնոմիկայի մեջ։ Յեթև այստեղ սաղմոսյին դրությամբ հանդես է դառնում այն հասկացողությունը, թե տնտեսական դրությունը քաղաքական հաստատությունների բազիսն է, ապա այստեղ արդեն պարզ կերպով արտահայտված է այն միտքը, թե քաղաքական իշխանությունը մարդկանց վրա պետք է վերածվի կառավարման՝ իրերի վերաբերմամբ և պետք է ղեկավարի արտադրության պրոցեսները, ուրեմն հանդես է գալու վերջերս այնքան մեծ ազդեկով արտահայտված ճակատության վերացումը։ Նույնպիսի դերազանցությամբ իր ժամանակակիցների համեմատությամբ Սեն-Սիմոնը 1814 թվին, դաշնակիցների Պարիզ մոնեյուց անմիջապես հետո, և դեռ 1815 թվին, հալլուր օրերի պատերազմների¹⁵ ընթացքում, հուշակում է, թե Յեվրոպայի հաջողակ դարդացման և խաղաղության միակ յերաշխիքը Թրանսիայի դաշնակցությունն է Անգլիայի և յերկրորդ հերթին՝ այդ յերկու յերկրների դաշնակցությունն և Գերմանիայի հետ։ 1815 թվականի Փրանսացիներին Վա-

անբընդ չի հաղթողները հետ դաշնակցութեան քարոզելու համար խեղ-
պես վոր նույնքան արիւթեւուն եր հարկավոր, վորքան պատմական
հեռատեսութեւն:

Յեթն մենք Սեն-Սիմոնի մոտ հանճարեղ հեռատեսութեւն ենք
հայտնագործում, վորը շնորհիւ հեապա սոցիալիստները գրեթե բոլոր
վոչ խիստ տնտեսադիտական գաղափարները կան նրա մոտ սողմնային
գրութեամբ, ապա մենք Ֆուրքիյի մոտ գտնում ենք գոյութեւն ունե-
ցող հասարակարդի մի խեղական ֆրանսականորեն սրամիտ, բայց
այդ պատճառով վոչ պակաս խորաթափանց քննադատութեւն: Ֆու-
րքին բուրժուազիային, նրա վոգեշունչ մարդարեւերին նախքան հեղա-
փոխութեւնը եւ նրա շահագրգռած շողքորթող գովերգուներին հե-
ղափոխութեւնից հետո՝ բռնում եւ հենց նրանց խոսքերով: Նա անո-
ղորմ կերպով մերկացնում եւ բուրժուական աշխարհի նյութական եւ բա-
րոյական թշվառութեւնը. դրա կողքին նա դնում եւ ինչպես նախկին
լուսավորիչները փայլուն խոստումները հասարակութեւն մասին, վորի
մեջ միայն բանականութեւնն եւ թաղավորելու, բոլորին յերջանկաց-
նող քաղաքակրթութեւն մասին, մարդկային անսահման կատարելա-
գործման ընդունակութեւն մասին, այնպես նաեւ ժամանակակից բուր-
ժուա-խղիղողները ամեն ինչ գեղազարդող դարձվածքները. նա ապա-
ցուցում եւ, թե ինչպես ամենավերամարձ ֆրադին ամենուրեք ամե-
նաողորմելի իրականութեւնն եւ համապատասխանում, եւ կծու ծաղրի
առարկա յի դարձնում ֆրադի այս անդամանելի ֆրիսկոն: Ֆուրքին
միայն քննադատ չեւ, նրա մշտական զվարթ բնութեւնը նրան յեր-
գիծարան եւ դարձնում, եւ այն ել՝ բոլոր ժամանակների ամենամեծ
յերգիծարաններից մեկը: Հեղափոխութեւն անկման շնորհիւ ծաղկած
խաբերայական չարաշահութեւնը, ինչպես նաեւ այն ժամանակվա
ֆրանսական առևտրի ընդհանուր փերեզակային բնույթը նա նկարա-
գրում եւ վարպետորեն եւ զվարճայի կերպով: Ե՛լ ավելի՛ մեծ վարպե-
տութեամբ եւ քննադատում նա սեռական հարաբերութեւնների բուր-
ժուական կառուցվածքն ու կնոջ գրութեւնը բուրժուական հասարա-
կութեւն մեջ: Նա առաջին անգամ այն միտքն եւ արտահայտում, թե
վորեւ տվալ հասարակութեւն մեջ ընդհանրական ազատագրութեւն
բնական չափանիշը կանանց ազատագրութեւն աստիճանն եւ Սակայն
ամենից ավելի փառահեղ եւ դառնում Ֆուրքին հասարակութեւն պատ-
մութեւն իր ըմբռնման մեջ: Այդ պատմութեւն ամբողջ նախորդ ըն-
թացքը նա բաժանում եւ դարգացման չորս աստիճանների—վայրենու-
թեւն, բարբարոսութեւն, նահապետական շրջան, քաղաքակրթու-
թեւն. վերջինս համատեղվում եւ այժմ այսպես կոչված բուրժուական
հասարակութեւն, ուրեմն 16-րդ դարից մտցրած հասարակարդի հետ:
Ֆուրքին ապացուցում եւ, թէ վոր քաղաքակրթական կարգը ամեն մի
մոլութեւն, վոր բարբարոսութեւն ժամանակ կատարվում եւ պարզ

կերպով, դարձնում և բարդ, յերկիմաստ, յերկդիմի, կեղծալիք կենսաձև», վոր քաղաքակրթութիւնը շարժւում և մի «կախաբաղական շրջանի մեջ, այնպիսի հակասութիւններն մեջ, վոր նա ստեղծում և միշտ խնորո, առանց նրանք հաղթահարել կարողանալու, այնպես վոր նա միշտ ձեռք և բերում հակառակն այն բանի, ինչ վոր ուզում և ձեռք բերել կամ ցույց և տալիս, թե ուզում և ձեռք բերել։ Այնպես վոր, որինակի համար, «քաղաքակրթութեան մեջ աղքատութիւնը ծագում և հենց լիառատութիւնից»։ Ինչպես տեսնում ենք, Ֆուբյեն նույնպիսի վարակաւթյամբ և գործադրում դիալեկտիկան, ինչպես նրա ժամանակակից Հեգելը։ Նույնպիսի դիալեկտիկայով նա պնդում է,—մարդկային անսահման կատարելագործման ընդունակութեան մասին յեղած դուշմանների հանդեպ,—վոր յուրաքանչյուր պատմական փուլ ունի իր ինչպես վերընթաց, այնպես ել վայրընթաց ճյուղը և այս հայեցակերպը գործադրում և նաև ամբողջ մարդկութեան ապագայի վերաբերմամբ։ Ինչպես վոր Կանտը յերկրագնդի ապագա կործանումը մտցնում և բնագիտութեան մեջ, այնպես ել Ֆուբյեն մարդկութեան ապագա կործանումը մտցնում և պատմահայեցողութեան մեջ։

Մինչդեռ Ֆրանսիայում հեղափոխութեան փոթորիկն ավում—սըրբում եր յերկիրը, Անգլիայում տեղի յեր ունենում մի ավելի խաղաղ, բայց վոչ պակաս հզոր հեղաշրջում։ Գոլորշին և գործիք—մեքենաները մասնութակտուրան ժամանակակից խոշոր արդյունաբերութեան վերածնցին և դրանով հեղափոխականացրին բուրժուական հասարակութեան ամբողջ հիմքը։ Մասնութակտուրայի շրջանի զարգացման դանդաղ—քնիած ընթացքը վերածվեց արտադրութեան մի իսկական փոթորիկի ու գրոհի շրջանի։ Շարունակ աճող արագութեամբ կատարվեց հասարակութեան բաժանումը խոշոր կապիտալիստների և ընչազուրկ պրոլետարների, վորոնց արանքում, փոխանակ նախորդ կայուն միջին դասակարգի, այժմ իր յերերուն գոյութիւնն եր պահպանում արհեստավորների ու մանր առևտրականների փոփոխական մասսան, բնակչութեան ամենաանկայուն մասը։ Արտադրութեան նոր յեղանակը դեռևս իր վերընթաց զարգացման առաջին աստիճաններում եր գտնւում. այն դեռևս արտադրութեան նորմալ, կանոնավոր, տվյալ պարագաներում միակ հնարավոր յեղանակն եր։ Բայց արդեն այն ժամանակ նա աղաղակող սոցիալական արատներ ստեղծեց. անտուն—անտեր բնակչութեան կուտակում խոշոր քաղաքների վատթարագոյն բնակավայրերում — ավանդութեան բոլոր հնամենի կապերի, նահապետական ստորադասութեան, ընտանիքի լուծում—առանձնապես կանանց և յերեխաների չափազանց աշխատանք, սարսափ առաջացնող չափով—բանվոր դասակարգի մասսայական բարոյազրկում, վոր հանկարծակի բոլորովին այլ պայմանների մեջ եր ընկել, գոլորշի քաղաք, յերկրագործութիւնից՝ արդյունաբերութեան մեջ, կայուն կյանքից՝ ամեն ուր փոխվող անհաստատ կենս-

ստացալ մաններն մեջ եր նկատելի Ահա այդ ժամանակ իբրև ակֆորմա-
տոր հանդես յեկալ մի քսանինն տարեկան գործարանատեր, մի ժարդ,
վոր մինչև վեհութեան հասնող մանկական պարզ բնավորութեան ու-
ներ և միեւնոյն ժամանակ մարդկանց այնպիսի դեկավար եր ի ծնե,
ինչպես քչերը: Ռորերա Ռուենը յուրացրիւ եր XVIII դարի լուսավո-
րիչների մտաբերալիստական ուսմանքը, վորի համաձայն մարդու
բնավորութեանը արդյունք և մի կողմից բնածին կազմակերպութեան
և մյուս կողմից՝ մարդուն իր ամբողջ կյանքում, բայց առանձնապես
զարգացման շրջանում, շրջապատող հանգամանքների: Նրա դասակից-
ների մեծամասնութեանը արդյունաբերական հեղաշրջման մեջ միայն
անկարգութեան ու քառա եր տեսնում, վոր հարմար եր պղտոր ջրում
ձուկ վորսալու և արագ հարստանալու համար: Ռուենը նրա մեջ հար-
մար առիթ եր տեսնում իր սիրած դադախարը գործողքելու և զբանով
քառսի մեջ կարգ մտցնելու համար: Արդեն Մանչեստրում նա այդ
բանը մեծ հաջողութեամբ փորձել եր իբրև դիրեկտոր 500-ից ավելի
բանվոր ունեցող մի ֆաբրիկայում: 1800 — 1829 թիվը նա ղեկավա-
րում եր Նյու Լանարիկի (Շոտլանդիայում) խոշոր բամբակամանարանը
իբրև ձեռնարկութեան ղեկավար ընկերակից, միեւնոյն իմաստով, բայց
գործողութեան ել ավելի մեծ ազատութեամբ և այնպիսի հաջողու-
թեամբ, վոր նրան յեկրոպական հոչակ պարզեց: Նյու Լանարիկի հե-
տըզհետե մինչև 2500 հոգի աճած, սկզբնապես ամենախառն և մեծ մա-
սամբ խիստ զեղծաբարո տարրերից կազմված բնակչութեանը նա մի
միանգամայն որինակելի գաղութի վերածեց, վորի մեջ անձանոթ բաներ
եյին հարեցողութեանը, վոստիկանութեանը, դատաւորները, դատա-
վարութեանները, աղքատների խնամատարութեանը, բարեգործութեան
կարիքը: Յեւ այն. ել՝ նա այդ նպատակին հասալ պարզապես նրանով,
վոր բանվորներին մարդավայել պայմանների մեջ դրեց և հատկապես
աճող սերնդին սկսեց խնամքով կրթել տալ: Նա յեր մանկական դրու-
րոցների հեղինակը և առաջին անգամ բաց արեց այդ դպրոցները Նյու
Լանարիկում: Յերեսաները յերկու տարեկան հասակից դպրոց եյին
գնում, վորտեղ նրանք այնքան լավ ժամանակ եյին անցկացնում, վոր
նրանց դժգոհութեամբ միայն կարելի չեր լինում տուն տանել: Մինչ-
դեռ նրա մրցորդներն որական 13-ից մինչև 14 ժամ եյին աշխատեց-
նում, Նյու Լանարիկում միայն 10½ ժամ եյին աշխատում: Յերբ ըստ-
րակի ճշնամամբ հարկադրեց չորս ամսով կանգնեցնելու աշխատանք-
ները, անդրադ բանվորներին վճարվում եր նրանց լրիւ աշխատավարձը:
Յեւ այնուամենայնիւ գործարանն իր արժեքն ավելի քան կրկնապատ-
կել եր և մինչև վերջն ել իր տերերին առատ վաստակ եր տալիս:

Սակայն Ռուենը գոհ չեւ այդ բոլորով: Այն դոյավեճակը, վորի
մեջ նա դրել եր իր բանվորներին, նրա կարծիքով դեռ բոլորովին ել
մարդավայել վիճակ չեւ, ամարդիկ իմ սարուկներն եյին: Այն համե-

մատարար նպատակով որ պայմանները, վորոնց մեջ նա դրել էր իր բան-
վորներին, դեռ շատ ու շատ հեռու էին՝ բնավորութեան և բանականու-
թեան բազմակողմանի բանական դարգացում, եւ չենք ասում ազատ
կենսադործունէութեան թույլ տալու համար: «Յեւ վայնուամենայնիւ
այդ 2500 հոգու աշխատող մասը հասարակութեան համար ճիշտ նույն-
քան իրական հարստութեան էր արտադրում, վորքան հազիւ թե կես
դար առաջ 600.000 հոգուց բազկացած բնակչութեանն արտադրել կտ-
րողանար: Յետ ինձ հաջցնում է ի. ինչ և ինչում 2500 հոգու սպառած
հարստութեան և այն հարստութեան տարբերութեանը, վոր պետք է
սպառելին 600 000 հոգին: Պատասխանը պարզ էր. այն դործադրվել
էր գործարանի տներին 5¹⁰ հիմնական կապիտալի համար վճարելու և
բացի այդ ավելի քան 300 000 ֆունտ ստերլինգ (6000 000 մարկ) վա-
սակ տալու նրանց: Իսկ ինչ վոր վերաբերում էր Նյու Լանարկին, այն
էլ ավելի մեծ չափով վերաբերում էր Անգլիայի բոլոր ֆաբրիկաներին:
«Առանց այս նոր, մեքենաների ստեղծած հարստութեան չէին կարող
մղել պատերազմները նապոլեոնին տաղալիլու և հասարակութեան կազ-
մակերպման արհեստկրատական սկզբունքները պահպանելու համար:
Իսկ այս նոր գործութունը այնուամենայնիւ բանվոր զստակարգի
ստեղծագործութեանն էր*): Այդ պատճառով նրան էին պատկանում
նաեւ պտուղները: Նոր վիթխարի արտադրողական ուժերը, վորոնք
մինչև այժմ ծառայում էին միայն անհատների հարստացման և մաս-
սաների ստրկացման համար, Ուեկնի կարծիքով պետք է հասարակու-
թեան վերակառուցման համար հիմք դառնային և նրանց կոչումն էր,
իրրէ բոլորի ընդհանուր սեփականութեան, աշխատել միայն բոլորի
ընդհանուր բարորութեան համար:

Այդպիսի զուտ գործնական յեղանակով, իրրէ այսպես կոչված վա-
ճառականական հաշվարկման պտուղ, ծագեց Ուեկնի կոմունիզմը: Իր
այդ գործնական ընուլթը նա պահպանեց ըստ ամենայնի: Այդպես,
1823 թվին Ուեկնն առաջարկեց իրլանդացիների թշվառութեանները
վերացնել կոմունիստական գաղութների միջոցով և ներկայացրեց ման-
րամասն հաշվարկումներ հիմնական ծախքերի, տարեկան ծախքերի ու
յենթագրելի յեկամուռաների մասին: Այդպես, նրա ապագայի վերջնա-
կան պլանի մեջ մանրամասնութեանների տեխնիկական մշակումը,
նախագծերը, դժագրումներն ու թռչնասլաց բարձրութեանից յերեացող
տեսարանը նեղառայլ կատարված և այնպիսի հմուտությամբ, վոր յեթե
ընդունենք Ուեկնի հասարակութեան ռեֆորմի մեթոդը, նույնիսկ մաս-

* Քաղվածք «The revolution in mind and practice» («Հեղափոխութեանը
մտքով և գործնականում») հուշադրից, վոր ուղղված էր Յեկոբայի բոլոր Վերմիք
հանքապետականներին, կոմունիստներին և սոցիալիստներին» և Ֆրանսիայի
1848 թ. մամանակավոր կառավարութեանը, բայց նաեւ Վիկտորիա թագուհուն ու
նրա պատասխանատու խորհրդատուներին»:

նազդ՝ ասիւնն տնայեալից չի՛ն բան կարելի կլինէր ասել մեքոսման
նություններ՝ դեմ.

Կոմունիզմին տնցնելն Ուսենի կյանքի դարձակետն էր: Քանի
վոր նա հանդես եր գալիս միայն իրեն մարդասեր, նա բացի հարբս-
տությունից, հովանությունից, պատվից ու փառքից ուրիշ բան չէր
ստանում: Նա ամենաժողովրդական մարդն էր Յեփրոպայում: Նրան
բարեհաճությամբ լսում էին վնչ միայն նրա ընկերները միևնույն
դասից, այլև տեսական գործիչներն. ու իշխանները: Բայց յերբ նա
ասպարեղ չեկավ իր կոմունիստական թերթներով, այն ժամանակ
խնդիրն իսկույն փոխվեց: Նրա կարծիքով՝ յերեք մեծ արգելքներ կա-
յին, վորոնք ամենից առաջ խափանում էին հասարակական ունջորմի
ուղին. դրանք էին—մասնավոր սեփականութունը, կրոնը և ամուս-
նության այժմյան ձևը: Նա գիտեր, թե ինչ եր սպասելու իրեն, յիթե
նա հարձակվեր այդ բաների վրա. ընդհանուր մերժումն պաշտոնական
հասարակության կողմից, իր ամբողջ սոցիալական գիրքի կորուստը:
Բայց նա չվարանեց անխնա կերպով հարձակում գործելու նրանց վրա,
և տեղի ունեցավ այն, ինչ վոր նա նախատեսել էր: Վատրված պաշ-
տոնական հասարակությունից, բոլորովին անտեսված մամուլի կողմից,
աղքատացած՝ կոմունիստական անհաջող փորձերի շնորհիվ Ամերիկա-
յում, վորոնց համար նա իր ամբողջ կարողութունը գոհեց, նա գիմեց
անմիջականորեն բանվոր զսպակարգին և նրա շարքերում գործում եր
դեռ յերեսուն տարի ևս: Բոլոր հասարակական շարժումները, բոլոր ի-
րական առաջադիմությունները, վորոնք տեղի յին ունեցել Անգլիա-
յում հոգուտ բանվորների, կապված են Ուսենի անվան հետ: Այդպես,
1819 թվին, հնգամյա լարված աշխատանքից հետո նա անցկացրեց
կանանց և յերեխաների աշխատանքը գործարաններում սահմանափա-
կող առաջին օրենքը: Այդպես, նա նախադասեց առաջին կոնգրեսին,
վորտեղ ամբողջ Անգլիայի արեղ-յունիոնները միացան և մի միակ
մեծ արհեստակցական միություն ¹⁶ կազմեցին: Այդպես, նա, իբրև անց-
ման միջոցառումներ դեպի հասարակական լիակատար կոմունիստական
կազմակերպումը, մտքեց, մի կողմից՝ կոոպերատիվ ընկերություննե-
րը (սպառողական և արտադրական միություններ), վորոնք այն ժա-
մանակվանից սկսած՝ համենայն դեպս գործնական ապացույց տվին,
վոր թե՛ վաճառականը և թե՛ գործարանատերը շատ ավելորդ անձեր են.
մյուս կողմից՝ նա մտքեց բանվորական բազարները. սրանք հիմնարկ-
ներ էին աշխատանքի արդյունքները փոխանակելու համար աշխա-
տանքի թղթադրամի միջոցով, վորի միավորը աշխատաժամն էր: Այս
հիմնարկներն անհրաժեշտաբար պետք է անհաջողութուն կրեյին, բայց
նրանք լիովին կանխում էին շատ հետագա ժամանակների պրուդո-
նյան փոխանակման բանկը ¹⁷, թեև սրանից հենց նրանով էին տարբեր-
վում, վոր հանդես չեյին գալիս իբրև բոլոր հասարակական չարիքնե-

չի ոնդհանաւան համադրման, այլ ներկայացնում է միայն առաջին քայլը դեպի հասարակութեան մը շատ աւելի տրամադական վարակաւորում:

Ուսուցիչները հայեցակերպը յերկար ժամանակ տիրապետում եր 19-րդ դարի սոցիալիստական պատկերացումները մեջ և դեռ այժմ եւ տիրապետում և մասամբ: Նրա կողմն էին դեռ մինչև մոտ ժամանակներս բոլոր ֆրանսական և անգլիական սոցիալիստները, նրան է պատկանում նաև նախկին գերմանական կոմունիզմը, Վալտերին եւ ներառելով: Սոցիալիզմը նրանց բոլորի համար եւ բացարձակ ճշմարտութեան, բանականութեան և արդարութեան արտահայտութեանն է, և բաժանում է միայն հայտնաբերածի, վերաբերելի իր սեփական ուժով աշխարհը նվաճել, վերափոխել բացարձակ ճշմարտութեանն անկախ և ժամանակից, տարածութեանից և մարդկային պատմական զարգացումից, ապա ուրեմն լոկ պատահականութեանն է, թե յերբ և վերանորոգել հայտնաբերածի այն: Ըստ վերոյս քայլեր ճշմարտութեանը, բանականութեանն ու արդարութեանը դարձյալ տարբեր են յուրաքանչյուր դպրոցի հիմնադրել մոտ. և քանի վեր ամեն մեկի մոտ բացարձակ ճշմարտութեան, բանականութեան և արդարութեան առանձին տեսակը դարձյալ պայմանավորված է նրա սուբյեկտիվ իմացականութեամբ, նրա կենսապայմաններով, նրա ունեցած գիտելիքների ու մտածողութեան վարժութեան չափով, ապա ուրեմն բացարձակ ճշմարտութեանները այս կոնֆլիկտի մեջ վոչ մի այլ լուծում հնարավոր չէ բացի նրանից, վեր նրանք փոխադարձաբար հարթեն միմյանց: Այստեղ, սակայն, չէր կարող ուրիշ բան ստացվել, բացի մի տեսակ եկեղեցիական միջին-սոցիալիզմից, վեր և իրապես մինչև այսօր եւ իշխում է սոցիալիստ բանվորների մեծամասնութեան գլուխներում Ֆրանսիայում և Անգլիայում. այդ սոցիալիզմը մի ծայրահեղ, բազմազան յերանգավորումներ թույլ տվող, խառնուրդ է դաճազան հերձվածների հիմնադրների սակավ գալթակողութեան առաջացնող քննադատական տրտահայտութեաններից, տեսնաագիտական թիզիսներից ու ապագա հասարակութեան պատկերացումներից. մի խառնուրդ, վեր ավելի ևս հեշտութեամբ է գլուխ գալիս, քանի վեր նրա առանձին բաղկացուցիչ մասերի վերադասութեան սուր անկյունները վերաբանութեան հոսանքի մեջ այնպես են հղկվում, ինչպես կլոր խճաքները գետակում: Սոցիալիզմը գիտութեանը դարձնելու համար ամենից առաջ պետք եր այն իրական հողի վրա դնել:

II

Մինչ այն՝ 18-րդ դարի ֆրանսական փրիսոփայութեան կողքին և նրանից հետո առաջ յեկավ գերմանական նոր փրիսոփայութեանը, վեր իր լրումը գտավ Հեգելի մեջ: Այդ փրիսոփայութեան ամենամեծ

ծառա՝ությունն այն է, վոր նա գիտելիտիկան վերակենդանացրեց իրրե մտածողության բարձրագույն ձևի Հին հունական փիլիսոփաները բոլորն էլ ի ծնե, բնածին գիտելիտիկներ էյին և ամենահամապարփակ գլուխը նրանց մեջ, Արիստոտելը, արգեն ուսումնասիրել էր գիտելի-տիկական մտածողության ամենաեյական ձևերը՝ Նոր փիլիսոփայու-թյունն, Ենդհատական, թեև նրա մեջ էլ գիտելիտիկան փայլուն ներ-կայացուցիչներ ուներ (որինով՝ Դեկարտն ու Սպինոզան), առանձնա-պես անգլիական ազդեցության շնորհիվ ավելի ու ավելի ամրապնդվել էր այսպես կոչված մետաֆիզիկական մտածելակերպի մեջ, վորը գրե-թե բացառապես իշխում էր նաև 18-րդ դարի Ֆրանսացիների վրա, գոնե նրանց հատկապես փիլիսոփայական գրվածքներում։ Իսկական փիլիսոփայությունից դուրս՝ նրանք նաեւնպես ի վիճակի էյին գիտ-ելիտիկայի վերաբերյալ որինակելի յերկեր արտագրելու հիշատակներ միայն Դիդրոյի «Le neveu de Rameau»-ն և Ռուսսոյի գրվածքը «Անհամարության ծագման մասին մարդկանց մեջ»։ Մենք այստեղ հակիրճ կերպով մատնանշում ենք մտածողության այդ յերկու մեթոդ-ները եյական գծերը։

Յերբ մենք մտածական գիտողության ենք յինթարկում բնու-թյունը, կամ մարդկության պատմությունը, կամ մեր հոգեկան գոր-ծունեյությունը, ապա մեր աչքերին ամենից առաջ պատկերանում է կապակցությունների ու փոխազդեցությունների մի այնպիսի միա-հյուսում, վորի մեջ վոչինչ չի մնում, ինչ վոր էր, ինչպես վոր էր և վորտեղ վոր էր, այլ ամեն ինչ շարժվում է, փոփոխվում, լինում է և անհետանում։ Ուրեմն մենք ամենից առաջ տեսնում ենք Ենդհանուր պատկերը, վորի մեջ մանրամասնությունները դեռևս ավելի կամ պա-կաս չափով հետ են քաշվում, մենք ավելի ուշք ենք դարձնում շարժ-ման, անցումների, կապակցությունների վրա, քան թե այն բանի վրա, ինչ վոր շարժվում է, անցում կատարում կամ կապակցվում։ Այս նախնական, նախի, բայց ըստ եյության ճիշտ հայացքն աշխարհի մա-սին հին հունական փիլիսոփայության հայացքն է և ամենից առաջադրդ կերպով արտահայտել է այն Հերակլիտը. ամեն ինչ կա և միևնույն ժամանակ չկա, վորովհետև ամեն ինչ հոսում է, ամեն ինչ գտնվում է մշտական փոփոխման, մշտական լինելության և անհետացման մեջ։ Սակայն այս հայացքը, վորքան էլ այն ճիշտ կերպով է ըմբռնում յի-րուրեյների ամբողջական պատկերի Ենդհանուր ընդլթը, այնուամե-նայնիվ բավական չե այն մանրամասնությունները բացատրելու հա-մար, վորոնցից կազմվում է այս ամբողջական պատկերը։ Իսկ քանի վոր մենք այդ մանրամասնությունները չենք ճանաչում, մեղ համար պարզ չի լինի նաև ամբողջական պատկերը։ Այդ մանրամասնություն-ները ճանաչելու համար մենք պետք է նրանց անջատենք իրենց բնա-կան կամ պատմական կապակցությունից և ուսումնասիրենք ամեն

մեկն առանձին, իրենց հատկութիւններով, իրենց հատուկ պատճառներով և ներգործութիւններով և այլն: Այս և ամենից առաջ բնագիտութեան և պատմագիտութեան խնդիրը. հետազոտութեան այս ճյուղերը շատ հիմնավոր պատճառներով կրօնական և դարաշրջանի հոգեւոր մեջ յերկրորդական տեղ եյին գրաւում, վորովհետեւ նրանք ամենից առաջ դեռ նյութ պետք և հովաքեյին դրա համար: Այն ժամանակ միայն, յերբ վորոշ հափով հովաքոված և բնական և պատմական նյութը, այն ժամանակ միայն կարող և ձեռնարկվել քննադատական հետազոտութեան, համեմատութեան կամ դասակարգելի, կարգերի ու տեսակների բաժանման: Այդ պատճառով եւ բնութեան ճշգրիտ հետազոտութեան սկզբնավորութիւնը հոգեւորի մեջ սկսվում և առաջին անգամ Արեւմտեան շրջանից¹⁸ և հետագայում, միջին դարերում, ավելի ևս դարգացվում արաբների միջոցով: Իսկական բնագիտութիւնը, սակայն, սկիզբ և առնում միայն 15-րդ դարի յերկրորդ կեսից, և այն ժամանակվանից սկսած բնագիտութիւնն առաջագիժում և շարունակաբար աճող արագութեամբ: Բնութեան տարրալուծումն իր առանձին մասերին, բնութեան զանազան յերևույթների և զանազան իրերի բաժանումը վորոշ դասակարգելի, որգանական մարմինների ներքին կազմութեան ուսումնասիրութիւնն իրենց բազմազան անատոմիական ձևերով, — սրանք եյին այն հսկայական առաջագիժութեան հիմնական պայմանը, վոր վերջին չորս հարյուր տարիները ավելի մեղ բնութեան ճանաչման վերաբերմամբ: Բայց այդ ուսումնասիրութիւնը մեր մեջ նմանապես սովորութիւն մտցրեց՝ բնութեան իրերն ու բնութեան յերևույթներն ըմբռնելու իրենց առանձնութեան մեջ, մեծ ամբողջական կապակցութիւնից դուրս, հետևաբար—վոչ թե նրանց շարժման, այլ անդորրութեան մեջ, վոչ թե իրեւ ըստ հոլութեան փոփոխական, այլ իրեւ հաստատուն գոյութիւններ, վոչ թե նրանց կյանքի, այլ մահվան մեջ: Իսկ յերբ այս հայեցակերպը բնագիտութիւնից անցավ փիլիսոփայութեան մեջ, ինչպես այդ կատարեցին Բեկոնն ու Լոքը, այն ստեղծեց վերջին դարերի սպեցիֆիկ սահմանափակութիւնը, մետաֆիզիկական մտածելակերպը:

Մետաֆիզիկի համար իրերն ու նրանց մտածական պատկերները, գաղափարները հետազոտութեան մեկուսացած, մեկը մյուսի հետեւից և մեկն առանց մյուսի դիտելի, հաստատուն, քարացած, մի անգամ ընդմիշտ տրված առարկաներ են: Նա մտածում և գոտ անմիջնորդական հակադրութիւններով. նրա խոսքը՝ այոն — այո յե, վոչը — վոչ. ինչ վոր դրանից ավելի յե, այն չարից եւ: Նրա համար վորեւե իր կամ գոյութիւն ունի, կամ այն գոյութիւն չունի. իրը չի կարող միաժամանակ ինքը և մի ուրիշ բան լինել: Դրականն ու բացասականը բացարձակապես բացառում են միմյանց. նույնպիսի քարացած հակադրութեան մեջ են միմյանց հետ պատճառն ու ներգործութիւնը: Այս

մատենակերպը այն պատճառով և առաջին հայացքից մեզ նախազանց հիմնավոր թվում, վորովհետեւ այն այսպես կոչված մարդկային առողջ դատողութեան մատենակերպն է։ Սակայն մարդկային առողջ դատողութեանը, վորքան էլ այն թի պատկառելի ընկեր և իր անալիսն ապարեզում չորս պատերի մեջ, միտնդամայն դարձանալի արկածների յն հանդիպում, հենց վոր հանդգնում և գուրս դալ հետադուրսութեան լայնարձակ աշխարհը։ Յեւ մետաֆիզիկական հայեցակերպն էլ, վորքան էլ այն իրավացի և մինչև անգամ անհրաժեշտ և այնքան լայնարձակ, իրի բնութեանը համապատասխան տվելի ևս ընդարձակածալալ ապարեղներում, այնուամենայնիւ ամեն թնդամ վաղ թի ուշ այնպիսի մի սահմանի յն հասնում, վորից այն կտղմը նա միակողմանի, սահմանափակ, արսարակտ և դառնում և անլուծելի հակասութեաններէ մեջ մոլորվում, վորովհետեւ նա առանձին իրերը տեսնելով՝ մոռանում և նրանց կապակցութեանը, նրանց դոյութեանը տեսնելով՝ մոռանում և նրանց լինելն ու անհետանալը, նրանց հանդիսուր տեսնելով՝ մոռանում և նրանց շարժումը, վորովհետեւ նա առանձին ծառերը նշմարելով՝ անտառը չի տեսնում։ Առորյա դեպքերի համար, որինակ, մենք գիտենք և վորոշակի կարող ենք առել, թի տվյալ կենդանին արդոք գոյութեան ունի, թի վոչ-բայց ավելի մոտիկից հետադուրսով՝ մենք գտնում ենք, վոր այս յերեմնի նախազանց խճողված մի բան և. այս բանը շատ լավ գիտեն իրավաբանները, վորոնք ապարդոյուն կերպով տանջվել են մի բանական սահման գտնելու համար, վորից այն կտղմը յերեւայի վոչնչացումը մոր արդանդում սպանութեան է. և նույնպես էլ անկարելի բան և վորոշիլ մահվան բոպեն, վորովհետեւ ֆիզիոլոգիան ապացուցում և, վոր մահը միանգամից տեղի ունեցող, վայրկենական իրողութեան չի, այլ մի յերկարաեւ պրոցես է։ Նմանապես և ամեն մի որդանական եյակ յուրաքանչյուր վայրկյան նույնն է և նույնը չի. ամեն վայրկյան նա վերամշակում և դրսից իրեն մատակարարված նյութերը և արտաթորում այլ նյութեր, յուրաքանչյուր վայրկյան մեռնում են նրա մարմնի ըջիջները և նորերն են կազմվում. այսպիսով, ավելի կարճ կամ ավելի յերկար ժամանակից հետո նրա մարմնի նյութը բոլորովին նորոգված, փոխարինված է լինում նյութի ուրիշ ատոմներով, այնպես վոր յուրաքանչյուր որդանական եյակ միշտ միևնույնն է և այնուամենայնիւ ուրիշ է Նմանապես և, ավելի ճշգրիտ հետազոտութեան ժամանակ մենք տեսնում ենք, վոր վորեւ հակադրութեան յերկու բեռները, ինչպես դրական և բացասական բեռները, նույնքան անբաժան են միմյանցից, ինչպես վոր հակադիր են միմյանց, և վոր նրանք, հակառակ ամեն հակադրականութեան՝ փոխադարձաբար թափանցում են իրար մեջ. նմանապես մենք տեսնում ենք, վոր պատճառն ու հետեանքն այնպիսի պատկերացումներ են, վորոնք արժեք ունեն միայն առանձին դեպքի վերաբերմամբ գործադր-

վելիս, բայց նրանք, հենց վոր մենք առանձին դեպքը դիտում ենք իր ընդհանուր կապակցության մեջ տիեզերքի ամբողջության հետ, համընթանում են, լուծվում են ունիվերսալ փոխազդեցության պատկերացման մեջ, վորտեղ պատճառն ու հետևանքը շարունակ փոխում են իրենց տեղը. այն, ինչ վոր այժմ կամ այստեղ հետևանք է, այնտեղ կամ այն ժամանակ պատճառ է դառնում և ընդհակառակը:

Այս բոլոր յերևույթներն ու մտածողության մեթոդները չեն հարմարվում մետաֆիզիկական մտածողության շրջանակներին: Դիալեկտիկայի համար, ընդհակառակն, վոր իրերն ու նրանց զաղապարական պատկերներն ըմբռնում է ըստ ելույթյան նրանց կապակցության, նրանց շաղկապման, նրանց շարժման, նրանց ծագման ու անհետացման մեջ, վերևում նկարագրվածի նման յերևույթներն ավելի շուտ հաստատում են նրա սեփական ուսումնասիրության յեղանակը: Բնությունը մի փորձաքար է դիալեկտիկայի համար, և ժամանակակից բնագիտության մասին մենք կարող ենք ասել, վոր նա այս փորձի համար մի չափազանց հարուստ, ամեն ոք ավելացող նյութ է մատակարարել և դրանով ապացուցել է, վոր վերջիվերջո բնության մեջ ամեն ինչ դիալեկտիկորեն է կատարվում և վոչ թե մետաֆիզիկորեն, վոր բնությունը շարժվում է վոչ թե մի շարունակ կրկնվող շրջանի հաջիտանական միակերպության մեջ, այլ մի խսկական պատմություն է ապրում: Այստեղ ամենից առաջ պետք է հիշել Դարվինին, վորը բնության մետաֆիզիկական ըմբռնման ամենաուժեղ հարվածը հասցրեց իր այն ապացույցով, թե այսօրվա ամբողջ որգանական բնությունը, բույսերն ու կենդանիները, ուրեմն նաև մարդը, միլիոնավոր տարիներ շարունակվող զարգացման պրոցեսի արդյունքն են Բայց վորովհետև մինչև այժմ մտաների վրա կարելի չէ հաշվել այն ընագետներին, վորոնք սովորել են դիալեկտիկորեն մտածել, ապա հայտնագործված հետևանքների այս կոնֆլիկտը ավանդական մտածելակերպի հետ՝ միանգամայն բացատրում է այն անսահման խառնաշփոթությունը, վոր այսօր իշխում է թերթիական ընագիտության մեջ և վորը հուսահատության է հասցնում թե՛ ուսուցիչներին և թե՛ աշակերտներին, թե՛ զրոգներին և թե՛ ընթերցողներին:

Այդպես ուրեմն, ամբողջ տիեզերքի, նրա զարգացման և մարդկության զարգացման ճշգրիտ պատկերացումը, ինչպես նաև այս զարգացման արտացոլումը մարդկանց գլուխներում, կարող է ձեռք բերվել միմիայն դիալեկտիկայի միջոցով, շարունակ ու շաղկապ բնույթի լինելության և անհետացման, առաջադիմական փոփոխությունների և հետադիմական փոփոխությունների ընդհանրական փոխազդեցությունները: Յեվ հենց այս իմաստով էլ անմիջապես հանգես յեկավ գերմանական նորագույն փիլիսոփայությունը: Կանտն իր կյանքի ուղին նրանով սկսեց, վոր նա Նյուտոնի կայուն արեղակնային սխառմը և նրա—յերբ շարժման համար պա-

հանջվող առաջին հռչակալուր միումն արդեն արված էր — հավիտե-
նական պետութիւնը վերածնեց պատմական մի պրոցեսի, վորի հա-
մաձայն արեն ու բոլոր մարդակները ծագել են պատմաման մեջ պարն-
վող մշտնաշարժ մասսայից: Նա պրանից արդեն այն յեղբակացութիւնն
էր հանում, վոր այս ծագումն անհրաժեշտաբար կանխորոշում է նաև
արեղակնային սիստեմի ապագա կործանումը: Նրա հայացքը կես դար
հետո մաթեմատիկոսն հիմնավորեց Լապլասը, իսկ կես դար էլ անց՝
սպեկտրոսկոպն ապացուցեց, վոր ակեղերքում գոյութիւն ունեն այս-
պիսի հրաշեկ գաղային մասսաներ խտութեան տարրեր աստիճան-
ներով:

Գերմանական այս նորադույն փիլիսոփայութիւնն իր լրումը
գտավ Հեգելի սիստեմի մեջ, վորի մեջ առաջին անգամ — և այս նրա մեծ
ծառայութիւնն է — ամբողջ բնական, պատմական և հոգևոր աշխարհը
պատկերացվում էր իրրև մի պրոցես, այսինքն՝ իրրև մշտական շարժ-
ման, փոփոխման, փոխակերպութեան զարգացման մեջ դանդաղ բան և
փորձ էր արվում ապացուցելու ներքին կապակցութիւնն այդ շարժ-
ման և զարգացման մեջ: Այս տեսակետից դիտելով՝ մարդկութեան
պատմութիւնն այլևս անմիտ բռնութիւնների մի անհեթեթ շղթա
չէր յերևում, վորոնք բոլորն էլ հալասարապես մերժելի յեն փիլիսո-
փաների այժմ արդեն հասունացած բանականութեան դատաստանի
սրտից և վորոնք մարդ ամենայն սիրով մոռանում է վորքան կարելի
է շուտով, այլ թվում են իրրև մարդկութեան զարգացման պրոցեսը,
վորի աստիճանական զարգացումը հետադուտից նրա բոլոր խոտորումնե-
րի ընթացքում և վորի ներքին որինսպիւթութիւնն ապացուցելը բոլոր
յերևութական պատահականութիւնների ընթացքում — այժմ մտածո-
ղութեան խնդիրը դարձավ:

Վոր Հեգելի սիստեմը չլուծեց այն խնդիրը, վոր նա դրել էր իր
առաջ, այստեղ նշանակութիւն չունի նրա դարաշրջան կազմող ծա-
ռայութիւնն այն էր, վոր նա դրեց այդ խնդիրը: Այդ այնպիսի մի
խնդիր է, վոր վոչ մի անհատ յերբեք չի կարող լուծել: Թեև Հեգելը —
Սեն-Սիմոնի հետ միասին — իր ժամանակի ամենաունիվերսալ գիւղին
էր, այնուամենայնիվ նա սահմանափակված էր, նախ և առաջ, իր սե-
փական գիտելիքների անհրաժեշտաբար սահմանափակ ծավալով, և
յերկրորդ, իր դարաշրջանի՝ ծավալով ու խորութեամբ նույնպես սահ-
մանափակ գիտելիքներով ու հայացքներով: Սակայն, դրա վրա ավել-
լանում էր մի յերրորդ բան: Հեգելն իդեալիստ էր, այսինքն՝ նա իր
գլխում յեղած մտքերը չէր համարում իսկական իրերի ու յերևույթ-
ների ավելի կամ պակաս չափով արտարակտ արտապատկերներ, այլ
ընդհակառակն՝ իրերն ու նրանց զարգացումը նա համարում էր աշ-
խարհի ստեղծագործութիւնից առաջ վորեւէ կերպով գոյութիւն ունե-
ցող «իդեալի»¹⁹ իրականացած արտապատկերները: Դրանով ամեն բան

դիտարկելու եր դրվում և աշխարհի իրական կապակցութունը միանգամայն շուտ եր տրվում: Յեւ այդ պատճառով ել, վորքան ել Հեգելը ճիշտ և հանճարեղ կերպով եր ըմբռնում վորոշ առանձին կապակցութուններ, այնուամենայնիւ, մատնանշված հիմունքներով շատ բան մանրամասնութունների մեջ ել կարկատված, արհեստական, սարքովի, կարճ՝ աղավաղված դուրս յեկավ: Հեգելի սխառնմի իբրև այդպիսին մի հսկայական վաղածնունդ եր—բայց այն նաև վերջինն եր իր տեսակի մեջ: Բացի այդ՝ նա տառապում եր ևս մի անբուժելի ներքին հակասությամբ. մի կողմից, նրա հիմնական նախադրյալն այն պատմական հայացքն եր, վորի համաձայն մարդկային պատմութունը զարգացման մի պրոցես ե, վորն ըստ իր բնության չի կարող իր ինտելեկտուալ յրումը դնել վորևե այսպես կոչված բացարձակ ճշմարտության հայտնագործումով. բայց մյուս կողմից նա պնդում ե, վոր ինքը հենց այդ բացարձակ ճշմարտության լրիւ բովանդակումն ե: Բնության և պատմության ճանաչման համայնապարփակ, միանգամ ընդմիշտ ավարտված սխառնմը հակասում ե դիալեկտիկական մտածողության հիմնական որոնքներին. այս բանը, սակայն, ամենևին չի բացառում, այլ ընդհակառակն, յենթադրում ե, վոր ամբողջ արտաքին աշխարհի սխառնմատիկական ճանաչումը կարող ե սերնդից սերունդ հսկայական առաջադիմութուն անել:

Դինչայժմյան գերմանական իդեալիզմի լիակատար թյուրությանը խելամուտ լինելն անհրաժեշտաբար տանում եր դեպի մատերիալիզմ, բայց պետք ե լավ նկատի ունենալ, վոչ միայն դեպի 18-րդ դարի մետաֆիզիկական, բացառապես մեխանիկական մատերիալիզմը: Ամբողջ նախկին պատմութունը պարզապես, նախ-հեղափոխական կերպով ժխտելու հանգեպ՝ արդի մատերիալիզմը պատմության մեջ տեսնում ե մարդկության զարգացման պրոցեսը, վորի շարժման որոնքները հայտնագործելը նրա խնդիրն ե: Ինչպես 18-րդ դարի Փրանսացիների, այնպես ել դեռևս Հեգելի մոտ իշխող այն պատկերացման հանդեպ բնության մասին, ըստ վորի վերջինս նեղ շրջապատւոյտների մեջ շարժվող, միշտ իրեն հավասար մնացող մի ամբողջութուն ե, հավիտենական տիեզերական մարմիններով, ինչպես վոր Նյուտոնն եր ուսուցել, և որգանական եյակների անփոփոխելի տեսակներով, ինչպես վոր Լիւնեն եր ուսուցել, արդի մատերիալիզմը բնադիտության բոլոր նորագույն հաջողություններն ի մի յե ամփոփում, վորի համաձայն բնությունն ել իր պատմությունն ունի ժամանակի մեջ, և տիեզերական մարմիններն ել, այն որգանիզմների տեսակների նման, վորոնցով նրանք բարենպաստ պայմաններում բնակված են լինում, ծագում են ու անհետանում, և շրջապատւոյտները, վորչափով վոր նրանք հնարավոր են մնում, անսահման խոշոր չափեր են ընդունում: Յերկու դեպքում ել մատերիալիզմն ըստ էյության դիալեկտիկական ե և՛ մյուս գիտություններից

վեր կանգնած փխխտության վաղ մի կարիք այլևս չունի։ Հենց վոր յուրաքանչյուր առանձին գիտության պահանջ և ստացողովում պարզ գաղափար կազմելու իրեն գերքի մասին իրերի ուժողջական կապակցության և իրերի մասին աւանդած ճանաչողության մեջ, ամեն մի հատուկ գիտության սմբողջական կապակցության մասին ավելորդ և դառնում։ Ինչ վոր այնուհետև սմբողջ մինչալժամյան փխխտության ինքնուրույն կերպով շարունակում և զոյություն պահպանել, մտածողության և նրա սրենքների ուսմունքն և — ֆորմալ տրամաբանությունն ու գիտելիական։ Մնացած բոլոր մասում և բնության և պատմության դրական գիտության մեջ։

Սակայն, մինչդեռ բնագիտական հայացքի զարգացումն այն չափով միայն կարող եր կատարվել, վորչափով գիտական հետազոտությունը իմացության համադասախառն դրական նյութ եր մատակարարում, արդեն շատ ավելի վաղ այնպիսի պատմական իրողություններ ելին ուժի մեջ մտել, վորոնք պատմության բմբունման մեջ վճռական շրջադարձ առաջացրին։ 1831 թվին Լիոնում տեղի յեր ունեցել առաջին բանվորական ապստամբությունը²⁰, 1838—1842 թվականներին առաջին ազգային բանվորական շարժումը, անգլիական չարտիստների²¹ շարժումը, իր դադարձնականին հասավ։ Դասակարգային կոխվը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև սկսեց առաջնակարգ դերք գրավել։ Յեվրոպայի ամենաառաջավոր յերկրների պատմության մեջ այն չափով, վորչափով այնտեղ մի կողմից խոշոր արդյունաբերությունն եր զարգանում, մյուս կողմից բուրժուազիայի նոր նվաճած քաղաքական իշխանությունը։ Փաստերն ավելի ու ավելի ակնառու կերպով սուտ ելին դուրս լերում բուրժուական անտեսադեմոստների ուսմունքը կապիտալի և աշխատանքի շահերի նույնության, ընդհանրական հարմոնիայի և ժողովրդի ընդհանրական բարորության մասին իրրև ազատ մըըցակցության հեականք։ Այս բոլոր բաներն այլևս անկարելի յեր ժըխտել, ճիշտ այնպես, ինչպես նաև Ֆրանսական և անգլիական սոցիալիզմը, վորը նրանց թեորիական, թեև չափազանց անկաատար արտահայտությունն եր։ Սակայն պատմության հին իդեալիստական ըմբռնումը, վոր դեռևս դուրս չեր մղված, չեր ճանաչում նյութական շահերի վրա հիմնված դասակարգային կոխիլներ, առհասարակ չեր ճանաչում վոչ մի նյութական շահ։ Եթ արտադրությունը և թե անտեսական հարաբերությունները նրա մեջ հանդես ելին դալիս միայն կողմնակի կերպով, իրրև «Կուլտուրայի պատմության» ստորագրա տարրեր։

Նոր փաստերը հարկադրեցին ամբողջ մինչալժամյան պատմությունը մի նոր հետազոտության յենթարկելու, և բանից դուրս յեկավ, վոր ամբողջ մինչալժամյան պատմությունը, բացառությամը նախնական դրության, դասակարգային կոխիլների պատմություն և յեղել, վոր հասարակության այս միմյանց դեմ պայքարող դասակարգերն ամեն

ամառամ արտադրութեան և հաղորդակցութեան հարաբերութեան ներքին,
մի խոսքով՝ իրենց դարաշրջանի անհետակամ հարաբերութեան ներքին
ծնունդ են։ Վոր, ուրեմն, հասարակութեան ամեն անդամվա տնտեսա-
կան կառուցվածքն այն իրական հիմքն է կազմում, վորով վերջիվերջո
բացատրվում է յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջանի իրա-
վական և քաղաքական հաստատութեան ներքին, ինչպէս նաև կրօնական,
փիլիսոփայական և այլ հայեցողութեան բովանդակ վերնաշինքը։ Հեղելը
պատմութեան ըմբռնումն ազատել էր մետաֆիզիկայից, նա այն դիա-
լեկտիկական երգարձրել,—բայց պատմութեան նրա ըմբռնումն ըստ հյու-
թեան իդեալիստական երկ Այժմ իդեալիզմը դուրս եր քշված իր վերջին
ապաստանարանից, պատմութեան ըմբռնումից, արված եր պատմութեան
մատերիալիստական ըմբռնումը և գտնված եր ճանապարհը մարդու
դիտակցութեանը բացատրելու իր կեցութեամբ, փոխանակ նրա կեցութե-
ան ներքին իր դիտակցութեամբ բացատրելու, ինչպէս մինչև այժմ եր։

Արա համաձայն սոցիալիզմն այժմ տլլա այս կամ այն հան-
ճարեղ մտքի պատահական հայտնագործում չիւր թլում, այլ յերկու
պատմականորեն առաջացած դասակարգերի—պրոլետարիատի և բուր-
ժուազիայի — կողմի անհրաժեշտ ծնունդ։ Նրա խնդիրն այլևս հասա-
րակութեան մի ըստ կարելույն կատարյալ սխտեմ հորինելը չիւր, այլ այն
պատմական տնտեսական պրոցեսն ուսումնասիրելը, վորից անհրա-
ժեշտարար ծագել են այդ դասակարգերն ու նրանց հակամարտութեանը,
այլևս զրա շնորհիւ ստեղծված տնտեսական դրութեան մեջ կոնֆլիկտը
լուծելու միջոցները հայտնագործելը։ Բայց այս մատերիալիստական
ըմբռնման հետ մինչայժման սոցիալիզմը նույնքան անհամատեղելի
յիւր, վորքան Ֆրանսական մատերիալիզմի՝ բնութեան ըմբռնումն ան-
համատեղելի յիւր դիալեկտիկայի և նորագույն բնագիտութեան հետ։
Թեև մինչայժման սոցիալիզմը քննադատում եր արտադրութեան
դոյութեան ունեցող կապիտալիստական յեղանակն ու նրա հետեանք-
ները, բայց չիւր կարողանում այդ յեղանակը բացատրել, ուրեմն և չիւր
կարողանում նրա հետ գլուխ յենել։ Նա կարող եր միայն մերժել այն
իրբն վատ յեղանակի վորքան ավելի բռն կերպով եր նա հանդես
գալիս բանվոր դասակարգի՝ արտադրութեան այդ յեղանակից ան-
բաժանելի շահագործման դեմ, այնքան ավելի ուղակա եր նա կարողա-
նում պարզ ցույց տալ, թե ինչուեմն է շահագործումը և ինչպէս է
առաջանում այն։ Բայց խնդիրը հենց այն եր, վոր արտադրութեան
կապիտալիստական յեղանակը նկարագրվել, մի կողմից, իր պատմական
կապակցութեամբ և իր անհրաժեշտութեամբ պատմական մի վորոշ
ժամանակաշրջանի համար, ուրեմն նաև նրա կործանման անհրաժեշտու-
թեամբ, իսկ մյուս կողմից, բանն այն եր, վոր մերկացվել նաև նրա
ներքին բնույթը, վոր դեռևս շարունակ թագնված եր մեռած։ Այս բանը
տեղի ունեցաւ հալեյլալ արմեի հայտնագործումով։ Ապացուցվեց, վոր չվը-

ճարված աշխատանքի յուրացումը արտադրութեան կապիտալիստական յեղանակի և նրա միջոցով բանվորին շահագործելու հիմնական ձևն է, վոր կապիտալիստը, յեթէ նա մինչև անգամ իր բանվորի աշխատութիւնը այն լրիւլ արժեքով է գնում, վոր նա իրրեւ ապրանք ունի ապրանքային շուկայում, այնուամենայնիւ նա ավելի շատ արժեք է դուրս կորդում նրանցից, քան թէ վճարել է նրա համար, և վոր, վերջիվերջո, այս հավելյալ արժեքը արժեքների այն գումարն է կազմում, վորի շնորհիւ ունեւոր դասակարգերի ձեռքերում է կուտակվում կապիտալի հարստութիւնը մասսան: Այդպիսով բացատրված էր ինչպէս կապիտալիստական արտադրութեան, այնպէս նաեւ կապիտալի արտադրութեան պրոցեսը: Այս յերկու խոշոր հայտնադործումները — պատմութեան մատերիալիստական ըմբռնումը և կապիտալիստական արտադրութեան դադարների մերկացումը հավելյալ արժեքի միջոցով — մենք պարտական ենք Մարքսին: Նրանց շնորհիւ սոցիալիզմը գիտութեան գարձավ, վորի մեջ այժմ խնդիրն ամենից առաջ այն է, վորպէսզի այն իր բոլոր մանրամասնութեաններով ու կապակցութեաններով ավելի ևս մշակվի:

III

Պատմութեան մատերիալիստական ըմբռնումը յիշում է այն դրույթից, թէ արտադրութեանը և արտադրութեան հետ գոգընթաց նրա արդունքների փոխանակութեանը ամեն հասարակակարգի հիմքն է. թէ ամեն մի պատմականորեն հանդես յեկող հասարակութեան մեջ արդունքների բաշխումը և դրա հետ հասարակութեան բաժանումը դասակարգերի ու դասերի կախված է նրանից, թէ ինչ և ինչպէս է արտադրվում և ինչպէս է փոխանակվում արտադրվածը: Սրա համաձայն՝ բոլոր հասարակական փոփոխութեանների ու քաղաքական հեղաշրջումների վերջնական պատճառները պետք է փնտռել վնչ թէ մարդկանց գլուխներում, վնչ թէ նրանց՝ հալիտենական ճշմարտութեանն ու արդարութեանը ավելի ու ավելի աճող չափով հասկանալու մեջ, այլ արտադրութեան և փոխանակութեան յեղանակի փոփոխութեանների մեջ. այդ պատճառները պետք է փնտռել վնչ թէ փիլիսոփայութեան, այլ տվյալ դարաշրջանի տեսութեան մեջ: Արթնացող այն խեղամտութեանը, թէ գոյութեան ունեցող հասարակական հաստատութեանները անբանական և անարդար են, թէ բանականութեանն անմտութեանն է դարձել, բարեքը՝ չարքը, միայն մատնանշում է այն հանգամանքը, վոր արտադրութեան մեթոդների ու փոխանակութեան ձևերի մեջ ամենայն իսկապետութեամբ այնպիսի փոփոխութեաններ են տեղի ունեցել, վորոնց այլևս չի համապատասխանում նախկին տնտեսական պայմանների համաձայն ձևված հասարակական կարգը: Դրանով միաժամանակ ասված է, վոր հայտնագործված թերութեանները վերացնելու միջոց-

ները նմանապես պետք է—ավելի կամ պակաս չափով դարգացած կերպով—բովանդակված լինեն արտադրութեան փոփոխված պայմանների մեջ։ Այդ միջոցները մարդիկ պետք է վնջ թե իրենց գլուխներինց հնարեն, այլ մտածողութեան միջոցով հայտնագործեն արտադրութեան առկա նյութական իրողութեաններին մեջ։

Ինչ կարելի չէ ասել, սրա համաձայն, արդի սոցիալիզմի մասին։ Գոյութեան ունեցող հասարակակարգը—այս բանն այժմ գրեթե ամենքն էլ ընդունում են—ստեղծել է ներկայումս տիրող դասակարգը՝ բուրժուազիան։ Բուրժուազիան հատուկ արտադրութեան յեղանակը, վոր Մարքսի որերից արտադրութեան կապիտալիստական յեղանակ անունն է կրում, անհամատեղելի չէր տեղական և դասային արտոնութեաններին, ինչպես նաև ֆեոդալական հասարակակարգի փոխադարձ անձնական կապերի հետ։ Բուրժուազիան խորտակեց ֆեոդալական հասարակակարգը և նրա ավերակների վրա հաստատեց բուրժուական հասարակակարգը, ազատ մրցութեան թագավորութունը, տեղափոխելու ազատ իրավունքը, ապրանքատերերի իրավահավասարութեանը և մնացած բոլոր բուրժուական հրաշալիքները։ Արտադրութեան կապիտալիստական յեղանակն այժմ կարող էր ազատ ծավալվել։ Բուրժուազիայի ղեկավարութեան ներքո մշակված արտադրական հարարութեանները դարգացան մինչև այն չլսված արագութեամբ և մինչև այն չլսված չափերով, հենց վոր շոգին ու մեքենաները հին մանուֆակտուրան խոշոր արդյունաբերութեան վերածեցին։ Բայց ինչպես վոր իր ժամանակին մանուֆակտուրան և նրա ազդեցութեամբ ավելի դարգացած աշխատները կոնֆլիկտի մեջ ընկան համաբուրժուանների ֆեոդալական կապանքների հետ, այնպես էլ խոշոր արդյունաբերութեանը իր դարգացման ավելի բարձր աստիճանում կոնֆլիկտի մեջ ընկավ այն նեղ սահմանների հետ, վորոնց մեջ պահում է նրան արտադրութեան կապիտալիստական յեղանակը։ Արտադրութեան նոր ուժերն արդեն գերաճել են իրենց շահագործման բուրժուական ձևից. և այս կոնֆլիկտը արտադրութեան ուժերի ու արտադրութեան յեղանակի մեջ և՛ մարդկանց գլուխներում ծագած մի կոնֆլիկտ է, ինչպես որինակ մարդկային ժառանգական մեղքի կոնֆլիկտը աստվածային արդարութեան հետ, այլ այդ կոնֆլիկտը գոյութեան ունի փաստերի մեջ, որ յեկտիվ կերպով, մեզինք գուրս, անկախ նույնիսկ այն մարդկանց կամքից ու վարկեցողութեանից, վորոնք առաջ են բերել այն։ Արդի սոցիալիզմը վոչ այլ ինչ է, յեթե վոչ այս իրական կոնֆլիկտի մտավոր արտացոլումը, նրա իղեական անդրադարձումն ամենից առաջ այն դասակարգի գլուխներում, վոր անմիջականորեն տառապում է նրանից, այն է՝ բանվոր դասակարգի գլուխներում։

Ինչո՞ւն է այդ կոնֆլիկտը։

Կապիտալիստական արտադրութեանից առաջ, ուրեմն միջին դա-

բերում, գոյութիւնն ունիւր ամենուրեք մանր արտադրութիւնն, վոր հիմնված եր աշխատանքների մասնավոր ակտիւականութեան վրա արտադրութեան իրենց միջոցների նկատմամբ. մանր, ազատ կամ ճորտ գյուղացիների յերկրագործութեանը, քաղաքների արհեստները Աշխատանքի միջոցները—հող, յերկրագործական գործիքներ, արհեստանոց, արհեստավարական գործիքներ—առանձին տնտեսների աշխատանքի միջոցներն էլին, միայն տնտեսական գործածութեան համար շինված, ուրեմն՝ տնտեսական տարար մանր էլին, գտնական, տնտեսական Ռայց հենց այդ պատճառով եւ նրանք սովորաբար պատկանում էլին արտադրողին հենց իրենւ Արտադրութեան այս ցրված, նեղ միջոցները համակենտրոնացնել, ընդարձակել, նրանց ժամանակակից արտադրութեան հզոր ներգործող լծակներ դարձնել,—այս եր հենց արտադրութեան կապիտալիստական յեղանակի եւ նրա կրողի՝ բուրժուազիայի պատմական դերը Թե ինչպես նա 15-րդ դարից սկսած այս բանը պատմականորեն գլուխ բերեց պարզ կոոպերացիայի եւ խոշոր արդյունաբերութեան յերեք աստիճաններով, մանրամասն նկարագրել եւ Մարքսը «Կապիտալ» չորրորդ հատվածում ²²։ Բայց բուրժուազիան, ինչպես այդ նույնպիս ապացուցված է այնտեղ, չեր կարող արտադրութեան այն տնտեսական միջոցները արտադրութեան հսկայական ուժերի վերածել, առանց նրանց տնտեսների արտադրութեան միջոցներից՝ հասարակական արտադրութեան միջոցների վերածելու, վորոնք կարող են գործադրվել միայն մարդկային վարձ բազմաթիւ ուժերով։ Ծախարակի, ջուրհակի ձեռքի դաղձահի, դարձի մուրճի տեղը բռնեց մանածնանան, միտանիկական ջուրհակային հաստոցը, շոգեմուրճը, փոքր արհեստանոցի տեղը բռնեց հարյուրավորների ու հազարավորների միտանոց աշխատանք պահանջող Փարրիկան։ Յեւ ինչպես վոր արտադրութեան միջոցները, այնպես եւ հենց արտադրութեանն ինքը մի շարք առանձին-առանձին գործողութեաններից վերածվեց մի շարք հասարակական գործողութեանների, եւ արդյունքներն առանձին տնտեսների արդյունքներից հասարակական արդյունքներ դարձան։ Մանվածքը, գործվածքը, մետաղե ապրանքները, վորոնք այժմ գործարանից էլին գալիս, բազմաթիւ բանվորների ընդհանուր արդյունքն էլին, վորոնց ձեռքերով նրանք անցնում էլին հերթով, մինչեւ վոր պատրաստ էլին դառնում։ Դո՛ւ մի տնտես չեր կարող նրանց մասին ասել՝ այս բանը յեւ եմ շինել, այս իմ արդյունքն եւ։

Բայց վորտեղ վոր աշխատանքի բնածին, անպլան կերպով հետադիմապես առաջացած բաժանումը հասարակութեան ներսում արտադրութեան հիմնական ձեւն եւ, այնտեղ նա արդյունքներին ապրանքների ձեւ եւ տալիս, վորոնց փոխադարձ փոխանակումը, գնումն ու վաճառումը, առանձին արտադրողներին հնարավորութեան եւ տալիս բավարարելու իրենց բազմազան կարիքները։ Յեւ այս այնպես եւ միջին դարերում

Որինակ, գյուղացիին յերկրագործական արդյունքներ եր վաճառում
արհեստավորին և դրա փոխարեն սրանից դնում եր արհեստի արտա-
դրանքներ: Անհատապես արտադրողների, ապրանք արտադրողների
այս հասարակության մեջ խցկվեց այժմ արտադրության նոր յեղա-
նակը: Աշխատանքի բնածին, անպլան բաժանման կողքին, ինչպես վոր
այն իշխում եր ամբողջ հասարակության մեջ, նա դնում և աշխատան-
քի պլանաչափ բաժանումը, ինչպես վոր այն կազմակերպված եր ա-
ռանձին գործարանում. անհատական արտադրության կողքին հանգեա-
յեկավ հասարակական արտադրությունը: Յերկուսի արդյունքներն ել վա-
ճառվում եյին միեւնույն շուկայում, ուրեմն՝ դոնե մոտավորապէս միե-
նույն գներով: Սակայն պլանաչափ կազմակերպությունն ալելի ուժեղ
եր, քան թէ աշխատանքի բնածին բաժանումը. հասարակականապես
աշխատող գործարաններն իրենց արտադրանքներն ալելի եժան եյին
պատրաստում, քան թէ մանր առանձին-առանձին արտադրողները:
Անհատական արտադրությունը պարսկում եր մի ապարեզում մյու-
սի հետեից, հասարակական արտադրությունը հեղափոխականաց-
նում եր արտադրության ամբողջ հին յեղանակը: Սակայն, նրա այս
հեղափոխական բնույթն այնքան քիչ եր ըմբռնվում, վոր այն, ընդ-
հալառակն, իրեւ միջոց կիրառվեց՝ ապրանքային արտադրությունն
ուժեղացնելու և խրախուսելու համար: Այն ծագեց անմիջապէս կա-
պակցվելով ապրանքային արտադրության և ապրանքների փոխանա-
կության վորոշ, արդեն զոյություն ունեցող լծակների հետ, ինչպի-
սիներն եյին՝ առևտրական կապիտալը, արհեստը, վարձու աշխատանքը:
Հենց ինքն ել հանգեա գալով իրեւ ապրանքային արտադրության մի
նոր ձև՝ ապրանքային արտադրության յուրացման ձևերը նրա համար
ել լիովին իրենց ուժի մեջ եյին մտնում:

Ապրանքային արտադրության մեջ, ինչպես վոր այն զարգացել
եր միջին դարերում, ամենեւին չեր կարող այն հարցն առաջ գալ, թէ
աշխատանքի արտադրանքն ում պետք և պատկանի: Անհատ արտա-
դրողը սովորաբար պատրաստում եր այն իրեն պատկանող, հաճախ
հենց իր արտադրած հում նյութից, իր սեփական աշխատանքի միջոց-
ներով և իր սեփական ձեռքի կամ իր բնատանքի անդամների ձեռքի
աշխատանքով: Այն ամենին կարիք չուներ նրա կողմից յուրացվելու,
այն հենց ինքնին նրան եր պատկանում: Ուրեմն՝ արդյունքի սեփա-
կանությունը հիմնված եր սեփական աշխատանքի վրա: Մինչև տնգամ
այնանդ, վորտեղ ուրիշի ոգնության կարիք եր զգացվում, այս սովո-
րաբար յերկրորդական տեղ եր զբաղվում և հաճախ բացի աշխատավար-
ձից ուրիշ հատուցում ել եր ստանում. համաբարային և աշկերան ու
վարպետացուն աշխատում եյին վոչ այնքան ապրուստի աշխատա-
վարձի, վորքան իրենց սեփական հմտացման ու վարպետ դառնալու
համար: Բայց ահա յեկավ արտադրության միջոցների համակենտրո-

նացումը խոշոր արհեստանոցներում ու մանուֆակտուրաներում, վորով նրանք իսկապես արտադրութեան հասարակական միջոցների փոխարկվեցին: Բայց արտադրութեան հասարակական միջոցների և արդյունքների հետ շարունակում էին այնպես վարվել, կարծես նրանք այժմ էլ, ինչպես առաջ անհատների արտադրութեան միջոցներ ու արդյունքներ լինեին: Յեթի մինչև այժմ աշխատանքի միջոցների սեփականատերը յուրացնում էր արդյունքը, վորովհետև այն սովորաբար նրա սեփական արդյունքն էր և ոտարի ոժանդակ աշխատանքը միայն բացառութեւն էր, ապա այժմ աշխատանքի միջոցների սեփականատերը շարունակում էր յուրացնել արդյունքը, թեև այն այլևս իր արդյունքը չէր, այլ բացառապես ուրիշի աշխատանքի արդյունքն էր: Այդպիսով ուրեմն, այսուհետև հասարակականապես ստեղծված արդյունքները յուրացնում էին վնչ թե նրանք, վորոնք իսկապես շարժման մեջ էին զրկել արտադրութեան միջոցները և իսկապես արտադրել էին արդյունքները, այլ յուրացնում էին կապիտալիստները: Արտադրութեան միջոցներն ու արտադրութեւնն ըստ էութեան հասարակական են դարձել: Բայց նրանք յենթարկվում են յուրացման մի այնպիսի ձևի, վորի նախադրյալն առանձին անհատների մասնավոր արտադրութեւնն է, վորի ժամանակ, ուրեմն, յուրաքանչյուրն իր սեփական արդյունքի սեփականատերն է և այն շուկա յե բերում: Արտադրութեան յեղանակը յենթարկվում է յուրացման այս ձևին, թեև այն վերացնում է սրա նախադրյալը *): Այս հակասութեան մեջ, վոր արտադրութեան նոր յեղանակին նրա կապիտալիստական բնույթն է տալիս, արդեն ստվմային վիճակում առկա յե մեծ ժամանակների ամբողջ հախումաբայութեւն: Վորքան ավելի արտադրութեան նոր յեղանակն իշխող դարձավ արտադրութեան բոլոր վճռական բնագավառներում և բոլոր տնտեսապես վճռական նշանակութեւն ունեցող յերկրներում, և զրանով անհատական արտադրութեւնը հետ մղեց մինչև աննշան մնացորդների վիճակը, այնքան ավելի սուր կերպով պեճք է նայել յերկրում գտնուող հասարակական տնտեսական յեղանակի կապիտալիստական յուրացման անհամատեղելիութիւնը:

Ինչպես ասացինք, առաջին կապիտալիստները վարձու աշխատ-

* Այստեղ կարեք չկա մանրամասն բացատրելու, վոր թեև յուրացման ձևը միևնույնն էլ է մնում, յուրացման ընդլայնվել վերհնկարգրված պրոցեսի միջոցով նվազ չափով չի հեղափոխականացվում, քան թե արտադրութեւնը իմ սեփական արդյունքն էմ յուրացնում յես արդյոք, թե ուրիշների արդյունքը, սրանք, ինքրիկ, յուրացման յերկու բոլորովն տարբեր տեսակներ են: Կողմնակի կերպով ասենք, վարձու աշխատանքը, վորի մեջ ստղմային վիճակում առկա յե արտադրութեան ամբողջ կապիտալիստական յեղանակը, ըստ հին է. հատուկենտ ու ցրել՝ այն դարեր դարունակ ընթանում էր ստղութեանը զուգընթաց: Բայց այդ սաղմը կարող էր ծավալվել և արտադրութեան կապիտալիստական յեղանակ դառնալ այն ժամանակ միայն, յերբ ստեղծված էին պատմական նախապայմանները:

տանքի ձևն արդեն առկա գտան: Մակայն, վարձու աշխատանք իրրե
բացառություն, իրրե կողմնակի զբաղմունք, իրրե ոժանդակ միջոց,
իրրե անցման կետ: Այն գյուղացի բանվորը, վոր գնում եր ժամանա-
կավորական որավարձով աշխատելու, ունի իր սեփական միջանի մոր-
դեն (որավոր) հողը, վորով նա ծայրահեղ դեպքում կարող եր ապրել:
Համքարային կանոնադրությունները հոգ կյին տանում այն մասին,
վոր այսորվա վարպետացունքը վաղը վարպետ դառնային: Բայց հենց
վոր արտադրության միջոցները վերածվեցին հասարակական արտա-
դրության միջոցների և համակենտրոնացվեցին կապիտալիստների ձեռ-
քերում, այս բանը փոխվեց: Մանր անհատ արտադրողների արտա-
դրության միջոցը, ինչպես նաև արդյունքը, ավելի ու ավելի անար-
ժեք կյին դառնում. նրան այլևս ուրիշ վոչինչ չեր մնում անելու, բա-
ցի վարձով կապիտալիստի մոտ մտնելուց: Վարձու աշխատանքը, վոր
առաջ բացառություն և ոժանդակ աշխատանք եր, այժմ կանոն և ամ-
բողջ արտադրության հիմնական ձևը դարձավ. առաջ կողմնակի
զբաղմունք լինելով՝ նա այժմ դարձավ բանվորի բացառիկ գոր-
ծունեությունը: Ժամանակավոր վարձու բանվորը դարձավ ցմահ բան-
վոր: Բացի այդ՝ ցմահ վարձու բանվորների բաղմությունը հսկայա-
կան չափով ավելացավ այն հանգամանքի շնորհիվ, վոր միաժամանակ
Ֆեոդալական հասարակակարգը խորտակվեց, Ֆեոդալների շքախմբերը
լուծվեցին, գյուղացիներն արտաքսվեցին իրենց ազարակներից և այլն:
Մի կողմից՝ կապիտալիստների ձեռքերում համակենտրոնացած արտա-
դրության միջոցների և մյուս կողմից՝ բացի իրենց աշխատուժից այլ-
ևս ուրիշ վոչ մի սեփականություն չունեցող արտադրողների միջև ա-
ռաջացած անջատումն արդեն կատարված իրողություն եր: Հասարա-
կական տրագուրքյան յեվ կապիտալիստական յուրացման միջեվ յեղած
հակասությունը համդեռ ե գալիս իբրեվ պրոլետարիատի ու բուրժուազիա-
յի հակադրություն:

Մենք տեսանք, վոր արտադրության կապիտալիստական յեղա-
նակը խցկվեց ապրանք արտադրողների, անհատական արտադրողների
մի հասարակության մեջ, վորի հասարակական կապակցությունը պահ-
պանվում եր նրանց արդյունքների փոխանակման միջոցով: Բայց ապ-
րանքային արտադրության վրա հիմնված ամեն մի հասարակություն
այն առանձնահատկությունն ունի, վոր նրա մեջ արտադրողները կորց-
րել են իշխանությունն իրենց սեփական հասարակական հարաբերու-
թյունների վերաբերմամբ: Ամեն մեկն արտադրում ե իր պատահական
արտադրության միջոցներով իրեն համար, ինչպես և իր առանձին
փոխանակության կարիքի համար: Վոչ վոք չգիտե, թե իր արդյունք-
ներից վորքանն ե շուկա գալիս, նրանից վորքանն ե առհասարակ սպառ-
վում. վոչ վոք չգիտե, թե արդյոք իր անհատական արդյունքն իրա-
կան պահանջի կհանդիպի, թե արդյոք նա իր ծախքերը կհանի կամ

առհասարակ կկարողանա վաճառել, Հասարակական արտադրութեան մեջ անարխիա յե իշխում: Բայց տպրանքային արտադրութեանը, ինչպէս արտադրութեան ամեն մի այլ ձե, ունի իւր առանձնահատուկ, իրեն կցված, իրենից անբաժան որենքները, և այս որենքներն իրականում են, չնայելով անարխիային, հենց նրա մեջ, նրա միջոցով: Նրանք յերևան են զալիս հասարակական կապակցութեան իւր գոյութեանը շարունակող միտք ձեի, փոխանակութեան մեջ, և ցույց են տալիս իրենց ուժը անհատական արտադրողներէ հանդեպ իրրե մըրցման հարկադրական որենքներ: Ուրեմն, նրանք սկզբում անհայտ են հենց այս արտադրողներին և միայն հետո պետք և հայտնադրովին սրանց կողմից հետզհետե, յերկարատե փորձի միջոցով: Ուրեմն նրանք իրականանում են անկախ արտադրողներից և հակառակ արտադրողներէ, իրրե արտադրութեան նրանց ձեի կուրորեն ներգործող բնական որենքներ: Արդյունքն իշխում և արտադրողների վրա:

Միջնադարյան հասարակութեան մեջ, մասնականը առաջին դարեւրում, արտադրութեանը զլիաւորապէս ուղղված եր զեպի ինքնասպասումը: Այն բաւարարում եր առաւելապէս միայն արտադրողի և նրա ընտանիքի կարիքները: Այնտեղ, վորտեղ գոյութեան ունեյին անձնական կալման հարարերութեաններ, ինչպէս, որփնակ, գյուղերում, այն նպաստում եր նաե ֆեոդալական ազնւականի կարիքներէ բաւարարմանը: Այստեղ, ուրեմն, փոխանակութեան չեւ տեղի ունենում, այդ պատճառով եւ արդյունքներն ապրանքների բնույթ չեյին ընդունում: Գյուղացու ընտանիքն արտադրում եր համարյա այն ամենը, ինչ վոր իրեն պետք եր, գործիքներ ու զգեստներ վոչ պնկաս, քան կենսամթերքներ: Այն ժամանակ միայն, յերր նա այնտեղ հասաւ, վոր սկսեց արտադրել իւր սեփական կարիքից և ազնւական տերերին տալիք բնատուրքերից, ավելի, այն ժամանակ միայն նա արտադրեց նաե ապրանքներ. այս ավելցուկը, նետվելով հասարակական փոխանակման մեջ, վաճառվելու համար առաջարկվելով՝ ապրանք դարձաւ: Իհարկե քաղաքային արհեստավորներն ստիպված եյին հենց սկզբից ևեթ արտադրել փոխանակման համար: Բայց նրանք եւ իրենց սեփական կարիքներէ ամենամեծ մասն իրենք եյին մշակում. նրանք պարտեղներ ու փոքրիկ հողամասեր, ունեյին, նրանք իրենց անասուններն ուղարկում եյին համայնական անտառը, վորը, բացի դրանից, նրանց ատաղձի փայտեղեն և վառելիք եր մատակարարում. կանայք մանում եյին վուշ, բուրդ և այլն: Փոխանակութեան նպատակներ հետապնդող արտադրութեանը, ապրանքային արտադրութեանը նոր-նոր եր սկսվում: Այդ պատճառով եւ՝ սահմանափակ փոխանակութեան, սահմանափակ շուկա, արտադրութեան կայուն յեղանակ, տեղական առանձնացում դրաւ

վերաբերմամբ, տեղական միավորում դեպի ներսը, մարկը ²³ գյուղե-
քում*), համաքաղությունը քաղաքներում:

Բայց ապրանքային արտադրության ընդարձակման հետ, առանձ-
նապես արտադրության կապիտալիստական յեղանակի հանդես գալով՝
ապրանքային արտադրության մինչև այն թմրած որննքներն ել ավելի
պարզ և ավելի ուժեղ կերպով են սկսում իրենց ներգործությունը:
Հին կապերը թուլանում են, նախկին առանձնացման շրջանակները խո-
տակվում, արտադրողներն ավելի ու ավելի անկախ, առանձին-առան-
ձին ապրանքարտադրողների յնն վերածվում: Հասարակական արտա-
դրության անարխիան հանգես յեկավ և ավելի ու ավելի ծայրահեղու-
թյան հասավ: Բայց այն գլխավոր դործիքը, վորով արտադրության
կապիտալիստական յեղանակն այս անարխիան ուժեղացնում եր հա-
սարակական արտադրության մեջ, հատկապես հենց անարխիայի հա-
կադրությունն եր, այն ե՝ արտադրության ավելի ուժեղ կազմակեր-
պում իրեւ հասարակական արտադրություն, կազմակերպում արտա-
դրության յուրաքանչյուր առանձին ձեռնարկության մեջ: Այս լծակի
միջոցով նա վերջ ավեց նախկին անդորը կայունությանը: Վորտեղ
վոր այն մացվում եր արդյունաբերության վորեւ ճյուղի մեջ, այն
այլեւ իր կողքին արտադրության վոչ մի ուրիշ միջոց թույլ չե-
տալիս: Տիրապետող դասնալով արհեստի մեջ, նա վոչնչացրեց հին ար-
հեստը: Աշխատանքի դաշտը մարտադաշտ դարձավ: Խոշոր աշխարհա-
գրական հայտնագործումները ²⁴ և նրանց հետեղ դադութացումները
բազմացրին վաճառահանման վայրերը և արագացրին արհեստի վո-
խարկումը մանուֆակտուրայի: Կոիվ բռնկվեց վոչ միայն առանձին
տեղական արտադրողների միջև, այլ տեղական կոիվներն իրենց հեր-
թին աճեցին ու աղդային կոիվներ դարձան—17-րդ և 18-րդ դարերի առե-
տրական պատերազմները ²⁵: Վերջապես՝ խոշոր արդյունաբերությունն
ու համաշխարհային շուկայի ստեղծումը այդ կոիվը համաշխարհային
դարձրին և միաժամանակ նրան մի չլաված ուժգնություն տվին: Ինչ-
պես առանձին կապիտալիստների, այնպես ել ամբողջ արդյունաբե-
րությունների և ամբողջ յերկրների միջև գոյության հարցը վճռում ե
արտադրության բնական կամ արհեստական պայմանների բարենպաս-
տությունը: Պարտվածն անխնա կերպով վերացվում ե մեջտեղից:
Այս—դարվիչյան անհասական գոյության կոիվն ²⁶, վոր սաստկացած
մոլեղնությամը բնությունից փոխանցված ե հասարակության մեջ:
Մարկային համայնքը՝ հրաժարվելով ժամանակ առ ժամանակ վարելահողերն ու մարդագետիկները համայնքի առանձին անդամներին մեջ նորից վերաբաժանելու իրավունքից, այդ հոգամասերի վրա ունեցած իր մյուս իրավունքներից վոչ մեկն էլ ձեռքից չէր տալիս։ Իսկ այդ իրավունքները շատ նշանակալից էին։ Համայնքն իր դաշտերը առանձին անդամներին տրամադրել էր միայն իրեն վարելահող ու մարդագետին ոգտագործելու և վոչ թե ուրիշ վորեւ նպատակի համար։ Ինչ վոր գբանից դուրս եր, նրա վրա անհատական սեփականատերը վոչ մի իրավունք չունեւ։ Յերկրի ընդերքում գտնված գանձերը, յեթե նրանք ավելի խորն էին ընկած, քան կարող էր հասնել արորի խոփը, նրան չէին պատկանում, ուրեմն, այլ սկզբնապես պատկանում էին համայնքին։ Նմանապես և մետաղներ հանելու իրավունքը և այնու ձեռագայում այս բոլոր իրավունքներն իրենց ոգտին սեփականեցին հողատերերն ու յերկրի իշխանները։

Բայց արտերի ու մարգագետիկների ոգտագործումն էլ կախված եր համայնքի վերահսկողութեանից ու կարգավորումից, այն էլ հետեյալ ձևով։ Այնտեղ, վորտեղ յեռադաշտյան տնտեսութեանն եր իշխում, — իսկ այն իշխում եր գրեթե ամենուրեք, — գյուղի ամբողջ դաշտը բաժանվում եր յերեք հավասարամեծ մասերի, վորոնցից յուրաքանչյուրը փոփոխակի մի տարի տրամադրվում եր աշնանացանի համար, յերկրորդ տարին գարնանացանի համար, յերրորդ տարին հանգստանում եր։ Ուրեմն գյուղն ամեն տարի ուներ իր աշնանացանի, գարնանացանի և հանդչող դաշտը։ Հողաբաժանման ժամանակ հող եր տարվում այն մասին, վոր համայնքի յուրաքանչյուր անդամ հավասար բաժին ունենա բոլոր յերեք դաշտում էլ, այնպես վոր յուրա-

քանչյուրն առանց փնաս կրելու կարող եր յենթարկվել համայնքի հարկադրական սերմանման որենքներին, վորի համաձայն նա աշնանացան կարող եր անել միայն աշնանացանի դաշտի իրեն հատկացրած արտում և այլն:

Ամեն անգամվա հանգստացող դաշտը հանգստության ժամանակամիջոցի ընթացքում կրկին համայնական սեփականություն եր դառնում և ամբողջ համայնքի համար իրրև արոտավայր եր ծառայում: Անկ հենց վոր մյուս յերկու դաշտերի հունձն ել վերջանում եր, նրանք ել մինչև սերմանման ժամանակը նույնպես համայնական սեփականություն եյին գտնում կրկին և ոգտագործվում եյին իրրև արոտատեղ: Նմանապես և մարդագետիները խոտը հնձելուց հետո: Սեփականատերը պիտք և ցանկապատերը հեռացներ այն բոլոր արտերից, վորտեղ արածացնում եյին անասուններին: Այս՝ այսպես կոչված հարկադրական արածեցումը պայմանավորում եր, իհարկե, վոր թե սերմանման և թե հնձի ժամանակը առանձին անհատի վորոշմանը չեր թողնելում, այլ բոլորի համար ընդհանուր եր և սահմանվում եր համայնքի կողմից կամ վաղեմի սովորության համաձայն:

Մնացած ամբողջ հողը, այսինքն՝ այն ամենը, ինչ վոր տուն ու լրակ և բաժանված վարելահող չեր, մնում եր, ինչպես նախնադարյան ժամանակներում, համայնական սեփականություն՝ ընդհանուրի ոգտագործման համար. այդպես՝ անտառներն, արոտատեղերը, տափաստանները, ճահիճները, գետերը, լճակները, լճերը, ճանապարհներն ու արահատները, վորատեղերն ու ձկնորսությունները: Ինչպես վոր համայնքի յուրաքանչյուր անգամի բաժինը բաժանված վարելահողի մեջ սկզբնապես հավասարամեծ եր, այդպես ել նա հավասար բաժին ուներ «հանուր մարկի» ոգտագործման մեջ: Այս ոգտագործման յեղանակը վորոշում եր համայնակիցների ամբողջությունը. նմանապես և այդ ամբողջությունն եր վորոշում բաշխման յեղանակը, յեթե մինչ այն մշակված հողն այլևս չեր բաշխանացնում և հանուր մարկից մի կտոր վերցվում եր մշակության համար: Դիտավոր ոգտագործման ձևը հանուր մարկում անասուններին արածացնելն ու խոզակաղնի կերն եր, բացի դրանից՝ անտառը մատակարարում եր շինավայր և վառելավայր, տերևախշտեք, հատապտուղներ ու սունկեր, յեթե ճահճուտներ վայրին՝ սորֆ: Արոտատեղերի, վայրի ոգտագործման վերաբերյալ վորոշումները և այլն կազմում են ամենազանազան դարերից մնացած մարկային կանոնադրությունների (Markweistümer) գլխավոր բովանդակությունը, վորոնք զրի յեն առնված այն ժամանակ, յերբ չզրկված ավանդական իրավունքն սկսել եր վիճելի դառնալ: Դեռ այժմ ել գոյություն ունեցող համայնական անտառներն այս հին չբաժանված մարկերի խղճուկ մնացորդներն են: Մի այլ մնացորդ ե, գոնե Արևմտյան և Հարավային Գերմանիայում, ժողովրդական գիտակցության մեջ խո-

բապեա տրամադեցած այն պատկերացումը, թե անտուր համայնական սեփականութիւնն է, վորտեղ յուրաքանչյուր վոր կարող է ծաղիկներ, հատապտուղներ, սունկեր, փեկոնապտուղ և այլն հաժաքել և առհասարակ այնպես վարվել, ինչպես սիրտն ուզում է, քանի նա փաստ չի հասցնում: Բայց այստեղ էլ իրամարիլը հնարը գտնում է և իր հոչակավոր որենադրութեամբ հատապտուղ հաժաքելու մասին արեւմտյան նահանգներն էլ վեր և ածում հին-պրուսական յունկերներին հատուկ յիշանակին:

Ինչպես վոր համայնակիցները հաժաար հողարածիւններ ու ոգտագործման հաժաար իրավունքներ ունեյին, այնպես էլ նրանք սկզբնապես հաժաար բաժին ունեյին նաև որենադրութեան, կառավարման և դատավարութեան մեջ մարկի ներսում: Վորոշված ժամկետներում է, յեթե պետք էր, նաև ավելի հաճախ, նրանք հաժաարում էին բաց յերկնքի տակ՝ մարկի գործերի մասին վորոշումներ կայացնելու և մարկում տեղի ունեցած հանցագործութիւնների ու վեճերի մասին դատ անելու համար: Թեև միայն փոքր մասշտաբով, բայց այս նախնադարյան դերմանական ժողովրդական համաժողովն էր, վորն սկզբնապես նույնպես միայն մի սեծ մարկային ժողով էր: Որենքներ էյին դրվում, թեև միայն հազվագեպ անհրաժեշտ դեպքերում. պաշտոնյաներ էյին ընտրվում, վորոնց պաշտոնավարութիւնը վերահսկողութեան էր յենթարկվում, բայց գլխավորապես դատաստան էր արվում: Նախագահը պետք է միայն հարցերը ձևակերպեր, վճիռը հանում էր ներկա գտնվող համայնակիցների ամբողջութիւնը:

Նախնադարյան շրջանում մարկային կազմակերպութիւնը դերմանական այն ցեղերի գրեթե միակ կազմակերպութիւնն էր, վորոնք թագավորներ չունեյին: Էին ցեղական ազնվականութիւնը, վոր կործանվեց ազգերի զաղթականութեան ժամանակ կամ շուտով նրանից հետո, հեշտութեամբ հարմարվեց մարկին, ինչպես այն ամենը, ինչ վոր բնականորեն ծագում էր այդ կազմակերպութեան հետ մեկտեղ. այդպես նաև կելտական կլանային ազնվականութիւնը դեռ 17-րդ դարում մտավ իրլանդական հողային համայնքի մեջ: Յեւ այդ կազմակերպութիւնն այնպիսի խոր արմատներ գցեց գերմանացիների ամբողջ կյանքի մեջ, վոր՝ մենք ամեն քայլափոխում վերստին գտնում ենք նրա հետքերը մեր ժողովրդի զարգացման պատմութեան մեջ: Նախնադարյան շրջանում ամբողջ հրապարակային իշխանութիւնը խաղաղ ժամանակներում բացառապես դատաստանական իշխանութիւնն էր և գտնվում էր ժողովրդական համաժողովի ձեռքում և ահա հարյուրյակի, ըստ գավառի (gau), ամբողջ ցեղի: Բայց ժողովրդական դատարանը միայն մարկի ժողովրդական դատարանն էր, վոր գործադրվում էր այն դեպքերի համար, վորոնք լոկ մարկային գործեր չէին, այլ ընկնում էին հրապարակային իշխանութեան իրավասութեան սահմանները:

Մինչև անգամ այն ժամանակ, յերբ գաղառական կազմակերպութեան (Gauverfassung) զարգացմամբ պետական գաղառական դատարանները բաժանվեցին մարկերի սովորական դատարաններից, յերկուսի մեջ ել գատական իշխանութունը ժողովրդի ձեռքում մնաց: Այն ժամանակ միայն, յերբ հին ժողովրդական ազատութունն արդեն ուժեղացաւ, անկման վիճակ եր ապրում ե դատաստանական պարտականութիւնների, ինչպես ե ռազմական պարտականութիւնների կատարումը ճշդող բնւ եր զարձել աղքատացած ազատների համար, այդ ժամանակ միայն Կարլոս Մեծը կարողացավ յերկրամասերի մեծամասնութեան մեջ ժողովրդական դատարանը գաղառական դատարաններում փոխարինել շեոֆենների (յերդվայների) դատարանով*): Բայց այս բանն ամենին չեր դիպչում մարկային դատարաններին: Ընդհակառակը, սրանք հենց իրենք որինակ մնացին միջնադարի ավատական դատարանների համար. այս վերջիններում ել ավատատերը միայն հարցերը դնողն եր, իսկ վճիռ հանողներն ավատառուներն իրենք եյին: Գյուղական կազմակերպութիւնը միայն մի ինքնուրույն դյուզական մարկի մարկային կազմակերպութիւն եր ե քաղաքային կազմակերպութիւն եր գտնում, հենց վար գյուղը քաղաքի յեր վերածվում, այսինքն՝ ամրացվում եր խրամներով ու պարիսպներով: Այս սկզբնական քաղաքային մարկային կազմակերպութիւնից են առաջացել հետագա բոլոր քաղաքային կազմակերպութիւնները: Յեւ վերջապես՝ մարկային կազմակերպութեան որինակով են հորինված միջնադարի անթիվ ազատ ընկերութիւնների կանոնադրութիւնները, ընկերութիւնների, վորոնք ընդհանուր հողատիրութեան վրա չեն հիմնված, հատկապես ազատ համքարութիւնների կանոնադրութիւնները: Համքարութեանը տրամադրված վորոշ արհեստով բացառապես զբաղվելու իրավունքը նկատի յե առնվում միանգամայն իբրեւ մի ընդհանուր մարկ: Ծիշտ նույն խանդավարութեամբ, ինչպես այնտեղ, հաճախ բոլորովին միեւնոյն միջոցներով, համքարութիւնների մեջ ել հոգ ե տարվում այն մասին, վորպեսզի իր յուրաքանչյուր անդամակցի բաժինը ընդհանուրին պատկանող հասույթի աղբյուրից բոլորովին հավասար կամ գոնե ըստ կարելւոյն հավասար լինի:

Հարմարվելու այդ միեւնոյն գրեթե զարմանալի ընդունակութիւնը, վոր մարկային կազմակերպութիւնը ծավալում ե այստեղ հասարակական կյանքի ամենատարբեր բնադավառներում ե ամենաբազմազան պահանջների հանդեպ, նա հանդես ե բերում նաեւ հողազործութեան զարգացման հետագա ընթացքում ե նոր առաջացող խոշոր հողատիր-

*) Զգուշ ե ըփոխել բնութարան-իստորիայայն ընտելների դատարանների հետ, վորտեղ ընտելներն ու իրավաբանները միասին են վճիռ հանում: Շեոֆենների հին դատարանում իրավաբաններ բոլորովին չկային, նախագահը կամ գատավորն ամենին ձայն չունեւ ե ընտելները ինքնուրույնաբար եյին վճիռ հանում:

ըության դեմ կաշկիւտ: Մարկին տուջ էր յեկել գերմանացիներէ բնա-
կություն հաստատելուց հետո Գերմանիայում, ուրեմն մի այնպիսի
ժամանակ, յնրբ սննդի պիտանոր աղբյուրն անասնաբուծությունն էր,
իսկ Ասիայից հեաները բերած, կիսով չափ մոտացված հողագործու-
թյունը նոր-նոր սկսում էր կրկին մեշտեղ դար: Նա կարողացավ ի-
րեն պահել ամբողջ միջնադարի ընթացքում, ծանր, անընդհատ կոխով
մղելով հողատեր ազնվականության դեմ: Բայց նա դուռն աշխարհ
անհրաժեշտ էր, վոր ամենուրեք, ուր ազնվականությունը յուրացրել
էր գյուղացիական հողերը, այնուամենայնիվ հղատակ գյուղերի կազ-
մակերպությունը մարկային կազմակերպությունն էր մնում, թեև հո-
ղատերերի միջամտություններով խիստ կրճատված: Դրա մի սրինակը
մենք կհիշատակենք ստորև: Մարկը հարմարվում էր մշակված հողերի
ամենափոփոխական սեփականատիրական հարաբերություններին, քանի
դեռ մնում էր ընդհանուր մարկը, նմանապես և նա հարմարվում էր
ամենաբարձրագույն սեփականատիրական իրավունքներին ընդհանուր
մարկի վերաբերմամբ, հենց վոր վերջինս զաղարկց ազատ լինելուց:
Նա կործանվեց ամբողջ գյուղացիական թեև բաժանված և թեև չբաժան-
ված հողի հափշտակության շնորհիվ ազնվականության և հոգևորա-
կանության ձեռքով, յիւրիւր տերերի բարեհաճ ոժանգակությամբ: Բայց
նա տնտեսապես հնացած, այլևս իբրև յերկրագործության արտադրած և
անկենսունակ դարձավ իրապես այն ժամանակ միայն, յիւր գյուղա-
տնտեսության հսկայական առաջադիմությունները վերջին հարյուր
տարվա ընթացքում հողագործությունը գիտություն դարձրին և ար-
տադրության միջանգամայն նոր յեղանակներ մտցրին:

Մարկային կազմակերպության խաբխուրմն սկսվեց արդեն ազգե-
րի գաղթականությունից քիչ հետո: Ֆրանկների թագավորներն,
իբրև ժողովրդի ներկայացուցիչներ, սեփականացրին ժողովրդի ամ-
բողջությանը պատկանող հսկայական յերկրամասեր, հատկապես ան-
տառներ, վորտեսպի այդ բոլորը վաճենն իբրև նվերներ տալով իրենց
պալատականներին, իրենց զորապետներին, յեպիսկոպոսներին ու վա-
նահայրերին: Դրանով նրանք հիմք են դնում ազնվականության ու
յեկեղեցու հետագայի խոշոր հողատիրության: Յեկեղեցին արդեն կար-
լոս: Մեծից շատ առաջ պիտում էր Ֆրանսիայի բոլոր հողերի մի յեր-
բորդին. անկասկած է, վոր այս նույն հարաբերությունը գոյություն
ունէր միջնադարի ընթացքում համարյա ամբողջ կաթոլիկական Արև-
մայան Յեվրոպայում:

Անընդհատ ներքին ու արտաքին պատերազմները, վորոնց մշտա-
կան հետեւնքը հողերի բռնագրավումն էր լինում, կործանում էին
մեծ բազմությամբ գյուղացիներէ, այնպես վոր արդեն Մերովինգների
ժամանակ բազմաթիւ աղատ մարդիկ կային, վորոնք հող չունէին:
Կարլոս Մեծի վերջ չունեցող պատերազմները կոտորեցին ազատ գյու-

դաշխական դատի գլխավոր ուժը։ Յուրաքանչյուր ազատ հողատեր սկզբնապես պարտավոր էր ծառայել և սրևք և վնչ միայն ինքն իրեն գիներ ու հանդերձեր, այլ նաև վեց ամիս շարունակ պատերազմական ծառայութեան ժամանակ իրեն կերակրելու։ Վնչինչ դարձանալի բան չկա, զոր կարլոս Մեծի ժամանակ արդեն հազիվ էր կարելի լինում հինգ մարդուց մեկին իսկապես ներկայացնել ծառայութեան։ Նրա հաջորդների ամբողջ տնտեսավարութեան ժամանակ գյուղացիական ազատութեանն ավելի արագութեամբ գործեց զեղի անկում։ Մի կողմից՝ նորմանների արշավանքների տառապանքները, թաղավորների հավիտենական պատերազմներն ու մեծամեծների թշնամութեանն ասիւլում ելին մի ազատ գյուղացում մյուսի հետևից հովանավոր փնտռելու։ Մյուս կողմից՝ այս պրոցեսն արագացնում էր միևնույն մեծամեծների ու յեկեղեցու ընչաքաղցութեանը, խորամանկութեամբ, խոստումներով, սպառնալիքներով, բռնութեամբ նրանք էլ ավելի շատ գյուղացիներ ու գյուղացիական հողեր ելին առնում իրենց իշխանութեան ներքո։ Թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում գյուղացիական հողը վեր էր ածվում տիրական հողի և առաւովն ողորդութեան համար հետ էր արվում գյուղացուն՝ բահրա և կոռ վճարելու պայմանով։ Իսկ գյուղացին ազատ հողատիրոջից բահրա վճարող և կոռային աշխատանք կատարող գյուղացու կամ մինչև անգամ ճորտի յեր վերածվում։ Արևմտյան Ֆրանկների պետութեան մեջ, տոհմատրակ Հսկնոսից արևմուտք, այս բանն ընդհանուր կանոն էր։ Հսկնոսից արևելք, ընդհակառակն, մնացել էին մեծ թվով ազատ գյուղացիներ, մեծ մասամբ ցրիվ յեկած, քիչ զեպքներում—ամբողջ ազատ գյուղերի մեջ միացած։ Սակայն այստեղ էլ 10-ից մինչև 12-րդ դարերում ազնվականութեան ու յեկեղեցու ամենազորութեանը հետզհետե ավելի ու ավելի շատ գյուղացիների յեր ճնշում և ճորտական վրձակի հասցնում։

Յեթե վորեւ կալվածատեր—հոգեորական թե աշխարհիկ—ձեռք էր բերում գյուղացիական մի հողամասը, նա դրա հետ միասին ձեռք էր բերում նաև այդ կալվածքին վերաբերող իրավունքները մարկում։ Այդպիսով՝ նոր հողատերերը մարկի անդամակիցներ էլին դառնում, մարկի մեջ սկզբնապես միայն իրավահավասար՝ մյուս ազատ և կախյալ անդամներին, մինչև անգամ իրենց սեփական ճորտերին։ Բայց շուտով, հակառակ գյուղացիների համառ դիմադրութեան, շատ վայրերում նրանք արտոնութեանն ձեռք բերին մարկի մեջ և մինչև անգամ կարողացան այս վերջինս հաճախ յենթարկել իրենց տիրապետութեանը։ Յեվ այնուամենայնիվ հին մարկային համայնքը շարունակում էր իր գոյութեանը, թեև տիրական գերագույն խնամակալութեան ներքո։

Թե այն ժամանակ մարկային կազմակերպութեանը զեռ վորքան անհրաժեշտ հարկավոր էր հողագործութեան, մինչև անգամ խոշոր հո-

դատրության համար, ամենահամոզիչ յեղանակով ապացուցում և
Բրանդենբուրգի և Շլեզիայի կոյունիզացիան ֆրեյզական, նիդերլանդա-
կան, սաքսոնական և հռենոսյան ֆրանկներէ պաղթականներէ միջոցով
Այդ մարդիկ, 12-րդ դարից սկսած, գյուղերով բնակվեցին տիրական
հողի վրա և այն ել գերմանական իրավունքի հիման վրա, այսինքն՝
հին մարկային իրավունքի համաձայն, վորջափով այն պահպանված եր-
տիրական կալվածքներում։ Նրանցից յաւաքանչյուրն ստացավ տուն
ու բակ, բոլորի համար հովասար մեծությամբ և հին ձևով վիճակով
հանված հողաբաժին գյուղի գաշտում, ինչպես նաև անտառն ու արո-
տավայրն ոգտագործելու իրավունք, մեծ մասամբ տիրոջը պատկանող
անտառում, ավելի հազվադեպ՝ ասանձին մարկում։ Այս բոլորը ժա-
ռանգական եր. հողի սեփականությունը մնում եր կալվածատիրոջը,
վորին կոյունիստները պարտավոր եյին վորոշ բահրա և ծառայություն
մատուցանել ժառանգաբար։ Սակայն այս պարհակներն այնքան չա-
փալոր եյին, վոր գյուղացիներն այստեղ ավելի լավ դրության մեջ
եյին, քան թե վորեւե այլ տեղ Գերմանիայում։ Այդ պատճառով ել
նրանք հանգիստ մնացին, յերբ բռնկվեց գյուղացիական պատերազմը։
Իրենց սեփական դործի այդ ուրացության համար ել հենց նրանք
դաժան կերպով պատժվեցին։

Առհասարակ 13-րդ դարի շուրջ կեսին մի վճռական շրջագործ
տեղի ունեցավ հոգուտ գյուղացիներէ. այդ բանը նախապատրաստե-
ցին խաչակրաց արշավանքները։ Արշավանքի մեկնող կալվածատերե-
րից շատերը վորոշակի կերպով ազատ եյին արձակում իրենց գյուղա-
ցիներին։ Մյուսները մնոնում, վոչնչանում եյին արշավանքներում,
հարյուրավոր աղնվական տոհմեր անհետանում եյին, վորոնց գյուղացի-
ները նմանապես հաճախ ազատություն եյին ձեռք բերում։ Այժմ բանն
այնտեղ հասավ, վոր կալվածատերերի աճող պահանջներին զուգընթաց՝
շատ ավելի կարեւոր եր դառնում գյուղացիների մատուցած ծառայություն-
ների, քան թե նրանց անձերի վերաբերմամբ տնտրինելու իրավունքը։
Վաղ միջնադարի ճորտությունը, վոր իր մեջ դեռ շատ բան ունեւ հին
ստրկությունից, տերերին այնպիսի իրավունքներ եր տալիս, վո-
րոնք հետզհետե կորցրել եյին իրենց արժեքը. ճորտությունը հետզհե-
տե թուլացավ, մարեց և ճորտերի դրությունը մոտեցավ լոկ հպատակ
գյուղացիների դրությանը։ Վերովհետե հողի մշակությունը բոլորովին
նախկինը մնաց, ապա ուրեմն կալվածատիրոջ յեկամուտների ավելա-
ցում կարելի յեր ձեռք բերել միայն նոր հողեր՝ վարելով, նոր գյուղեր
հիմնելով։ Իսկ այս բանին հնարավոր եր հասնել միայն կամավոր հա-
մաձայնության գալով կոյունիստների հետ՝ անկախ այն հանգաման-
քից, թե նրանք կալվածքի հպատակներից են, թե ոտար են։ Այդ
պատճառով ել մենք այս ժամանակաշրջանում ամենուրեք հանդիպում
ենք գյուղացիների պարհակների հաստատուն վորոշման, վորոնք մեծ

մասամբ չափավոր են, ինչպես և լավ վերաբերմունք ենք տան ում
 դեպի գյուղացիները, հատկապես հողերաւանութիւնը պատկանող կալ-
 վածքներում: Յեւ վերջապես, նոր ասպարեզ քաշված կոլոնիստներէդ
 նպաստավոր դրութիւնն իր հերթին վերստին անդրադառնում եր
 նրանց հարեան հպատակ գյուղացիներին դրութեան վրա, այնպես վոր
 սրանք եւ ամբողջ Հյուսիսային Գերմանիայում, շարունակելով կատա-
 ել իրենց պարահինները կալվածատիրոջ ոգոտին, ձեռք բերին իրենց
 տննական ազատութիւնը: Միայն սլավոնական և լիտվա-պրուսական
 գյուղացիներն անազատ մնացին: Բայց այս ամենը պետք է կարճ տևեր:
 14-րդ և 15-րդ դարերում քաղաքներն արագութեամբ զարգացան
 և հաւատացան: Նրանց գեղարվեստական արդյունաբերութիւնն ու
 շտապութիւնն առանձնապես ծաղկում եր Հարավային Գերմանիայում
 և Հոլանտի տիերին: Քաղաքային պատրիկներին փարթամ կյանքը կըտ-
 րել էր կոշտ սնունդ ունեցող, կոշտ զգեստ հագնող, անճոռնի կահ-կա-
 քասի ունեցող տեղական կալվածատերերի հանդիստ քունը: Բայց վճի-
 տեղից ձեռք բերել այդ գեղեցիկ իրերը: Հողկահարութիւնն ավելի ու
 ավելի վատնաւոր ու ապարդշուն եր դառնում: Բայց գնելու համար
 փող եր հարկավոր: Իսկ այս կարող եր միայն գյուղացին հասցնել:
 Այստեղից առաջացավ նոր ճնշում գյուղացիների վերաբերմամբ, բահ-
 րայի և կոռի ավելացում, շարունակ անող յեռանդ՝ ազատ գյուղացի-
 ներին կախյալ, կախյալներին՝ ճորտութեան վիճակի իջեցնելու և ընդ-
 հանուր մարկին պատկանող հողերը կալվածատիրական հողերի վերա-
 ծելու: Այս գործում յիւրկրի տերերին ու ազնւականներին ողնեցին
 հռոմեական իրավարանները, վորոնք հռոմեական որենքները գեր-
 մանական, մեծ մասամբ չհասկացած հարաբերութիւնների վերաբեր-
 մամբ գործադրելով՝ կարողացան անսահման խառնաշփոթութիւն ա-
 ռաջ բերել, բայց այնպիսի խառնաշփոթութիւն, վոր տերը դրանից
 միշտ ոգտւում եր, իսկ գյուղացին միշտ մնասւում: Հոգեւոր տերերն
 ավելի պարզ վարվեցին, նրանք վաւերագրեր կեղծեցին, վորոնց մեջ
 գյուղացիներին իրավունքները կրճատւում եյին և նրանց պարտակա-
 նութիւններն ավելացվում: Յերկրի տերերի, ազնւականութեան ու հո-
 գեւորականների այս ավազակութիւնների դեմ 15-րդ դարի վերջից
 ըմբոստանալ սկսեցին գյուղացիները հաճախակի բաժան-բաժան
 ապստամբութիւններով, մինչև վոր 1525 թ. գյուղացիական մեծ պա-
 տերազմը հեղեղեց Շվաբիան, Բավարիան, Ֆրանկոնիան մինչև Նիդա,
 Պֆալցը, Հոլանտիան մարզը և Թյուրինգիան: Կատաղի կռիւլներէց հետո
 գյուղացիները պարտութիւն կրեցին: Այդ ժամանակվանից և սկիզբն
 առնում ճորտութեան վերսկսվող ընդհանուր գերակշռութիւնը գերմա-
 նական գյուղացիներին մեջ: Այն վայրերում, վորտեղ մոլեղնել եր կռիվը,
 գյուղացիներին բոլոր դեռ մնացած իրավունքներն անամոթաբար վորտքի
 տակ տրվեցին, նրանց համայնական հողը կալվածատիրական հողը:

փոխարկվեց, իսկ իրենք ճորտ դարձան: Իսկ իբրև շնորհակալություն այն բանի համար, վոր ավելի լավ դրուժյան մեջ գտնված հյուսիսային գերմանական գյուղացիները հանդիստ ելին մնացել, նրանք ել նույն ճանձան յենթարկվեցին, միայն ավելի գանդաղ կերպով: Գերմանական գյուղացիների ճորտությունը հաստատվեց Արևելյան Պրուսիայում, Պոմերանիայում, Բրանդենբուրգում, Շլեզիայում 16-րդ դարի կեսից, իսկ Շլեզվիգ-Հոլշտայնում՝ 16-րդ դարի վերջից և հետդեհտե ավելի յեր փաթաթվում գյուղացիների վրին:

Այս նոր բռնությունը, բացի այդ ամենից, մի անտեսական հիմք ել ուներ: Ռեֆորմացիայի դարաշրջանի կոիմներից միայն գերմանական իշխաններն ելին ավելի ուժեղացած իշխանություն ձևոք բերել: Աղնվականության ազնիվ ավադակային տրեստի վերջը յեկել եր արդեն: Յեթե նա չեր ուզում կործանվել, ապա պետք է իր կալվածներից ավելի շատ յեկամուտ դուրս կորդեր: Բայց դրա միակ ճանապարհն այն եր, վոր ավելի մեծ տիրակալների և հատկապես վանքերի որինտկով, նա իր կալվածքի գոնե մի մասն իր ռիսկով անտեսավարեր: Ենչ վոր մինչև այժմ բացառություն եր, այժմ անհրաժեշտություն դարձավ: Բայց արտադրության այս նոր յեղանակին խոչընդոտ եր հանդիսանում այն հանգամանքը, վոր հողը համարյա ամենուրեք տրված եր բահրատու գյուղացիներին: Ակատ կամ հպատակ բահրատու գյուղացիներին լիակատար ճորտ դարձնելով՝ վողորմած տերը գործողությունների ազատություն ձևոք բերեց: Գյուղացիների մի մասը, ինչպես ասում ե տեխնիկական արտահայտությունը, «զցվեց», այսինքն՝ կամ վտարվեց կամ իջեցվեց միայն խրճիթ ու մի փոքրիկ պարտեզ ունեցող հողագործի գյուղացու աստիճանի, իսկ նրա հողերը միաձուլվեցին ու մի խոշոր տիրակալական կալվածք կազմեցին, վոր մշակում ելին կոռային աշխատանքով այդ նոր հողագործի գյուղացիներն ու դեռևս իրենց տեղերում մնացած մյուս գյուղացիները: Դրանով վոչ միայն բազմաթիվ գյուղացիներ դուրս ելին մղվում իրենց տեղերից, այլև մնացածների կոռային աշխատանքն զգալի չափով, և այն ել շարունակ ավելի ու ավելի, մեծանում եր: Կապիտալիստական դարաշրջանն իր դալուստը գյուղում հռչակեց իբրև գյուղատնտեսական խոշոր արտադրության դարաշրջան ճորտ գյուղացիների կոռային աշխատանքի հիմունքով:

Սակայն այս փոխակերպությունն սկզբում դեռ բավական դանդաղ եր կատարվում: Բայց ահա սկսվեց յերեննամյա պատերազմը: Մարդկային ամբողջ մի սերնդի կյանքի ընթացքում Գերմանիան ամեն կողմից վոտնատակ եր տրվում ամենասանձարձակ սալդաթներին կողմից, վորպիսիք յերբիցե տեսել ե պատմությունը: Ամենուրեք տուգանքներ ելին դրվում, կողոպտում ելին, հրդեհում, բռնություն գործ դնում, սպանում: Գյուղացին ամենից ավելի տառապում եր այն-

տեղ, վերտեղ խոշոր գորարանականներն հանապարհից դուրս, ավելի փոքրը կամավորական խմբերը, կամ ավելի ճիշտ՝ հուզկահարները, իրենց սեփական սխիզով ու սեփական հաշվին իրենց գործն ելին տեսնում։ Այնպիսի թշուառն ու ամալացումն անսահման եր։ Յերբ խաղաղություն տիրեց, Գերմանիան դեռին եր փռված անոգնական, վտտելի տակ տրորված, պատառ-պատառ յեղած, արյունաքամ։ Բայց ամենավերջինս իրենակի մեջ եր դարձյալ գյուղացին։

Հողատեր ազնվականությունն այժմ միակ տերն եր գյուղում։ Իշխանները, վորոնք հենց այն ժամանակ վոչնչացրին ազնվականության քաղաքական իրավունքները դասերի ժողովներում, դրա փոխարեն նրան գործողության ազատություն տվին գյուղացիների դեմ։ Սակայն գյուղացիների գրեթե գրեթե վերջին ուժերը խորատկված ելին պատերազմի շնորհիվ։ Այդ պատճառով ել ազնվականությունը կարող եր բոլոր հողային հարաբերություններն այնպես կարգավորել, ինչպես վոր ամենից ավելի հարմար եր իր կործանված Ֆինանսները վերականգնելու համար։ Վե՛ր միայն լքված գյուղացիական անտեսություններն ելին տեսնց այլևայլության տիրական կալվածքներին կցվում, այլև այժմ միայն մեծ չափով ու սխտեմատիկ կերպով սկսվեց գյուղացիների հողադրելում։ Վերջին ավելի խոշոր եր տիրական կալվածքը, այնքան ավելի մեծ ելին, իհարկե, գյուղացիների կողային պահակները։ Վերադին հասել եր «անչափ ծառայություններն» ժամանակը։ Վորումած տերը կարող եր գյուղացուն, նրա ընտանիքը, նրա անասուններին աշխատանքի ուղարկել, յերբ ե վորքան ժամանակով ել ուղենարը շորտությունն այժմ ընդհանրական դարձավ։ ազատ գյուղացին այժմ նույնքան հաղվաղեպ եր պատահում, վորքան սպիտակ ազոավը։ Յե՛վ վորպեսզի վորումած տերն ի վիճակի լինի գյուղացիներին ամեն մի, նույնիսկ ամենաչնչին գրեթե գրեթե իր սաղմի մեջ խեղդելու, նա յերկրի իշխանից ստացավ հայրենական դատավարության իրավունքը (Patrimonialgerichtsbarkeit), այսինքն՝ նա միակ դատավորը նշանակվեց գյուղացիների բոլոր մանր հանցանքների ու վեճերի վերաբերմամբ, նույնիսկ այն դեպքում, յերբ գյուղացին հենց նրա, այն ե՛ տիրոջ հետ եր վեճի մեջ, ուրիշ խոսքով՝ կալվածատերը դատավոր եր իր սեփական գործի մեջ։ Այդ ժամանակվանից իվեր գյուղում իշխում ելին գավազանն ու մարակը։ Ինչպես ամբողջ Գերմանիան, այնպես ել գերմանական գյուղացին հասել եր իր ստորացման ամենաստորին աստիճանին։ Ինչպես ամբողջ Գերմանիան, այնպես ել գյուղացին այնպես եր ուժատվել, վոր ամեն մի ինքնողնություն անհույս ընն եր ե փրկությունը միայն դրսից կարող եր զալ։

Յե՛վ փրկությունը յեկավ։ Ֆրանսական հեղափոխությամբ Գերմանիայի ե գերմանական գյուղացու համար ել մի լավագույն ժամանակի արշալույս բացվեց։ Հաղվել ելին հեղափոխական բանակները։

նվաճել Հոննոսի ձախ ափը, վոր, կարծես մոզական դավադանի մի հարվածով, տնհետացավ այնտեղից վողորմած տերոջ հետ միասին նաև նրան տրվելիք կոռւթրական ծառայության, բահրայի, բոլոր տեսակի տուրքերի ամբողջ հնոտին: Հոննոսի ձախ ափի գյուղացին այժմ իր հողամասի տերն էր և բացի դրանից ձեռք բերեց հեղափոխության շրջանում ստեղծված, Նապոլեոնի կողմից միայն խաթարված Code civil-ի մեջ մի որոնսգիրք, վոր հարմարեցրած էր նրա նոր դրությանը և վորը՝ նա վոչ միայն կարող էր հասկանալ, այլև հեղափոխամբ գրւպանում կրել:

Բայց Հոննոսի աջ ափի գյուղացին դեռ յերկար պետք է սպասեր: Թեև Պրուսիայում, Յենայի միանգամայն արժանավոր կերպով կրած պարտությունից հետո, ազնւականության միջանի ամենադադրելի իրավունքները վերացվեցին և որենքով հնարավորություն ստեղծվեց այսպիս ասած ազատվելու գյուղացիական մյուս պարհակներից, բայց այս բանը մեծ մասամբ և յերկար ժամանակ գոյություն ուներ միայն թղթի վրա: Գերմանիայի մյուս պետությունների մեջ դրանից էլ քիչ բան էր կատարվում: Կարիք յեղավ 1830 թ. Ֆրանսական յերկրորդ հեղափոխության, վորպեսզի Բադենում և միջանի այլ, Ֆրանսիային առնմանակից, մանր պետությունների մեջ ազատագրության գործը կարելի լինի առաջ շարժել: Յեւ յերբ Ֆրանսական յերրորդ հեղափոխությունը 1848 թվին վերջապես Գերմանիային էլ իր հետեից տարավ, այդ ժամանակ ազատագրումը Պրուսիայում դեռ ամենևին վերջացած չէր, իսկ Բավարիայում դեռ բոլորովին սկսված էլ չէր: Այժմ գործն, իհարկե, ավելի արագությամբ առաջ պնաց, այս անգամ արդեն ըմբոստացած գյուղացիների կոռւթրական աշխատանքն այլևս ամեն արժեք կորցրել էր:

Իսկ Թինչ էր այս ազատագրման եյությունը: Ստանալով գյուղացուց վորոշ գումար փող կամ մի հողամաս՝ վողորված կալվածատերը դրա փոխարեն պետք է այսուհետև մնացած հողը ճանաչեր իրրև գյուղացու ազատ սեփականությունը, վորի վրա վոչ մի տուրք չի ծանրանում. և այս այնտեղ, վորտեղ առաջ վողորմած կալվածատիրոջը պատկանող բոլոր հողերն ուրիշ բան չէին, բայց յեթև գողացված գյուղացիական հողեր: Այս դեռ բավական չէ: Սահմանադծելու ժամանակ՝ այդ գործը կատարելու համար նշանակված պաշտոնյաները համարյա միշտ անցնում էին վողորմած կալվածատիրոջ կողմը, վորի մոտ ապրում և վորի հետ քեֆ էին անում, այնպես վոր գյուղացիները, նույնիսկ որենքի բառացի իմաստի հակառակ, հակայական զրկողություններէ քյին յենթարկվում:

Այդպիսով ահա մենք յերեք Ֆրանսական և մի գերմանական հեղափոխության շնորհիվ այնտեղ ե՛ք հասել, վոր մենք կրկին ազատ գյուղացիներ ունենք: Բայց վորքան հետ է մնացել մեր այժմյան ազատ

գյուղացիին հին ժամանակների մարկի ազատ անդամի հանդեպ: Նրա հոգն ու տնտեսութունը մեծ մասամբ շատ ավելի փոքր է, իսկ չրա-
ժանդած մարկը, բացառութեամբ սակավութիւլ, խիստ փոքրացած և
փշտցած համայնական անտառամասերի, վոչնչացած է: Բայց մասն
գյուղացիին առանց մարկի ողտադրածման չի կարող անասուններ պահել,
առանց անասունների պարարտանյութ չկա, առանց պարարտանյութերի
չի կարող ոացիոնալ հողագործութեւն լինել: Հարկահաւաքն ունիւր թի-
կունքից սպառնացող դատական կատարածուն, վորոնց այսորվա գյուղա-
ցիին չափազանց լավ է ճանաչում, մարկի հին անդամակիցներին անծանոթ
մարդիկ էլ յին, ինչպէս նաև հիպոթեքների վաշխառուն, վորի ճանկն են
ընկնում մեկը մյուսի հետևից գյուղացիական հողամասերը: Յեւ ինչ
վոր ամենալալն է. այս նոր ազատ գյուղացիները, վորոնց հողամա-
սերն ու վորոնց թեկերն այնպէս սաստիկ խուզված են, ստեղծված են
Գերմանիայում, վորտեղ ամեն ինչ չափազանց ուշացած է կատարվում,
ստեղծված են այնպիսի ժամանակ, յերբ վնչ միայն գիտական գյու-
ղատնտեսութեւնը, այլև արդեն նորագոյն գյուղատնտեսական մեքե-
նաները մասն արտադրութեւնը դարձրել են արտադրութեւն ավելի
ու ավելի հեացած, այլև անկենսունակ մի յեղանակ: Ինչպէս վոր մե-
քենայական մանարանն ու վոստայանկութեւնը վերացրին ճախ-
բակն ու ձեռքի ջուհակային դազդյահը, այնպէս էլ արտադրութեւն
այս նոր գյուղատնտեսական մեթոդները պետք է անխնա վոչնչացնեն -
գյուղական մանրարածի տնտեսութեւնը և փոխարինեն այն խոշոր հո-
ղատիրութեւնը, յեթե նրանց վիճակի վրա համար անհրաժեշտ ժա-
անակամիջոցը ձեռք բերել:

Վարովհետեւ ամբողջ յեվրոպական հողագործութեւնը, ինչպէս վոր
այն վարվում է այսօր, արդեն սպառնում է մի չափազանց ուժեղ
մրցող հանձին հացահատիկի ամերիկյան մասսայական արտադրու-
թեւն: Հենց ընտելութեւնից արդեն մշակված և յերկար տարիների հա-
մար պարարտացրած այս հողերի դեմ, վոր կարելի չէ աննշան փոքրով
ձեռք բերել, չեն կարող մաքառել վոչ մեք պարտքերի տակ ընկած
մասն գյուղացիները, վոչ էլ մերձանապեւ պարտքերի մեջ խոքը թաղ-
ված խոշոր հողատերերը: Ամբողջ յեվրոպական գյուղատնտեսական
արտադրութեւն յեղանակը խորտակվում է ամերիկյան մրցութեւն ա-
ռաջ: Հողագործութեւնը Յեվրոպայում հնարավոր է միայն այն ժա-
մանակ, յեթե այն հասարակութեւն ուժեւորվ և հասարակութեւն հաշ-
վին վարվի:

Այս են մեք գյուղացիների հեռանկարները: Յեւ ազատ գյուղա-
ցիական դասակարգի վերականգնումը, թեև այն ճողած է, այն լավ
կողմն ունեցավ, վոր այն գյուղացուն այնպիսի դրութեւն մեջ դրեց,
վոր նա կարող է—իր բնական դաշնակիցների, բանվորների ոժանդա-
կութեւնը—ինքն իրեն ոգնել, հենց վոր նա կամենա հասկանալ, թե

ինչպիսի՝ Բայց ի՞նչպիսի։ Մտրկը վերականգնելու միջոցով, բայց վնչ թե նրա հին, իր ժամանակն անցկացրած, այլ յերիտասարդացրած ձևով, համայնական հողատիրությունն այնպես վերանորոգելու միջոցով, վորպեսզի այն ապահովի մանր-գյուղացիական ընկերություններին՝ վնչ միայն խոշոր տնտեսության բոլոր ոգուտներն ու գյուղատնտեսական մեքենաների գործադրությունը, այլև նրանց միջոցներ տրամադրի հողագործության կողքին կազմակերպելու նաև խոշոր արդյունաբերությունը շոգու կամ ջրի ուժի ոգնությամբ. այն էլ՝ վնչ թե կապիտալիստների հաշվին, այլ ամբողջ համայնքի հաշվին։

Խոշոր գյուղատնտեսություն և գյուղատնտեսական մեքենաների գործադրություն—այդ ուրիշ խոսքերով նշանակում և՛ գյուղատնտեսական աշխատանքի ավելցուկ աշխատանքին փոխարկել մանր գյուղացիների մեծամասնությանը, վորոնք այժմ իրենք են մշակում իւրենց հողերը։ Բայց վորպեսզի գյուղատնտեսությունից դուրս մղված այդ մարդիկ առանց գործի չմնան կամ չկուտակվեն քաղաքներում, անհրաժեշտ և նրանց համար արդյունաբերական զրադմունքներ ստեղծել հենց գյուղում։ Իսկ այդպիսի արդյունաբերություն նրանց համար կարող է կազմակերպվել ողուտով, յեթե այն խոշոր մասշտաբով վարվի, շոգու կամ ջրի ուժի ոգնությամբ։

Ինչպես կազմակերպել այս բանը, լավ մտածեցե՛ք այդ մասին, գերմանական գյուղացիներ։ Ձեզ կարող են ոգնել միայն սոցիալ-դեմոկրատները։

*) Շարունակութունը մինչև վերջը՝ չկա մեր ձեռք տակ յեղած գերմաներեն բնագրում Թարգմանում ենք ասիերենից (Библиотека марксиста, вып. II. Союз-изд-во. Москва-Ленинград 1931 г.): Ժամոթ. Թարգմ.

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1[՝] Մնգելտի այս աշխատությունը, զոր հայտնի չե «Անտի-Պյուլերինը» անունով, Մարքսի «Գնադիտարկ» և Մարքսի ու Մնգելտի մյուս կառնադազույն աթաղաթուղիունաների հետ միասին, մարքսիստական թեորիայի ուսումնասիրության հիմնական աղբյուրներից մեկն է համարվում։ «Սոցիալիզմի զարգացումն ուտարիայից դեպի գիտություն» գրքույկի համար Մնգելտը վերցրել է «Անտի-Պյուլերինից» մի գլուխ «Ներածություններ» (առաջինը) և յերկու գլուխ (առաջինն ու յերկրորդը)՝ յերրորդ մասից («Սոցիալիզմ»)։

«Սոցիալիզմի զարգացումն ուտարիայից դեպի գիտություն» գրքույկի IV հրատարակության (1891 թ.) առաջաբանում Մնգելտն ասում է՝ «Ներկա հրատարակությունը յենթարկվել է դանազան անհաճ փոփոխությունների։ Ավելի լուրջ լրացումներ արված են միմյալ յերկու տեղում. առաջին գլխում՝ Սեն-Սիմոնի մասին, վերին յես Հափսդանց քիչ տեղ էլ է հատկացրել Ֆուրյեյի և Ուեմսի համեմատությամբ, և յերրորդ գլխի վերջում՝ արտադրության վերջին ժամանակներս կարող է նշանակություն ձեռք բերած նոր ձևը—տրեստների մասին»։ Այս քրոջուրի բուսաներն թարգմանությունը կատարված և դերմաներեն չորրորդ հրատարակությունները։

2 «Սոցիալ-դեմոկրատ»—դերմանական սոցիալ-դեմոկրատիայի կենտրոնական օրգանը, զոր հրատարակվում էր Եփեյցարիայում, Ճյուրխիսում, 1879 թվից մինչև 1888 թ., վերսկսեց Գերմանիայում սոցիալիստների դեմ հրատարակված ընդհանրական ներդառնության ժամանակաշրջանում (1878—1890 թ. թ.) սոցիալ-դեմոկրատական հրատարակություններն արդելված էլին։

3 Մնգելտի այստեղ թվարկած անունները (Ջեյքսն ու Տրեյչլեն) պատկանում են դերմանական բուրժուական պատմաբաններին, զորոնք այն ժամանակ, յերբ զրվում էր այս առաջաբանը, դեռ ապրում էլին ու անանավոր անուն ունեյին։

4 Դոն-Քիշոտ—Մեքսիկացի (XVI դար)՝ նույն վերնադերը կրող սատիրիկական սոմանի գլխավոր հերոսը Ի դեմս Դոն-Քիշոտի՝ հեղինակը ծագում է միջնադարյան ասպետությունը (ազնվականությունը)։ Սանչո-Պանսան Դոն-Քիշոտի զինակիրն էր։

5 Գերմանական փրիստոփա Կանտը (1724—1804 թ. թ.) 1765 թվին այն հիպոթեզը (գիտական յենթադրություն) առաջադրեց, թե արեդազնային համակարգությունը ծագել է պատվող ընկացած մշակչներից։ Այս հիպոթեզին ավելի դարգացրեց ու հիմնավորեց Ֆրանսական մաթեմատիկ ու աստրոնոմ Հապլաթը (1749—1827 թ. թ.)։

6 Պոստը վերաբերում է Ֆրանսական բուրժուազիայի ներկայացուցիչներին փրիստոփայության ու գիտության մեջ Ֆրանսական մեծ հեղափոխության (այսինքն՝ 1789—1794 թվականների բուրժուական հեղափոխության) նախապարագատման ժամանակաշրջանում։ Ականավորապես ներկայացուցիչներն էլին Վոլտերը, Ռուսսոնը, Կենցիլիդիդիստները Դիդերոյի գլխավորությամբ և ուրիշները։

7 Ժամ-Ժակ Ռուսսո (1712—1778)—բուրժուազիայի հեղափոխական թեի ներկայացուցիչը 1789—1794 թ. թ. Ֆրանսական մեծ հեղափոխության նախապարագատման ժամանակաշրջանում։ Նա ուսուցանում էր, թե հատարակությունն ու պետու-

թյունն սկզբնապես կազմվել են ազատ հասարակական դաշինքի միջոցով ազատ, միմյանցից անկախ մարզկանց միջև, բայց այդ դաշինքով հաստատված հասարակական կարգը հետագայում աղավաղվել և հասարակական անհավասարության ծագմամբ Վերոդհետև մարզիկ իրենց բնությամբ ազատ են ու հավասար, ապա նրանք պետք և միատեսակ քաղաքական իրավունքներ ունենան և ընդհանրապես ամեն բանում որևէ թի առավ հավասար պետք և լինեն։ Ռուսոյի ուսմունքով նրանք կարող են վերականգնել այդ հավասարութունը և պետք և անեն այդ դարձյալ միմյանց միջև կայացրած ազատ հասարակական դաշինքի հիման վրա։

8 Ռեֆորմացիան ու գյուղացիական պատերազմները Գերմանիայում տեղի ունեցան XVI դարի սկզբում։ Ռեֆորմացիայի մասին տես՝ Ֆ. Նիցկլս, «Պատմական մոտերիալիզմի մասին»։

9 Անգլիական մեծ նեղափոխությունը տեղի ունեցավ XVII դարում (1640—1660 թ. թ.). այդ մի բուրժուական հեղափոխություն էր, վոր ուղղված էր բացարձակ միապետության ու ֆեոդալ-կալվածաթերերի (լենդլորդների) տիրապետության դեմ։ Գրոմվելը—բուրժուազիայի առաջ մղած ղեկավարողը—ճնշեց լեվելլերները զարմումը։

10 Բարեֆի կոմունիզմը հենվում էր հավասարության գաղափարի վրա։ Բարեֆին ու նրա կողմնակիցները (բարեֆականները) հույս ունեին կոմունիստական հասարակակարգի հասնել զավազության ու հեղաշրջման միջոցով, վոր պետք է կատարեր զավազիք կոմունիստների մի փոքրիկ խմբակ։ Բարեֆի կոմունիզմի այս առանձնահատկությունների մեջ արտահայտություն դրավ այն դասակարգի տեղադրացած վիճակը, վորը հանդիսանում էր արդի պրոլետարիատի նախադրացած վիճակը։

11 Նիցկլսն այստեղ նկատելի ունի «Իդեալական հասարակարգի նկարագրություն» առանց մասնավոր սեփականության՝ ուսուցիական սոցիալիզմի ներկայացուցիչներ Թոմաս Մորի (XVI դար) ու Կամպանելլայի (XVI—XVII դար) յերկրում։

12 1793—1794 թ. թ. Ֆրանսիայի հեղափոխական կառավարությունը, վորին պըլու կանգնած էին յաղորդները (հեղափոխական մանր բուրժուազիայի ու աջատավոր չքավորության ներկայացուցիչները), ղործադրում էր տեւորի սեփմը իբրև պայքարի միջոց հակահեղափոխության դեմ։

13 Դերկստորիա յի կոչվում այն ֆրանսական կառավարությունը, վոր հաստատեց բուրժուազիական յակոբինյան ղեկավարության 1794 թվականին տապալելուց հետո։ Դերկստորիան գոյություն ունեցավ 1795 թվից մինչև 1799 թ. և իր հերթին տապալվեց Նապոլեոն Բոնապարտի կողմից։ Հենց Նապոլեոնի ժամանակ էլ, վորն սկզբում հայտարարվեց «Կոնսուլը», իսկ հետագայում Ֆրանսիայի կայսր, Ֆրանսիան մղում էր այն նվաճողական պատերազմները, վորոնց մասին խոսում և Նիցկլսը զարուհակության մեջ։

14 Թ. Կարլելը—ֆեոդալական սոցիալիզմի ներկայացուցիչներից մեկն Անգլիայում։ Տես «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»։

15 Նապոլեոն I-ի նվաճողական պատերազմները վերջացան Նապոլեոնի պարտությունը Ֆրանսիայի դեմ կազմվեց համալսա բոլոր յվորդական պետությունների դաշնակցությունը բուրժուական Անգլիայի ու ճորտատերական Ռուսաստանի գլխավորությամբ։ 1814 թվին Պարիզը զբաղվեց դաշնակիցների ղորքերով, իսկ Նապոլեոնն ստիպված յեղավ զահեց հրաժարվել։ 1815 թվին նա փորձ արեց վերականգնելու իր իշխանությունը և նոր պատերազմ մղելու դաշնակիցների դեմ (հարյուր որբեր պատերազմը), բայց նորից պարտություն կրեց Վատերլոյի մոտ և կրկին դաշնակից արմից դաշնակիցների կողմից, իսկ հետո աքսորվեց Ս. Հելենի կղզին, վորտեղ և մահավա։

16 1833 թ. հոկտեմբերին Ռուսներ նախահեղոււմ էր արեղյունեխոնները (անգլիական արհեստակցական միությունների) պատգամավորներ ժողովում, վորտեղ վորոքում ընդունվեց՝ կազմակերպել նրանց ազգային միավորումը։ 1834 թվին ծագած

«Տրեդ-յունիսները մեծ ազդեցին միավորումը՝ ազդուելով շրջանակներում անգլիական արհեստակցական միությունների միավորայլ կազմակերպություն ստեղծելու առաջին հիմքին երբ 1834 թ. վերջին այդ կազմակերպությունը դադարեցրեց իր գոյությունը:

17 Պրոուդմը (1809—1865 թ. թ.), ֆրանսական մանր-բուրժուական ուտոպիստ ու անարխիզմի հիմնադիր, փրկությունը դարգացող կապիտալիզմի բոլոր աղետներից տեսնում էր վնճ թե դեպի սոցիալիզմն առաջ շարժվելու մեջ, վնճ թե պրոլետարիատի դատակարարային պայքարի մեջ՝ սոցիալիստական հասարակակարգի համար, այլ վերագրվի մեջ՝ դեպի մանր անասնատեր-ինքնուրույն արտադրողների հասարակակարգը, վրա հիմնված է մանր մասնավոր սեփականության վրա, առանց վարձու աշխատանքի շահադրժման և նրանց այդ բանին պետք է ծառայի նրա փոխանակային բանկը՝ Պրոուդնի «նախադեպ»՝ այդ բանից պետք է ապահովի մանր «արտադրողներ»՝ արքայապետների փոխանակությունը նրանց վրա դրժադրված աշխատանքի համաձայն («աշխատանքը աշխատանքի փոխարեն») և դրանով իսկ փրկի նրանց ավերումից, ազատությունը նրանց մանր արտադրության ու մանր մասնավոր սեփականության կազմանումից, ինչ վերաբերում է բանվորներին, ապա նրանց ել կապիտալիստական զանազանությունից պետք է փրկի մեկնելու փոխանակային բանկը՝ նրանց նույնպես ինքնուրույն մանր «արտադրողներ» վերածելով:

18 Դեյուս: Բյան դարգացման Ալեքսանդրյան շրջանը վերաբերում է III դարից (մեր թվականության սկզբնավորություններից առաջ) մինչև III դարի (մեր թվականության) մինչև բնիկ մասնակցամիջոցին և այդ անունն ստացել է Յեդիպտոսի Անեջաբողիքի արդարից (նազմանակություն Միջերկրական ծովի ափին), զորն այն ժամանակվա միջադարյան անասնատեր հարաբերությունների խոշորագույն կենտրոններից մեկն էր: Այդ ժամանակաշրջանում նշանակալից դարգացում ձևաց բերին ճշգրիտ ու բնական գիտությունները, ինչպես՝ մաթեմատիկան (Եվկլիդես ու Արքիմեդես), աշխարհագրությունը, աստղաբանությունը, կազմախոսությունը, բնախոսությունը և այլն:

19 «Եդեմ», «արքայապետ իդեմ» — այս անունների ներքո Հեգելի փիլիսոփայության մեջ թաքնված էր առաված: Այդ հասկացողությունները ըզրարկում էին «արարչի համարի մնացորդները»:

20 Լիոնի Լուիսակ-բանվորների 1831 թ. ապստամբությունը Ֆրանսիայում պատասխան էր բանվորական ցույցի դնդականարության՝ աշխատավաճի միջնում սահմանված համար արված դրժադուլի ժամանակ: Ապստամբած բանվորներն ամբողջ քաղաքում բարբիկադներ շինեցին, միջանի որ շարունակ ամբողջ քաղաքն իրենց ձեռքում պահեցին և ջախջախեցին միմիայն Լիոնի բուրժուազիային հառաքարության կողմից ոչնչության ուղարկված կոտորածները զորքերի կողմից:

21 Զարտիստական շարժումն Անգլիայում տեղի ունեցավ անցյալ դարի 30—40-ական թվականներին: Այն բնագրվում էր անգլիական բանվոր դասակարգի վիթխարի մեծամասնությունը և պրոլետարիատի առաջին ինքնուրույն քաղաքական շարժումն էր: Հատկապես հենց այդ էր նրա հակայական պատմական նշանակությունը, ինչպես ցույց էին տալիս Մարքսը, Ենգելսն ու Լենինը: Այդ շարժումն իր անունն («շարտխոտական») ստացավ բանվորներին՝ 1839 թվին պարլամենտին տված խարտիայից (փաստաթղթից), վրա դարգրում էր նրանց հիմնական պահանջները. 1) բնահանրական բնաբան իրավունք. 2) ամեն տարի վերընարկի պարլամենտ. 3) պարլամենտի անգամներին ապրուստ վճարել. 4) գաղտնի քվեարկություն պարլամենտի ընտրությունների ժամանակ. 5) հավասար ընտրական շրջաններ. 6) քույրային ցենզի վերացում պատգամավորների համար: Այս պահանջների համար Անգլիայի բանվոր դասակարգը միջանի տարի շարունակ դրժադուլներ, ցույցեր ու զինված յեղաթյուրներ միջոցով պայքար մղեց:

22 Ենգելսն այստեղ մասնանշում է Մարքսի «հայտնաբեր» 1 հատորը, վերանգ

IV բաժնում (պուլի XI, XII և XIII զարդգրած և արտադրութեան զարգացման պատմութիւնը՝ մանր արհեստից զեպի խոշոր մեքենական արդարւոյնաբերութիւնը: Չարգացման այդ բնթացքն և մասնանշում Մարքսը հակիրճ կերպով XXIV գլխում:

23 Մարկը—այսինքն՝ հողային համայնքը: Տես Ենգելսի «Մարկը» հոդվածը սույն գրքի հավելվածում:

24 Աշխարհագրական մեծ հայտնադրածութիւնները վերաբերում են XV դարի յերկրորդ կեսին ու XVI դարի առաջին կեսին: Նրանցից կարեւորագոյններն են—Ամերիկայի գլուարը 1492 թ. Քրիստափոր Կոլումբոսի կողմից և զեպի Հնդկաստան տանող ծովային ճանապարհի գլուարը 1498 թվին փորթուգալացի Վասկո-դե-Գամայի կողմից:

25 XVII և XVIII դարերի առեւտրական պատերազմները մղվում էին Փարթուգալիայի, Սպանիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի ու Անգլիայի միջև՝ Հնդկաստանի ու Ամերիկայի հետ կառավարող առեւտրին տիրանալու և նրանց վորդուս դադութիւնը շահագործելու համար: Այդ պատերազմներից հաջորդ դուրս յեկավ Անգլիան, վորք ձեռքն բնկավ XVIII դարի վերջին ամբողջ համայնաբնային առեւտուրը:

26 Գարվիկի ուսմանը համաձայն՝ կենդանիների ըտրո տեսակները դարգանում են ընդհանր—1) իրենց նոր հատկութիւններ ձեռք բերելու ունակութեամբ, վորով նրանք իրենց գոյութեան համար մղած կռիւում հարմարվում են ջրապատող պայմաններին, 2) ժառանգականութեամբ, այսինքն՝ նոր ձեռք բերված հատկութիւնները հաջորդ սերունդներին հանձնելով, և 3) գոյութեան համար մղվող կռիւում ամենից ավելի հարմարեցվածները դիմանալուն, այսինքն՝ գոյութեան համար մղվող այդ պայքարի միջոցով կառավարող բնական ընտրանքի ընտրելով: «Գարվիկը չի հասկանում, —ասում և Ենգելսը,—թէ ինչպիսի դասն ստալիւս յեր դրում նա մարդկանց ու առանձնապէս իր հայրենակիցներին մասին, յերբ աղայացուցում էր, թէ ազատ մրցումը, գոյութեան կռիւը—վոր տնտեսագիտները փառաբանում էին իրրեւ պատմական ամենամեծ նվաճում, —կենդանական աշխարհի նորմալ վիճակն է:

27 «Բնավոր դասակարգի դրութիւնն Անգլիայում» գրքում Կառլ Կոպերնիսը լեզվով Մարքսը ու Ենգելսի Բնասիրտուտի հրատարակութեամբ, լույս և տեսել 1928 թվին:

28 Պրոմեթէոս—Հին հունական դրույցի հերոսը, վոր յերկնքից կրակ և զոդացել մարդկանց համար: Առասպելի համաձայն՝ զայրացած աստվածները հրամանով կրակի աստված Հիփեստոսը Պրոմեթէոսին զլիցայեց ժայռին:

29 Ենկերոջներն են կռիւում երկարական մարտկոցի լարերի ծայրերը:

30 Մարքսը «Կապիտալում» Նշել և մրցումն մենաշնորհի փոխադրվելու տենդենցը: Ենգելսը Մարքսը մահից հետո արդեն աւելի ունեցավ դիտելու այդ տենդենցի զարգացումը: Այն ժամանակվանից այդ մենաշնորհը չափազանց զարգացել է, փոխարկվելով արդի կապիտալիզմին—կոպիտալիզմի ամենաբնորոշ գծին:

«Իմպերիալիզմը»—գրում և Լենինը,—աճեց իրրեւ ընդհանրապէս կապիտալիզմի հիմնական հատկութիւնները զարգացում ու ամբիջական զարուսակութիւնը: Ըրայց կապիտալիզմը կապիտալիստական իմպերիալիզմ դարձավ միմիայն իր զարգացման վորդու, շատ բարձր աստիճանի ժամանակ, յերբ կապիտալիզմի մրջանի հիմնական հատկութիւններն սկսեցին իրենց հակադրութեանը վերածվել, յերբ ամբողջ գծով կապիտալիզմն ու յերեւան յեկան անցման դարաշրջանի գծերը կապիտալիզմից զեպի մի ավելի բարձր հասարակական-տնտեսական կառուցվածք: Այդ պրոցեսի մեջ տնտեսական հիմնականը կապիտալիստական ազատ մրցման՝ կապիտալիստական մենաշնորհներով փոխարինվելն է: Ազատ մրցումն ընդհանրապէս կապիտալիզմի ու ապրանքային արտադրութեան հիմնական հատկութիւնն է: մենաշնորհն ազատ մրցման ուղղակի հակադրութիւնն է, ըրայց այդ մրցումը մեր աշխի առաջ սկսեց մենաշնորհի փոխարկվել, ստեղծելով խոշոր արտադրութիւն, գուրս մղելով մանրը, խոշորը փոխարինելով խոշորագույնով, արտադրութեան ու կապիտալի համակենտրոնացումն այնտեղ հասցնելով, վոր նրանից աճեց ու աճում և մենաշնորհը—կարտելները, սինդիկատները, տրեստ-

ներք, միլիարդներ բանեցնող ինչ-ժող մի տասնյակ բանիկերի նրանց հետ միացնող կապիտալը: Յեզ միևնույն ժամանակ մենաշնորհները՝ ծաղկող աղատ մրցումից՝ չեն վերացնում այն, այլ շարունակում են իրենց գոյութիւնը նրա գլխին ու նրա կողքին, գրանով մի շարք առանձնապես սուր ու կտրուկ հակասութեաններ, բաղադրմաներ, կոնֆլիկտներ առաջացնելով: Մենաշնորհը անցումն է կապիտալիզմից գնդի մի ավելի բարձր հասարակակարգ: (Пенин, Соч. т. XIX, стр. 141—142):

31 «Աղատ ժողովրդական պետութեան» մասին տես Մարքս, «Գոթայի ծրագրի» բնագրատութեանը:»

32 Անարխիստները (Պրուդոն, Բակունին, և ուրիշներ) չեն հասկանում պետութեան էությունը և ժխտում են հեղափոխական իրիսանության, պետական իշխանութեան հեղափոխական դերի նշանակութիւնը հաղթանակը տարած պրոլետարիատի ձեռքում: Նրանց պահանջը՝ անմիջապէս վոլնչացնել պետութիւնը՝ կնշանակէր զինաթափ անել հեղափոխութիւնը:


33 Դասակարգների լիկվիդացիան արդեն իրագործվում է մեր յերկրում պրոլետարիատի զինատառքայի կողմից: Տասնյոթներորդ կոնֆերենցիան մեր սոցիալիստական ճիւղաբաժնի յերկրորդ հնգամյա պլանի խնդիրը դրեց այդ լիկվիդացիայի ավարտումն ու անդամակարգ սոցիալիստական հասարակութեան կառուցումը Այդպիսի խնդիրն իրագործելի չի միմիայն ամենազաւթան դասակարգային կռիւի ուղիով և պահանջում է պրոլետարիատի զինատառքայի պետութեան վնշման պահանջումն, այլ և հետագա ամրացումն ու դարգացումը Հատկապէս հենց այդ ամրացման ու բարձրագույն դարգացման միջոցով պրոլետարիատի պետութիւնը կհանդի իր աննացմանը:—«Մենք,—ասում եր ընդ Ստալինը կուսակցութեան XVI համագումարում,—կողմնակից ենք պետութեան աննացման: Յեզ մենք դրա հետ միասին կողմնակից ենք պրոլետարիատի զինատառքայի ուժեղացման, զինատառքայի, վոր մինչև այժմ դուրսիւն ունեցող բոլոր զինական իշխանութիւններից ամենաուժեղ ու ամենահզոր իշխանութիւնն եւ Պետական իշխանութեան բարձրագույն դարգացում պետական իշխանութեան աննացման համար պայմաններ նախապատրաստելու նպատակով—անայս և մարքսիստական ֆորմուլան: Այս «հակառակն եւս Այն, այն, «հակառակն եւս: Բայց այս հակառութիւնը կնշանակուի և, և այն ամբողջովին արտացոլում է Մարքսի գիտելիական» (И. Сталин, Политический отчет на XVI съезде ВКП (б)).






ՅԸՆԿ


	Եջ
Առաջին հրատարակութեան առաջաբանը	3
Զորքորդ հրատարակութեան առաջաբանը	5
Անգլիերեն հրատարակութեան առթիվ	7
Սոցիալիզմի զարգացումը ուսուսիրայից դեպի գիտութիւն	34
Հավելված. — Մարկը	79
Ծանոթագրութիւններ	97



Մրթազրիյ Լ. Արսվան
 Հանձնված է առաջադրում 10 հայեմբեի 1993 թ.
 Ստորագրված է սպազրնու. 24 հայեմբեի 1993 թ.
 Քլավիլիս № 7657 (p). Հրառ. № 49.
 Պատվիր № 69. Տիրած 10.000 297,000 եղ. հո.

Կուսերուի սպարան. Տեղեկվան.





ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003834

94702 1 2.
94252 504.

A $\frac{II}{23312}$



1. 1. 1950
1. 1. 1950
1. 1. 1950

О. БИГЛАЕ
РАЗВИТИЕ СОЦИАЛИЗМА
ОТ УТОПИИ К НАУКЕ
Перевод с 1888 Эривань